ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՀԵՌԱԿԱ ԲԱԺՆԻ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(մասնագիր և առարկայական նկարագրեր)

ԳԱՎԱՌ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ..... 3

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը 5

ՄԱՍ I. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց 22

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 44

1.**Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ**.....**44**

1.1.Պարտադիր դասընթացներ 44

1.2.Կամընտրական դասընթացներ 58

2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ 62

2.1.Պարտադիր դասընթացներ 62

2.2.Կամընտրական դասընթացներ 65

3. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ 68

3.1.Պարտադիր դասընթացներ 68

3.2.Կամընտրական դաընթացներ 115

4.Այլ մոդուլներ 121

5.Դասընթացների քարտեզագրում 124

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսանողներ,

բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը ձեր կարևոր սահմանադրական իրավունքն է, որի արդյունավետ իրականացումը վճռորոշ նշանակություն ունի յուրաքանչյուրիդ համար:

Ձեր կյանքում անգնահատելի դերակատարություն ունի համալսարանը, որտեղ դուք ձեռք եք բերում անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ, բացահայտում ձեր ներուժը, զինվում արժեքային ճիշտ կողմնորոշումներով, կայանում որպես մասնագետ: Ուստի, դուք պետք է գիտակցաբար ստանձնեք ձեր ուսման պատասխանատվությունը և անվարան քայլեք տեսական ու գործնական խորը գիտելիքներ, օգտակար սոցիալական փորձ, հմտություններ կուտակելու ճանապարհով:

Գավառի պետական համալսարանում գործում է երկաստիճան կրթական համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Բակալավրիատում ուսումնական գործընթացը կազմակերպվում է առկա և հեռակա բաժիններում, կրեդիտային չափումներով, կիրառվում են ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու բազմագործոն գնահատման կառուցակարգեր:

2007 թվականից ԳՊՀ-ում ներդրված կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական (ECTS) համակարգի համաձայն՝ ‹‹Պատմություն›› մասնագիտության գծով բակալավրի որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի՝ 240 կրեդիտի կուտակման արդյունքում:

Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների, մանկավարժության զարգացման արդի միտումների, առաջավոր մոտեցումների և Գավառի պետական համալսարանում իրականացվող՝ ‹‹Պատմություն›› մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի պահանջներին համապատասխան: Ուսումնառության տարիներին ուսանողների աշխարհայացքի ընդլայնումն ու ընդհանուր պատրաստվածությունն ապահովվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական, ինչպես նաև մասնագիտական դասընթացների շնորհիվ:

‹‹Պատմություն›› մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում ընդհանուր հումանիտար և մասնագիտական գիտելիքներ, միաժամանակ, խորացնում օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն) իմացությունը, տիրապետում են արդյունավետ հաղորդակցման հմտություններին, կրթության կազմակերպման հիմնական ձևերին, կրթության և դաստիարակության ժամանակակից մեթոդներին ու տեխնոլոգիաներին: Ուսումնառության ընթացքում կարևորվում է կրթության ելքային արդյունքների ձեռքբերումը, այդ նպատակով սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացումը, գործնական, սեմինար պարապմունքների ընթացքում ցուցաբերած ակտիվությունը: Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը, ավարտական աշխատանքների պաշտպանությանը:

Բուհն ավարտելուց հետո «Պատմություն» մասնագիտությամբ բակալավրը կարող է աշխատել հանրակրթական դպրոցներում, գիտահետազոտական ինստիտուտներում, մշակութային հաստատություններում, ուսումնագիտական կենտրոններում, խորհրդատվական կենտրոններում, հասարակական կազմակերպություններում, ինչպես նաև ուսումը շարունակել հաջորդ հաջորդ կրթական աստիճանում՝ մագիստրատուրայում:

Գավառի պետական համալսարանում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ մրցունակ մասնագետներ պատրաստելու համար: Ուստի, սիրելի՛ ուսանողներ, եղե՛ք նպատակասլաց ու աշխատասեր և միշտ հիշե՛ք, որ հաջողության երաշխիքը որակյալ կրթությունն է:

ԳՊՀ ռեկտոր՝ Ռուզաննա Հակոբյան

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը

Դասընթացների նկարագիրը նախատեսված է «Պատմություն» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես մասնագիտության ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

• կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

•առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Պատմություն

Ծրագրի նկարագիրը

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Պատմություն , 042101.01.6
2. Բուհը	Գավառի պետական համալսարան
3.Ծրագիրը հավատարմագրված է	-
4. Շնորհվող որակավորումը	մանկավարժության բակալավր
5. Կրթական աստիճանը	բակալավր
6. Ուսումնառության լեզուն	հայերեն
7. Ուսուցման ձևը	հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական կրթություն,
- ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով «Հայոց պատմություն» և «Հայոց լեզու և գրականություն» առարկաներից գրավոր քննությունների արդյունքների հիման վրա:

9. Ավարտելու պահանջները.

Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.

- **240 կրեդիտ, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանի ավարտական աշխատանքը:**

Ծրագրի ելքային կրթական արդյունքները ներառում են հետևյալ մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները.

Գիտելիք

Կիմանա հիմնարար մասնագիտական գիտելիքներ մանկավարժության և հոգեբանության տեսության վերաբերյալ, գիտի կրթության և դաստիարակության ոլորտի խնդիրները, ուսուցման նորագույն մեթոդներն ու եղանակները, տեսության և պրակտիկայի զարգացման միտումները, պատմության տարբեր ժամանակաշրջաններին բնորոշ օրինաչափությունները, առանցքային խնդիրներն ու պետությունների զարգացման գործընթացների առանձնահատկությունները:

Կարողություն

Կկարողանա կիրառել մանկավարժահոգեբանական ժամանակակից մեթոդները, ներկայացնել տեսության և պրակտիկայի զարգացման միտումները, ներկայացնել, մեկնաբանել, գնահատել

հասարակության պատմական զարգացումները, մասնագիտական դասընթացների արդյունքում ստացած գիտելիքները կիրառել մասնագիտական մանկավարժական ոլորտում:

Հմտություն

Կտիրապետի կրթության և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաներին, պատմությանը վերաբերող տեղեկատվության հավաքման, սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության մշակման, ստացված արդյունքների վերլուծության և ընդհանրացման հմտություններին: Կտիրապետի բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում՝ մագիստրատուրայում, ուսումը շարունակելու համար:

10. Ծրագրի նպատակները և խնդիրները

«Պատմություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի նպատակն է՝

- տալ հիմնարար և համակարգված գիտելիքներ մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների, պատմական զարգացման շրջափուլերի և սկզբնաղբյուրների, պատամագիտական դպրոցների վերաբերյալ,
- ծանոթացնել պատմության ուսուցման բովանդակությանը, մեթոդաբանությանը, մեթոդներին, նորագույն տեխնոլոգիաներին,
- ձևավորել պատմական նյութը ներկայացնելու, վերլուծելու, գնահատելու և դասավանդելու կարողություններ և հմտություններ:

Ելնելով բուհի առաքելությունից՝ կրթական ծրագիրն իրականացնում է հետևյալ խնդիրները՝

Կրթություն

Ուսումնադաստիարակչական բնագավառում.

ա) մասնագիտության առարկաների ուսուցման գործընթացի ապահովում,

բ) գիտականորեն հիմնավորված ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և միջոցների (տեսալսողական, հաղորդակցական, տեղեկատվական և մուլտիմեդիական) օգտագործում,

գ) ուսուցման արդյունքների պլանավորում, կանխատեսում, սովորողների դաստիարակում և զարգացում, նրանց ուսումնական ձեռքբերումների վերահսկում և հաշվառում՝ արդյունքների գնահատման ժամանակակից մեթոդների և միջոցների կիրառմամբ,

դ) սովորողների ինքնուրույն ուսումնառության պլանավորում, կազմակերպում և ուղղորդում,

ե) սովորողների արժեքային ուղղորդվածության, հանդուրժողականության, քաղաքացիական, մարդասիրական և հայրենասիրական համոզմունքների ձևավորում,

զ) մասնագիտական-մանկավարժական գործունեության մեջ կրթական, դաստիարակչական և զարգացման նպատակների իրականացմանը նպաստող կրթական և հոգեբանական միջավայրի ստեղծում և պահպանում: Սովորողների՝ տարբեր տարիքային փուլերում

անատոմիական–ֆիզիոլոգիական, ֆիզիկական և հոգեկան զարգացման պայմանների ապահովում և հիմնական օրինաչափությունների հաշվառում:

Մեթոդական գործունեության բնագավառում.

ա) մասնագիտական գործունեության ոլորտի տեղեկատվության հավաքում, համակարգում, վերլուծում և օգտագործում,

բ) կրթական ծրագրի, ուսումնամեթոդական ապահովման հիմնավորված ընտրություն և դրանց ուղղորդում ուսումնական կոնկրետ գործընթացի,

գ) ուսումնական պլանին համապատասխան ուսումնական պարապմունքների պլանավորում՝ առարկայական ծրագրերի թեմաների և բաժինների առանձնահատկությունների հաշվառմամբ,

դ) փորձարարական - հետազոտական գործունեության իրականացում՝ կապված սովորողների ուսուցման, դաստիարակության, զարգացման, անձի ձևավորման, դրանց առանձնահատկությունների ուսումնասիրության, սովորողների գործունեության խթանման, ինչպես նաև տեսական և գործնական մանկավարժական կազմակերպչական, շտկողական, դիագնոստիկ, մեթոդական, խորհրդատվական խնդիրների հետ,

ե) գրել հաշվետվություններ, մեթոդական զեկուցումներ, հոդվածներ,

զ) բուն մանկավարժական գործունեության պլանավորում, կազմակերպում, վերլուծություն և կատարելագործում:

Սոցիալական - մանկավարժական գործունեության բնագավառում.

ա) սովորողների սոցիալականացման, մասնագիտական կողմնորոշման գործընթացների մանկավարժական և հոգեբանական ուղեկցության իրականացում, նրանց նախապատրաստում մասնագիտության գիտակցված ընտրության՝ ընդունակություններին և հակումներին համապատասխան,

բ) միջկոլեկտիվային և սովորողների միջանձնային հարաբերությունների կազմակերպում, կանոնավորում ու զարգացում,

գ) դաստիարակության գործընթացում սովորողների ծնողների, ինչպես նաև սոցիալական հաստատությունների հետ համագործակցում:

Մշակութային–լուսավորչական գործունեության բնագավառում.

ա) սովորողների ընդհանուր մշակույթի ձևավորում,

բ) ուսումնական հաստատությունների սոցիալական և մշակութային միջավայրի ձևավորում և կազմակերպում:

Կազմակերպչական գործունեության բնագավառում.

ա) սովորողների ուսումնական և արտաուսումնական գործունեության կազմակերպում, ղեկավարում և դրանց արդյունքների ամփոփում և գնահատում,

բ) ուսումնական գործընթացում սովորողների առողջության և անվտանգության ապահովում:

գ) մասնագիտական խնդիրների լուծման համար հասարակական և կրթական կազմակերպությունների հետ սովորողների և ծնողների կոլեկտիվների փոխհամագործակցության կազմակերպում,

դ)ուսումնական հաստատության թղթաբանության վարում, փաստաթղթաշրջանառության իրականացում:

11. Կրթական ծրագրի մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը	**Ուսումնառության վերջնարդյունքները**
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը. **Ա1.**գիտելիքներ կունենա նախնադարյան հասարակության մասին, **Ա2**. գիտելիքներ ձեռք կբերի պատմագիտության մեթոդների, հայոց պատմության բոլոր ժամանակաշրջանների ու առանցքային խնդիրների վերաբերյալ, **Ա3.** գիտելիքներ կունենա հայոց և համաշխարհային պատմության սկզբնաղբյուրների և պատմագրության մասին, **Ա4**. գիտելիքներ կստանա համաշխարհային պատմության առավել կարևոր պատմափուլերի և մի շարք պետությունների զարգացման գործընթացի վերաբերյալ, **Ա5.**գիտելիքներ կունենա Հայաստանի հարակից երկրների պատմության վերաբերյալ, **Ա6**. կիմանա պատմական մի շարք գիտությունների /հնագիտություն, ազգագրություն /խնդիրները, պատմագիտության համար դրանց նշանակությունն ու օգտակարությունը: **Ա 7.** ներկայացնելու մանկավարժության և դասավանդման մեթոդիկաների, մանկավարժական նորարարական տեխնոլոգիաների սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները, դասերը պլանավորելու, իրականացնելու, վերլուծելու, արդյունքները գնահատելու, անդրադարձի և կշռադատման (ռեֆլեքսիայի) կարողություն:	**Գիտի** նախնադարյան հասարկության զարգացման հիմնական փուլերը, հայոց և համաշխարհային պատմության հին, միջին, նոր և նորագույն շրջանների քաղաքական, տնտեսական և մշակույթային պատմությունը, հայոց պատմության սկզբնաղբյուրները և պատմագրությունը, պատմական հարակից գիտությունների խնդիրները, պատմագիտության համար դրանց նշանակությունն ու օգտակարությունը, Հայաստանի հնագիտության կարևորագույն հնագիտական մշակույթները, փուլաբաժանումները: **Կարող է** մեկնաբանել հայոց և համաշխարհային պատմության, պատմագրության հարցերը, վերլուծել պատմական նյութերի, սկզբնաղբյուրների հետազոտության և գնահատման մեթոդները: **Տիրապետում է** պատմագիտական կատեգորիաներին, պատմագիտության մեթոդներին, հայոց և համաշխարհային պատմության փուլային ժամանակաշրջաններին: **Գիտի** ներկայացնել և հիմնավորել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրերն ու կիրառման առանձնահատկությունները, դասի պլան կազմելու և իրականացնելու հոգեբանամանկավարժական, կազմակերպակառավարչական պահանջներն ու առանձնահատկությունները:

	Կարող է բացահայտել մանկավարժական տեխնոլոգիաների անհատակրթիչ դերն ու կիրառման տրամաբանությունը, հիմնավորել ընթացքում, ծագած բարդությունների հաղթահարման եղանակներն ու միջոցները, պլանավորել, նախագծել, վերլուծել, համադրել, կշռադատել, անդրադարձել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարբեր փուլերը: **Տիրապետում է** դասի թեմային համապատասխան տարբեր մանկավարժական տեխնոլոգիաների համադրման և կիրառման կարողություններին, դասի նպատակին և խնդիրների համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորման, իրականացման, վերլուծության, արդյունքների գնահատման, անդրադարձի և կշռադատման (ռեֆլեքսիայի) կարողություններին:
Ա 8. բացատրելու սովորողների ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:	**Գիտի** անձի ձևավորման սոցիալական գործոնները, դրդապատճառները, անձնավորության ինքնագիտակցության զարգացման առանձնահատկությունները, հոգեախտորոշման մեթոդները, կապը այլ գիտությունների հետ: **Կարող է** նախագծել և կազմակերպել հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների հոգեկանի զարգացմանը նպաստող գործընթաց: **Տիրապետում է** վերլուծության, նկարագրման, հետազոտման, ախտորոշման մեթոդներին, դրանց կիրառմանը սովորողների հոգեկան և տարիքային զարգացման գործում:
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ **Բ1.** հայոց և համաշխարհային պատմության, Հայաստանի հարակից երկրների պատմության հարցերի ներկայացում, մեկնաբանում և գնահատում, **Բ2.** հայոց պատմության սկզբնաղբյուրների ու պատմագրության հարցերի ներկայացում, մեկնաբանում և գնահատում, պատմությանը վերաբերող տեղեկատվության հավաքման, սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության մշակման, ստացված արդյունքների վերլուծության ու ընդհանրացման միջոցների տիրապետում,	**Գիտի** հայոց և համաշխարհային պատմության, Հայաստանի հարակից երկրների պատմության հիմնախնդիրները: **Կարող է** ուսումնասիրել, գնահատել հայոց պատմության սկզբնաղբյուրները: **Տիրապետում է** պատմությանը վերաբերող տեղեկատվության հավաքման, սկզբնաղբյուրների և մասնագիտական

Բ3. հայոց պատմության խեղաթյուրման փորձերի դեպքում միտման կռահում, պարզաբանում և պատասխանում:	գրականության մշակման, ստացված արդյունքների վերլուծության ու ընդհանրացման միջոցներին, պատմության խեղաթյուրման փորձերի դեպքում միտման կռահման, պարզաբանման հմտություններին:
Բ4. անհատական աշխատանքների, կուրսային ու ավարտական աշխատանքների պատրաստում:	**Գիտի** ընտրել մասնագիտական թեմաներ, հետազոտել դրանց առնչվող գիտական աղբյուրներն ու տեսությունները: **Կարող է** ձևակերպել, մուտքագրել և ներկայացնել մասնագիտական հիմնախնդիրները՝ հետազոտական աշխատանքների չափանիշներին համապատասխան: **Տիրապետում է** վերլուծելու, քննադատելու, հիմնավորելու կարողություններին, գիտատեսական նյութերի հիման վրա հետազոտական աշխատանքների կազմակերպման, տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունների օգտագործման հմտություններին:
Բ 5. պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, ղեկավարելու, վերահսկելու, գնահատելու սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը, ձեռք բերված գիտելիքները պրակտիկայում կիրառելու, դրանք հիմնավորելու և գնահատելու կարողություններ:	**Գիտի** հիմնավորել ու ներկայացնել կրթական գործընթացում իր մասնագիտական գործունեության իմաստավորման, նպատակների, խնդիրների գիտատեսական հիմքերը: **Կարող է** կազմակերպել, իրականացնել կրթական գործընթացում իր մասնագիտական գործունեության իմաստին, նպատակին և խնդիրներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթաց: **Տիրապետում է** ուսումնադաստիարակչական գործընթացի նախագծման, կազմակերպման, պլանավորման, գնահատման, անդրադարձման գործնական կարողությունների կիրառմանը պրակտիկաների ընթացքում:

Գ. *Կրթական ծրագրի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակը*	*Ուսումնառության վերջնարդյունքները*
Գ 1. Սահուն ու փաստարկված գրավոր և բանավոր խոսք՝ հայերեն և օտար լեզուներով. մտքերը սահուն ձևով արտահայտելու, հիմնավորված եզրակացություններ անելու և դրանք բանավոր և գրավոր ձևերով պատշաճ ներկայացնելու կարողություն, հաղորդակցվելու անձնային, միջանձնային և մասնագիտական ոլորտում:	**Գիտի** ուսումնասիրել, մեկնաբանել օտար լեզվով մասնագիտական գրականություն և հաղորդակցվել մասնագիտական ոլորտում **Կարող է** գրավոր և բանավոր ներկայացնել տեքստեր և ցուցադրություններ, գիտական տեքստեր՝ ավարտական տարում օգտագործելով հաղորդակցման տարբեր հմտություններ, օտար լեզվով մասնագիտության համապատասխան ոլորտում կիրառվող եզրույթների և արտահայտությունների տիրապետում (կազմել և թարգմանել պարզ տեքստեր մասնագիտական թեմայի շուրջ, ունենալ հաղորդակցվելու ունակություն):
Գ 2. Համակարգչային հմտություններ և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում. մասնագիտական ոլորտում աշխատանքները դյուրացնելու, արագացնելու և խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու, տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվություն որոնելու, մշակելու և վերլուծելու կարողություն:	**Գիտի** տիրապետել, կիրառել տեղեկատվական մասնագիտական տեխնոլոգիաների հմտությունները՝ մասնագիտական խնդիրների լուծման և անձնային որակների զարգացման համար: **Կարող է** կիրառել տեղեկատվական և մանսնագիտական տեխնոլոգիաները՝ մասնագիտական խնդիրներ լուծելու նպատակով: **Տիրապետում է** համակարգչից ազատորեն օգտվելու, հայտնի ծրագրային փաթեթներ (Word, Excel, PPT, Internet, էլեկտրոնային որոնման և վերլուծման գործիքներ) օգտագործելու, էլեկտրոնային գրադարանային համակարգերից և տվյալների բազաներից օգտվելու հմտություններին:
Գ 3. ներկայացնելու հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները:	**Գիտի** հումանիտար, բնագիտական և սոցիալ-տնտեսագիտական գիտությունների ոլորտներում կիրառվող ընդհանուր հասկացությունները, սահմանումները, **Տիրապետում է** դրանց ուսումնասիրության մեթոդներին ու մոտեցումներին:
Գ 4. արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն և անհրաժեշտության դեպքում 1-ին բուժօգնության ցուցաբերում:	**5.Գիտի** արտակարգ իրավիճակներում անվտանգ վարվելակերպի և բնակչության պաշտպանության հիմունքները,

	Տիրապետում է անհատական պաշտպանության միջոցների կիրառության սկզբունքներին, կոլեկտիվ պաշտպանության հիմունքներին և արտակարգ իրավիճակներում շտապ բժշկական օգնության կազմակերպման ձևերին ու եղանակներին:
Գ 5. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:	**Գիտի** թիմում աշխատելու հիմնական սկզբունքները: **Կարող է** արդյունավետորեն կատարել որոշակի գործառույթներ թիմում, հանդես գալ նախաձեռնություններով, մասնակցել ընդհանուր թիմային որոշման կայացմանը, կատարել առաջադրանքներ, հետազոտական աշխատանքներ, վերլուծել հետազոտության արդյունքները, հետազոտության արդյունքները կիրառել պրակտիկայի ընթացքում:
Գ 6. Շարունակական կրթություն. ինքնուրույն սովորելու կազմակերպական կարողություն:	**Գիտի** հիմնավորել, ներկայացնել շարունակական կրթության նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություններ ինքնակրթությամբ զբաղվելու, մասնագիտական և անձնահային զարգացման խնդիրներն ինքնուրույն պլանավերոլու պատրաստականություն: **Կարող է** ինքնուրույն պլանավորել և կազմակերպել աշխատանքը, նպատակաուղղված շարունակել ուսումնառությունը, պարբերաբար բարձրացնել մասնագիտական որակավորումը, ուսումնասիրել օրենսդրությունը և դրա կիրառման պրակտիկան, մասնագիտական գրականությունը, բարելավել մասնագիտական գործունեությունը և ինտեգրվել հարափոփոխ և պահանջկոտ աշխատանքային միջավայրին:

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

12. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳՊՀ-ում իրականացվում է ուսանողակենտրոն ուսուցում, ուսումնական ծրագրի իրականացման ընթացքում կիրառվում են դասավանդման ինտերակտիվ՝ փոխներգործուն մեթոդներ, որոնք օգնում են հասնելու ուսումնական ծրագրի նպատակներին: Դասախոսները կիրառում են հետևյալ մեթոդները՝

Բովանդակային ուսուցում/դասախոսություն. ուսանողներին ներկայացվում են հիմնարար գիտելիքներ ընդհանուր տեսական-պատմական, մանկավարժական գիտությունների և այլ անհրաժեշտ ոլորտներին առնչվող տեսությունների ու սկզբունքների:

Մասնագիտական գրականության ընթերցում և քննարկում. գիտաճյուղերի և ուղղությունների, ինչպես նաև ներկայացված նյութերի համեմատական ուսումնասիրություն, քննադատական գնահատում, դրա հիման վրա համեմատական վերլուծություն, քննարկում և ամփոփում:

Աշխատանքային խմբերի սեմինարներ. դասավանդման ակտիվ մեթոդներ, որոնք ներառում են աշխատանք խմբերում, քննարկումներ, բանավեճեր՝ դիրքորոշումների և փաստարկների ձևակերպման և ներկայացման նպատակով:

Համագործակցային ուսումնառություն. նորարարական մանկավարժական մեթոդ, որը խրախուսում է ուսանողին ակտիվ սովորել և կառուցողական համագործակցություն իրականացնել փոքր և մեծ խմբերում, նպաստում է վերլուծական և քննադատական մտածելակերպի ձևավորմանը, զարգացնում է թիմում աշխատելու, ժամանակը կառավարելու հմտություններ:

Դեպքերի ուսումնասիրման մեթոդ. ուսանողներին ներկայացվում են կարևոր իրադարձությունների և դեպքերի նկարագրություններ, մասնագիտական աշխատանքային իրավիճակներ:

Քննարկումների քարտեզների ուսոմնասիրում. ստացած տեսական գիտելիքները շաղկապելու պրակտիկայի հետ:

Տեսական գիտելիքների կիրառում դասերի ընթացքում նախատեսված թեմաների շրջանակներում բաց դասերի պլանավորում և իրականացում:

Ուսանողների ինքնուրույն աշխատանք: Ծրագիրը հիմնվում է լայն գործիքակազմի վրա, որը մղում է ուսանողներին իրականացնելու ինքնուրույն աշխատանքներ և ապահովել արդյունավետ հետադարձ կապ դասախոսների հետ (առկա և էլեկտրոնային հաղորդակցություն), կատարել հետազոտություններ, որոնք օգնում են ուսանողին ինքնուրույն ծանոթանալու պատմական փաստաթղթերի, հին ձեռագրերի, վերլուծել դրանք, գտնել պատճառահետևանքային կապերը, պատրաստվեն սեմինարների, դասախոսությունների և արդյունքների գնահատման այլ ձևերի /միջանկյալ, ամփոփիչ քննություններ/ ու պրակտիկ աշխատանքի:

13.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների Ա1-Ա8 գիտելիքները և իմացությունը գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ

- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների Բ1-Բ5 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Ընդհանրական (փոխանցելի) կարողությունների գնահատման մեթոդները.

Ուսանողների Գ1-Գ6 ընդհանրական /փոխանցելի/ կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ:

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնելու համար համալսարանն ունի համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:

Բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն ընդգրկում է՝

- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- ԳՊՀ-ում Վ. Ավետյանի անվան թանգարան,
- Մանկավարժահոգեբանական կենտրոն,
- ԳՊՀ-ի գրադարանը՝ համապատասխան մասնագիտական գրականությամբ,
- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում այդ բազայից օգտվելու հնարավորություն:

Ուսումնական գործընթացի տեղեկատվական և ուսումնամեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջներ.

- ՄԿԾ-ով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացները, դրանց մոդուլները ապահովված են ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:
- Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը պետք է զուգորդվի մեթոդական ապահովմամբ և ծախսված ժամանակի հիմնավորմամբ:
- ՄԿԾ-ի իրականացումը յուրաքանչյուր սովորողի թույլատրում է մուտք գործել տվյալների բազա, գրադարանային ֆոնդեր, ստանալ տեղեկատվություն և խորհրդատվություն:
- Գրադարանային ֆոնդը պետք է համալրված լինի ոչ միայն մասնագիտական, այլ նաև հումանիտար, սոցիալական և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր և էլեկտրոնային հրատարակություններով:

15.ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

«Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավաժական կադրերով, ովքեր ունեն դասավանդվող առարկային համապատասխանող մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում) և իրականացնում են գիտական կամ գիտամեթոդական, մանկավարժական գործունեություն:

Մասնագիտական դասընթացների ուսումնական գործընթացը ապահովող դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենան գիտական աստիճան և /կամ/ կոչում, այդ թվում՝ «Պատմություն» մասնագիտության մասնագիտական առարկաների գծով:

Կրթական գործընթացի մեջ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ պրակտիկաների բազային հանրակրթական դպրոցների, պրոֆիլային կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների աշխատակիցների համակազմից:

«Պատմություն» կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է ունենա հետևյալ բնութագրերը.

Մասնագետի բնութագիր

Անձնային որակներ

Տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու կարողություն, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու կարողություն, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և վարվեցողության նորմեր ձևավորելու կարողություն, ուսումնառողների ներուժի գնահատում:

Մանկավարժական որակներ

Մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կիրառում, գործող օրենսդրական փաստաթղթերի իմացություն, ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացում, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու հմտություն, մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների համադրում, անհատական և խմբային աշխատանքի կազմակերպում, ուսումնառողների սովորելու դրդապատճառների ձևավորում և խթանում, դասավանդման նպատակների և խնդիրների ձևակերպման կարողություն, կրթական ծրագրի մշակման և գործնական որոշումների կայացման կարողություն:

Կազմակերպչական բնութագիր

Ուսուցման լավագույն ձևերի ու մեթոդների ընտրության, սուբյեկտների միջև փոխգործակցության, վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման կարողություն*:*

Հաղորդակցական հմտություններ

Խոսքի բարձր մշակույթի դրսևորում, օտար լեզուների իմացություն, մանկավարժական հաղորդակցման մշակույթի զարգացում:

Համակարգչային ծրագրերի իմացություն

Համակարգչային ծրագրերի ազատ տիրապետում և դասավանդման գործընթացում դրանք կիրառելու հմտություն:

Դասախոսի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները

Իմանա դասավանդվող գիտակարգը, ընդհանուր պատմագիտության հասկացութային ապարատը, հայոց պատմությունը, համաշխարհային պատմության կարևոր

իրադարձությունները, հայոց և համաշխարհային պատմության պարբերականացումը և առանցքային խնդիրները, հայոց պատմության սկզբնաղբյուրները և պատմագրությունը, պատմական հարակից գիտությունների խնդիրները, պատմագիտության համար դրանց նշանակությունն ու օգտակարությունը, գիտենա ժամանակակից կրթության հիմնախնդիրներն ու հասկացությունները, մանկավարժության հիմունքները:

Կարողանա քննադատաբար մեկնաբանել և գնահատել հայոց և համաշխարհային պատմության, պատմագրության հարցերը, աշխատել տարբեր լսարաններում, տարբեր մանկավարժական մեթոդներով, վերլուծել պատմական նյութերի, սկզբնաղբյուրների հետազոտության և գնահատման մեթոդները, վերլուծել ուսուցման գործընթացը, դրսևորել հաղորդակցական կարողություններ ուսուցման գործընթացում:

Տիրապետի պատմագիտական կատեգորիաներին, պատմագիտության մեթոդներին, հայոց և համաշխարհային պատմության փուլային ժամանակաշրջաններին, ինչպես նաև մանկավարժական հմտություններին, ինքնակրթության, անձնային և մասնագիտական աճի, մանկավարժի անհատական գործունեության մոդելի ձևավորման հմտություններին, տվյալ ուսուցման ձևի կազմակերպման համար անհրաժեշտ իրազեկություններին:

16. ՍՈՎՈՐՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պատմություն» մասնագիտության բակալավրը կարող է կրթությունը շարունակելու՝

- ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով կրճատված ժամկետներում,
- մագիստրատուրայում՝ ստանալու պատմության մագիստրոսի որակավորման աստիճան,
- ասպիրանտուրայում (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ ստանալու հետազոտողի որակավորում (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան):

17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

«Պատմություն» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել որպես

1. հանրակրթական դպրոցներում՝ որպես պատմության, հասարակագիտության և հայ եկեղեցու պատմության ուսուցիչ,
2. վարժարաններում, քոլեջներում, բուհերում՝ որպես պատմության ուսուցիչ, դասախոս,
3. թանգարաններում՝ որպես գիտաշխատող,
4. արխիվներում՝ որպես արխիվապահ:

18.ՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Գիտելիքը, մարդու զարգացմանը նպաստող գործիք լինելուց բացի, նաև պատասխանատվության խորհրդանիշ է: Մեզանից յուրաքանչյուրը կրթվում է՝ ինքն իրեն, միջավայրին ու նաև երկրին օգտակար լինելու համար: Այս առումով կարևոր է մասնագիտական կրթական ծրագրի ռիսկայնությունն իրատեսորեն գնահատելը, նվազագույնի հասցնելը, հետևաբար կայունությունն ապահովելը:

Գավառի պետական համալսարանի առկա և հեռակա ուսուցման բաժիններում «Պատմություն» մասնագիտական կրթության ծրագրի հիմնական նպատակը հանրապետության տարբեր բնագավառներին, մասնավորապես հանրակրթական դպրոցներին և միջին մանագիտական ուսումնական հաստատություններին բարձրորակ պատմաբան կադրերով ապահովելն է:

Գավառի պետական համալսարանում իրականացվող «Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի կայունությանը նպաստող գործոններն են.

<u>Կրեդիտային համակարգը</u> ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման,

- ✓ «Պատմություն» մասնագիտության նկատմամբ եղած հասարակական պահանջարկը, հանրապետական և մարզային գործադիր և օրենսդիր մարմիններում, կրթական համակարգում և մշակութային օջախներում աշխատելու հնարավորությունը,
- ✓ մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը, բակալավրի որակավորմամբ պատմաբանների՝ մագիստրատուրայի որակավորմամբ սովորելու իրավունքը, ԳՊՀ գործընկեր եվրոպական բուհերում պատմաբան ուսանողների սովորելու հնարավորությունը,
- ✓ հասարակական գիտությունների ամբիոնի համալրվածությունը, որը համապատասխանում է իրականցվող մասնագիտական կրթական ծրագրերի պահանջներին,
- ✓ Գավառի պետական համալսարանի պաշտոնական կայքէջի միջոցով ուսանողների և դասախոսների միջև մշտապես գործնական կապերի ապահովվածությունը, որն ընձեռում է գործընթացի հետադարձ կապը,
- ✓ պատմագիտության բնագավառի ճանաչված և հեղինակավոր մասնագետներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավումը,
- ✓ սովորողների համար պրակտիկայի առկայությունը՝ կրթօջախներում, արխիվներում, թանգարաններում,
- ✓ պատմաբան մասնագետներին գործատուների կողմից ներկայացվող պահանջների և կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանեցման շարունակական աշխատանքը,
- ✓ կրթական համակարգին առաջադրվող պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի վերամշակումն ու արդիականությունը,
- ✓ ԳՊՀ-ի Վարշամ Ավետյանի անվան թանգարանի առկայությունը,
- ✓ ուսումնական վավերագրական ֆիլմերի հավաքագրումը,
- ✓ Էլեկտրոնային ուսուցման՝ ‹‹Learn.GSU›› համակարգի, էլեկտրոնային գրադարանի՝ ‹‹E-Library.GSU›› առկայությունը:

Միաժամանակ կրթական ծրագիրը զերծ չէ ռիսկայնությունից:

Դրանք են.

- ✓ բնակչության սոցիալական վիճակը,
- ✓ արտագաղթը,
- ✓ պատմություն մասնագիտության գծով ԳՊՀ-ում ասպիրանտուրայի կրթական աստիճանի բացակայությունը,
- ✓ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նպատակային ասպիրանտական տեղեր չհատկացնելը:

Միաժամանակ կրթական ծրագիրը զերծ չէ ռիսկայնությունից:

Դրանք են.

- ✓ բնակչության սոցիալական վիճակը,
- ✓ արտագաղթը,
- ✓ պատմություն մասնագիտության գծով ԳՊՀ-ում ասպիրանտուրայի կրթական աստիճանի բացակայություն,
- ✓ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նպատակային ասպիրանտական տեղեր չհատկացնելը:

արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 48 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համառ ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային, ավարտական և այլ աշխատանքներին,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր

աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելը և այլն,

- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործություն չկա:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրի կրթական ծրագրի աշխատածավալը

ԳՊՀ-ում բակալավրի կրթական աստիճանում հեռակա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Հեռակա ուսուցման կրթական ծրագրերի նորմատիվային կիսամյակային բեռնվածությունը կազմում է 24 կրեդիտ՝ անկախ հայցվող որակավորման աստիճանից: Ուսանողի կիսամյակային փաստացի ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 15-24 կրեդիտ:

Հեռակա ուսուցման կրթական ծրագրերով նախատեսված լսարանային պարապմունքների տարեկան նորմատիվային ժամաքանակն առնվազն 160 ժամ է:

Հեռակա ուսուցման ձևում կիսամյակի տևողությունը 16 շաբաթ է, որից 12-ը հատկացվում է ուսումնական պարապմունքներին և ինքնուրույն աշխատանքին, իսկ

4 շաբաթը՝ քննաշրջանին: Լսարանային պարապմունքների գումարային տևողությունը ուսումնական տարում կազմում է առնվազն 8 շաբաթ:

Ռեֆերատների, կուրսային աշխատանքների և նախագծերի, գրավոր առաջադրանքների, ինքնուրույն հետազոտական աշխատանքների ստուգման ու գնահատման ընթացակարգերը սահմանում է համալսարանը՝ ելնելով մասնագիտական և հայցվող որակավորման առանձնահատկություններից:

Ստուգարքներին և եզրափակիչ քննություններին մասնակցելու թույլտվություն են ստանում այն ուսանողները, ովքեր հանձնել են ուսումնական պլանով տվյալ դասընթացի համար նախատեսված ինքնուրույն աշխատանքի բոլոր բաղկացուցիչները:

Հեռակա ուսուցման ուսանողի հեռացումը կամ վերականգնումն իրականացվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի:

Հեռակա ուսուցման ուսանողի շարժունությունն իրականացվում է համաձայն «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի:

Հեռակա ուսուցման ձևով կրեդիտային համակարգում յուրաքանչյուր դասընթացի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ հետևյալ գործոնների և դրանց կշիռների հիման վրա. հաճախումներ, ընթացիկ ակտիվություն, մեկ միջանկյալ և մեկ ամփոփիչ քննություններ (կամ ստուգարք), սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքներին ակտիվություն, ինքնուրույն հետազոտական աշխատանք: Գործոնները գնահատվում են 100 միավորանոց համակարգով:

Ուսանողների գիտելիքների ստուգումները կատարվում են քննությունների և ստուգարքների միջոցով՝ ըստ սահմանված ժամանակացույցի կամ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով, քննությունները՝ կիսամյակի ընթացքում երկու անգամ (մեկ միջանկյալ և մեկ ամփոփիչ), իսկ ստուգարքները՝ կիսամյակի ընթացքում մեկ անգամ: Քննաշրջանից հետո ստուգարքներ և /կամ/ քննություններ կազմակերպվում են լուծարային շրջաններում, ինչպես նաև առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով:

Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է:

3.Դասընթացները և կրթական մոդուլները

Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով: Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների: Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

բ) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,

ա) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ՝ ազատ:

4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

4.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է երեք հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ: Ծրագրի ընդհանուր կառուցվածքը բերված է ստորև.

Աղյուսակ 1

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	27	15
պարտադիր	25	12
կամընտրական	2	3

Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական պարտադիր կամընտրական	7 5 2	4 2 2
Ընդհանուր մասնագիտական կուրսային աշխատանքներ կամընտրական	182 2 8	40 2 4
Կրթական այլ մոդուլներ	24	2
Ընդամենը	240	61

4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ԸՀՍՏ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու բաղկացուցիչ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ԸՀՍՏ պարտադիր դասընթացներ.

ԸՀՍՏ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ *2*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	10 (8/2)	1	ստուգարք
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	2	10 (8/2)	2	քննություն

Ռուսաց լեզու - 1	2	10(0/10)	1	ստուգարք
Ռուսաց լեզու - 2	2	10(0/10)	2	քննություն
Օտար լեզու /անգլերեն/– 1	2	10(0/10)	1	ստուգարք
Օտար լեզու /անգլերեն/– 2	2	10(0/10)	2	քննություն
Գրաբար	3	10(0/10)	3	ստուգարք
Հետազոտության մեթոդաբանություն	2	10(8/2)	8	ստուգարք
Կրոնագիտության հիմունքներ	2	10(8/2)	3	ստուգարք
Տրամաբանության հիմունքներ	2	10 (8/2)	2	ստուգարք
Փիլիսոփայության հիմունքներ	2	14(12/2)	5	ստուգարք
Իրավագիտության հիմունքներ	2	10 (8/2)	5	ստուգարք

2 Այսուհետ՝ դ - դասախոսություն, գ - գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:

3 Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

ՀՍՏ կամընտրական դասընթացներ

ՀՍՏ կամընտրական դասընթացների ցանկը ներառում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

Աղյուսակ *3*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը

Քաղաքագիտության հիմունքներ	2	10 (8/2)	5	ստուգարք
Մշակութաբանության հիմունքներ				
Տնտեսագիտության հիմունքներ				

4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական:

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ *4*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանայի ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	1	12 (6/6/0)	1	ստուգարք
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3	12 (8/4/0)	2	ստուգարք

ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Աղյուսակ *5*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2	10(8/2/0)	2	ստուգարք
Սոցիոլոգիա				

4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում «Պատմություն» մասնագիտության գծով:

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտությունների համար բերված են ստորև.

Աղյուսակ *6*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Ընդհանուր մանկավարժություն-1	3	10 (8/2/0)	3	ստուգարք
Ընդհանուր մանկավարժություն-2	3	10 (8/2/0)	4	քննություն
Ներառական կրթության հիմունքներ	3	10 (8/2/0)	5	ստուգարք
Ընդհանուր հոգեբանություն-1	3	10 (8/2/0)	3	ստուգարք
Ընդհանուր հոգեբանություն -2	3	10 (8/2/0)	4	քննություն
Կուրսային աշխատանք Մանկավարժություն/Հոգեբանություն	1	-	4	քննություն

Պատմության դասավանդման մեթոդիկա -1	5	18 (10/8/0)	5	ստուգարք
Պատմության դասավանդման մեթոդիկա -2	6	22 (18/4/0)	6	քննություն
Կուրսային աշխատանք Պատմության դասավանդման մեթոդիկա	1	-	6	քննություն
Պատմության դասավանդման մեթոդիկա -3	4	16 (10/7/0)	7	քննություն
Հայոց պատմություն-1	5	18 (12/6/0)	1	ստուգարք
Հայոց պատմություն-2	5	18 (12/6/0)	2	քննություն
Հայոց պատմություն-3	6	22 (16/6/0)	3	ստուգարք
Հայոց պատմություն-4	6	22 (16/6/0)	4	քննություն
Հայոց պատմություն-5	5	18 (12/6/0)	5	ստուգարք
Հայոց պատմություն-6	6	22 (16/6/0)	6	քննություն
Հայոց պատմություն-7	4	16 (10/6/0)	7	ստուգարք
Հայոց պատմություն-8	4	16 (10/6/0)	7	քննություն
Հայոց պատմություն-9	6	22 (16/6/0)	9	քննություն
Հայաստանի պատմական աշխարհագրություն	3	14(10/4/0)	2	քննություն
Հայոց պատմության աղբյուրագիտություն	6	22(16/6/0)	4	քննություն

Հայոց պատմության պատմագրություն	4	16(10/6/0)	7	քննություն
Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն	4	16(10/6/0)	8	ստուգարք
Հայ ազգագրություն	4	16(10/6/0)	1	ստուգարք
Նախնադարի հասարակության պատմություն	4	16 (10/6/0)	1	ստուգարք
Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն	3	14 (10/4/0)	3	ստուգարք
Հին Արևելքի պատմություն	3	14 (10/4/0)	1	քննություն
Հին Հունաստանի և Հռոմի պատմություն	3	14 (10/4/0)	2	քննություն
Ռուսաստանի պատմություն-1	5	16 (10/6/0)	5	ստուգարք
Ռուսաստանի պատմություն-2	6	20 (14/6/0)	6	քննություն
Ռուսաստանի պատմություն-3	4	14 (10/4/0)	7	ստուգարք
Ռուսաստանի պատմություն-4	3	16 (10/6/0)	8	քննություն
Միջին դարերի պատմություն-1	4	20 (16/6/0)	3	ստուգարք
Միջին դարերի պատմություն-2	3	16(10/6/0)	4	քննություն
Նոր պատմություն-1	3	12 (8/4/0)	6	ստուգարք
Նոր պատմություն-2	4	18 (10/8/0)	7	քննություն
Նորագույն պատմություն-1	6	22 (16/6/0)	8	ստուգարք

Նորագույն պատմություն-2	6	24 (18/6/0)	9	քննություն
Կովկասի և Հայաստանի հարակից երկրների պատմություն-1	4	18(12/6/0)	7	ստուգարք
Կովկասի և Հայաստանի հարակից երկրների պատմություն-2	5	20 (16/4/0)	8	քննություն
Կովկասի և Հայաստանի հարակից երկրների պատմություն-3	6	22 (14/8/0)	9	քննություն
Թանգարանագիտություն և արխիվագիտություն	2	16 (12/4/0)	4	ստուգարք
Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ				
Հայ եկեղեցու պատմություն	6	20 (12/8/0)	9	ստուգարք
Հայ գաղթօջախների պատմություն				
Կիրառական մանկավարժություն	2	10 (8/2/0)	6	ստուգարք
Ընտանեկան կյանքի և սոցիալական հոգեբանություն				

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 3 կրեդիտ աշխատածավալով կուրսային աշխատանքների կատարում, որի արդյունքների ստուգումն իրականացվում է կրեդիտային եղանակով:

4.1.4. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Աղյուսակ *7*

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Մանկավարժական պրակտիկա	16	10	քննություն
Ավարտական աշխատանք	8	10	քննություն

5.Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների ‹կուրսղեկների› ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրին քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

5.4. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

ԳՊՀ՝ կրեդիտային համակարգով կազմակերպվող բակալավրիատի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար ընդունվում է ներքոհիշյալ աղուսակում տրված 100 միավորանոց գնահատման համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աղյուսակ 8

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A + A	4,0 4,0	95-100 87-94

	A -	3,7	81-86
Լավ	B+ B B-	3,3 3,0 2,7	75-80 67-74 61-66
Բավարար	C+ C C-	2,3 2,0 1,7	55-60 46-54 40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրագումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:
2. Միավորների բաշխումն ըստ գործոնների.

ա/ Քննությամբ ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 10

հ/հ	**Գործոններ**	**Միավորներ**
1.	Հաճախումներ	20
2.	Միջանկյալ քննություն	20
3.	Ընթացիկ ակտիվություն և ինքնուրույն հետազոտական աշխատանք	25
4.	Վերջնական հանրագումարային քննություն	35
	Ընդամենը	**100**

բ/ Ստուգարքով ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 11

հ/հ	**Գործոններ**	**Միավորներ**
1	Հաճախումներ	20
2	Ընթացիկ ակտիվություն և ինքնուրույն հետազոտական աշխատանք	35
3	Վերջնական հանրագումարային ստուգում	45
	Ընդամենը	**100**

գ/ Կուրսային աշխատանք

Աղյուսակ 12

հ/հ	**Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները**	**Միավորներ**
1	Բովանդակության ամբողջականությունը (լիարժեքությունը)	30
2	Կատարման ինքնուրույնությունը	25
3	Համապատասխանությունը տեխնիկական պահանջներին	15
4	Ներկայացման և պաշտպանության որակը	30
Ընդամենը		**100**

դ/ Մանկավարժական պրակտիկա /քննություն/

Աղյուսակ 12

հ/հ	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորը	Ցուցում՝ գնահատման մասին
1	Հաճախում	20	գնահատման ժամանակ 20 միավորից հանվում է յուրաքանչյուր բացակայած օրվան համապատասխան միավորների

			թիվը, արդյունքը կլորացնելով՝ պակասորդով
2	Փորձնական կամ բաց դասեր	20	Գնահատումը իրականացվում է արձանագրություններին համապատասխան
3	Արտադասարանական միջոցառումներ	20	
	Հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններ և բնութագրերի կազմում	20	
	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և ներկայացում	20	Գնահատումը իրականացվում է՝ կանոնակարգի և սույն աղյուսակի համաձայն

ե/ Ավարտական աշխատանքի պաշտպանություն

Աղյուսակ 13

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100
2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+ /1,7 – 4,0/

h/h	**Գործոններ**	**Միավոր**
1	Աշխատանքի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Աշխատանքի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Աշխատանքին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10

4	Ավարտական աշխատանքի ներկայացումը, պաշտպանությունը	30

6.1 Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում, օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը, կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

- ընթացիկ ստուգում,
- միջանկյալ ստուգում,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում,
- հանրագումարային ստուգում:

6.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում

6.2.1. Կանոնակարգի համաձայն՝ ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային աշխատանքները, իսկ ինքնուրույն հետազոտական աշխատանքը կարող է ստուգվել շնորհանդեսների, զեկուցումների, հետազոտությունների արդյունքների, թեստերի, կատարված հանձնարարությունների, լուծված առաջադրանքների, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքների ստուգման և գնահատման այլ ձևերի միջոցով:

6.2.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ու գնահատման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը, ինչպես նաև դասընթացի բնույթն ու առանձնահատկությունները:

6.2.3. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքները և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի բովանդակությունը հարստացնելու և արդիականացնելու, մեթոդները կատարելագործելու, պարապմունքների և ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

6.2.4. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումներն ու ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատումներն իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքներ, հանձնարարում ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

6.2.5. Անկախ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատում:

6.2.6. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ դրանց համամասնությունից:

6.2.7. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականը հաշվարկվում է սույն կարգի աղյուսակ 2-ում և 3-ում «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնին հատկացված միավորի (քննության դեպքում՝ 20 միավորի, ստուգարքի դեպքում՝ 40 միավորի) շրջանակներում բոլոր ձևերի ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների արդյունքներից:

6.2.8. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի: ‹‹Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնի գնահատականի հաշվարկը կարող է կատարվել Օրինակ 1-ում (ստուգարքով ավարտվող մոդուլի դեպքում) և Օրինակ 2-ում (քննությամբ ավարտվող մոդուլի դեպքում) ներկայացված ձևով (հաշվարկում 5-րդ սյան միավորները ստացվում են 3-րդ և 4-րդ սյուների միավորների բազմապատկման արդյունքում).

1) ստուգարքով ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 1.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչ յուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակնե րում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը.= 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2

4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				**25,2=26**

2) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը.= 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				12,8=13

Այսպիսով, ՎԳընթ=Կx*Գx., որտեղ

ՎԳընթ-ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,

Կx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,

Գx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2=1/, /0,4+0,6=1/:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը: Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող

է հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

6.3. Միջանկյալ ստուգում

6.3.1. Միջանկյալ ստուգումն անցկացվում է կիսամյակի կամ մոդուլի ընթացքում ուսանողի առաջադիմությունը գնահատելու և ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ժամանակ ավելի մեծ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:

6.3.2. Միջանկյալ ստուգումը արտահայտում է հաստատված ուսումնական պլանում առկա դասընթացի առարկայական ծրագրում ընդգրկված թեմաների որոշ մասի յուրացումը ուսանողի կողմից և ամփոփում է այդ հատվածի /թեմաների/ գնահատականները:

6.3.3. Միջանկյալ ստուգումն անցկացվում է ստուգողական աշխատանքի, համակարգչային թեստավորման կամ այլ եղանակներով:

6.3.4. Միջանկյալ ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում միջանկյալ քննությանը հատկացված 20 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.3.5. Միջանկյալ ստուգման եղանակը և գնահատման սկզբունքները պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները: Դրանք պետք է նկարագրված լինեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրում և տեղեկացվեն ուսանողներին դասընթացի սկզբում:

6.4. Հանրագումարային ստուգում

6.4.1. Հանրագումարային ստուգման ձևերն են համարվում քննությունները և հանրագումարային ստուգարքները /այն մոդուլներից, որոնցից քննություն նախատեսված չէ/:

6.4.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

6.4.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 30 միավորի կամ վերջնական ստուգմանը հատկացված 50 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.4.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

6.4.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

6.4.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

6.4.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

6.4.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերոնշյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

6.4.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

7. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

7.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

7.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

7.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ծրագրային կրեդիտների քանակը,
- որակավորման կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

7.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

7.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$ՈԿ = \sum \text{Կրեդիտ}$$

7.6 Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$ՎՄ = \sum \text{Կրեդիտ} \quad \text{Գարդ.}$$

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ 3,0 = 6՝ 8 հնարավորից):

7.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$ՄՈԳ = \frac{ՎՄ}{ՈԿ}$$

7.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

8. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

8.1 Լուծարք

8.1.1 Լուծարքը կազմակերպվում է հինգ գործոնների փաստացի արդյունքներով, ապա դեկանատում հաշվարկվում է վերջնական ամփոփիչ գնահատականը, որը նշվում է ձևաթերթում:

8.1.2 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար:

8.1.3 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25–ի և պակաս՝ 40–ից:

8.1.4 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

8.1.5 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել երկու անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան, իսկ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով:

8.2 Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝

8.2.1 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, իսկ հանրագումարային գնահատականի արժեքը պակաս է 25-ից,

8.2.2 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, հանրագումարային գնահատականի արժեքը ավել կամ հավասար է 25–ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին, և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

8.2.3 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

9. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

9.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

9.2 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

9.3 Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ լուծարային շրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

9.4 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա հանրագումարային գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:

9.5 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

10.1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով ու պաշտպանությամբ:

10.2. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է նախաավարտական ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

10.3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա. աշխատանքի ներկայացումը մասնագիտական ամբիոնի քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ. ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտական ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ. մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու գործընթացի կազմակերպում,

դ. ավարտական աշխատանքի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

10.4. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների չափաքանակներն՝ ըստ Աղյուսակ 8-ի և Աղյուսակ 13-ի:

Ծրագրի ավարտական պահանջները

11.1 Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

11.2 Մինչև ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ: Բոլոր ուսանողները,

մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 39 կրեդիտ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 36 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 9 կրեդիտ՝ ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 6 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), և առնվազն 18 կրեդիտ՝ պրակտիկայից և ամփոփիչ ատեստավորման ձևերից /ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում/:

11.3 Մնացած 171 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և մասնագիտության համար տրվում է առանձին (մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

11.4 Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է և համապատասխան որակավորումներով դիպլոմները (սովորական, գերազանցության) շնորհվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

12. Կրեդիտների փոխանցումը

12.1 Այլ բուհերից ԳՊՀ բակալավրի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

12.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ բակալավրի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

12.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

12.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում ‹ներառյալ՝ օտարերկրյա›,
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

13.2. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2025 ուսումնական տարի

Ձմեռային կիսամյակ *Աղյուսակ 15*

8 հունվարի 2025թ. – 26 հունվարի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	8 հունվարի
Միջանկյալ քննություն	դասացուցակին համապատասխան

Գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	դասացուցակին համապատասխան
Ստուգարքների հանձնում	05 փետրվարի – 16 փետրվարի
Ուսուցման ավարտ	26 հունվարի
Քննաշրջան	19 փետրվարի – 09 մարտի

<u>Ամառային կիսամյակ</u>

Աղյուսակ 16

4 հունիսի – 22 հունիսի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	4 հունիսի
Միջանկյալ քննություն	դասացուցակին համապատասխան
Գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	դասացուցակին համապատասխան
Ստուգարքների հանձնում	3 սեպտեմբերի – 20 սեպտեմբերի
Ուսուցման ավարտ	22 հունիսի
Քննաշրջան	24 սեպտեմբերի – 12 հոկտեմբերի
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	07 մայիսի- 31 մայիսի
Արձակուրդներ	29 հունիսի – 31 օգոստոսի

ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ

1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ - տնտեսագիտական դասընթացներ
1.1 Պարտադիր դասընթացներ

22/Բ40-Հայոց լեզու և խոսքի մշակույթ -1 (2 կրեդիտ)
8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը
Դասընթացն ունի տեսական, գործնական-կիրառական ուղղվածություն: Նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ժամանակակից հայոց լեզվի խոսքի դրսևորման տարբեր տեսակների, ոճերի տեսակների, հնչյունական կազմի, բառակազմության դարձվածաբանության, բառարանագրության, ինչպես նաև և

ձևաբանություն, և շարահյուսություն բաժինների վերաբերյալ, ընդհանուր գծերով ներկայացնել խոսքի մասերը՝ իրենց բնորոշ քերականական կարգերով և ոճական առանձնահատկություններով, հայերենի նախադասությունները, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, նախադասությունների տեսակներն ըստ հնչերանգի և ըստ կառուցվածքի, յուրաքանչյուր թեմայի իմացությունը ամրապնդելով համապատասխան գործնական աշխատանքներով՝ հատկապես ուղղագրության և կետադրության հետ կապված, զարգացնել ուսանողների՝ քերականորեն և ոճական առումով ճիշտ խոսք կառուցելու կարողությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա ժամանակակից հայոց լեզվի ոճաբանությունը, հնչյունաբանությունը, հնչյունափոխությունը, բառագիտությունը, բառակազմությունը, դարձվածաբանությունը, բառարանագիտությունը:

Կկարողանա ներկայացնել խոսքի դրսևորման ձևերը, հայերենի հնչյունական համակարգը, հնչյունափոխության տեսակները և դեպքերը, բառը, նրա հատկանիշներն ու տեսակները, բառերի տեսակներն ըստ կազմության, դարձվածքները, բառարանների տեսակները:

Կտիրապետի հնչյունական վերլուծություններին, հնչյունափոխական երևույթները որոշելուն, բառերի կազմության ձևերին, խոսքում դարձվածքները ճիշտ կիրառելուն, բառարաններից օգտվելու ձևերին, ճիշտ, փաստարկված գնահատող և դատողական խոսք կառուցելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Հայոց լեզվի հատկանիշները և գրավոր զարգացման փուլերը: **Թեմա 2.** Խոսքի տեսակները: Ոճերի դասակարգման սկզբունքները. ոճերի տեսակները և կիրառությունները: Խոսքի պատկերավորման և հուզարտահայտչական միջոցները: Վարչագործարարական գրություններ: **Թեմա 3.** Հայերենի հնչյունական համակարգը: Հնչյուն և հնչույթ Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ: Երկհնչյուններ: **Թեմա 5.** Վանկը և շեշտը հայերենում:Վանկատում և տողադարձ. Շեշտ և հնչերանգ: Հնչյունափոխություն, **Թեմա 4.** Ուղղագրություն և ուղղախոսություն. Օրինաչափությունները, **Թեմա 5.** Բառագիտություն: Բառի ուսմունքը: Բառապաշար, դրա դասակարգումը: Մասնագիտական բառապաշար: Իմաստաբանություն: Բառիմաստի տեսակները և փոփոխությունները, **Թեմա 6.** Բառակազմություն: Ձևույթներ: Բառերի տեսակներն ըստ կազմության, **Թեմա 7.** Դարձվածքները և դրանց տեսակները, կիրառությունները: **Թեմա 8.** Բառարանագիտություն: Բառարանների հիմնական տեսակները:

22/Բ41 – Հայոց լեզու և խոսքի մշակույթ – 2 (2 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը

Դասընթացն ունի տեսական, գործնական-կիրառական ուղղվածություն: Նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ժամանակակից հայոց լեզվի խոսքի դրսևորման տարբեր տեսակների, ոճերի տեսակների, հնչյունական կազմի, բառակազմության դարձվածաբանության, բառարանագրության, ինչպես նաև և ձևաբանություն, և շարահյուսություն բաժինների վերաբերյալ, ընդհանուր գծերով ներկայացնել խոսքի մասերը՝ իրենց բնորոշ քերականական կարգերով և ոճական առանձնահատկություններով, հայերենի նախադասությունները, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, նախադասությունների տեսակներն ըստ հնչերանգի և ըստ կառուցվածքի, յուրաքանչյուր թեմայի իմացությունը ամրապնդելով համապատասխան գործնական աշխատանքներով՝ հատկապես ուղղագրության և կետադրության հետ կապված, զարգացնել ուսանողների՝ քերականորեն և ոճական առումով ճիշտ խոսք կառուցելու կարողությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա հայերենի խոսքի մասերի դասակարգման սկզբունքները և քերականական կարգերը:

Կկարողանա տարբերակել խոսքի մասերն իրենց բնորոշ քերականական առանձնահատկություններով:

Կտիրապետի նախադասությունների ձևաբանական վերլուծություններին, գրական երկերի վերլուծության սկզբունքներին, ճիշտ, փաստարկված, գնահատող և դատողական խոսք կառուցելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Խոսքի մասեր, դրանց դասակարգման հիմունքները: **Թեմա 2.** Գոյական անուն: Գոյականի իմաստային-քերականական խմբերն ու քերականական կարգերը: Գոյականի կազմությունը: Հոլովները: Հոլովումներ: Գոյականի առկայացման կարգը: **Թեմա 3.** Ածական անուն, տեսակները, կազմությունը և շարահյուսական կիրառությունները: **Թեմա 4.** Թվական անուն տեսակները, կազմությունը, կիրառությունները: **Թեմա 5.** Դերանուն, տեսակները: Դերանվանական հոլովում: **Թեմա 6.** Բայ, հատկանիշները,կազմությունը: Բայի անդեմ և դիմավոր ձևերը, դրանց տեսակները, կազմությունը: **Թեմա 7.** Բայի խոնարհումը: Բայի սեռերը: Անկանոն և պակասավոր բայեր: **Թեմա 8.** Մակբայ, տեսակները, կազմությունը, ուղղագրությունը: **Թեմա 9.** Կապերի տեսակներն ըստ իմաստի: Կապական բառեր: Կապերի հոլովառությունը: **Թեմա 10.** Շաղկապ. տեսակները և կիրառությունները: **Թեմա 11.** Վերաբերականներ. իմաստային խմբերը, կազմությունը, կիրառությունները: **Թեմա 12.**Ձայնարկություններ. տեսակները, կազմությունը և կիրառությունը: **Թեմա 13.** Շարահյուսություն. Նախադասություն,նախադասության հատկանիշները: **Թեմա 14.** Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի և ըստ կառուցվածքի: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ:

Դերբայական դարձված: Բարդ նախադասություն, տեսակները: Բարդ համադասական նախադասություն, տեսակները, առանձնահատկությունները: Բարդ ստորադասական նախադասություն, տեսակները, առանձնահատկությունները: **Թեմա 15.** Ուրիշի խոսք, կոչական, կետադրություն:

24/Բ64- Ռուսաց լեզու – 1 (2 կրեդիտ)
10 ժամ գործնական
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը
Ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները, ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը,զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա ռուսաց լեզվի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները, հաղորդակցման պայմաններին համապատասխան ընտրվող խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները, մասնագիտական բնագրերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:
Կկարողանա ընկալել, համառոտագրել և ընդլայնել տեքստի տեղեկատվությունը, մեկնաբանել տեքստը, փոխակերպել տեքստի ոճը, մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, տեղեկություն ներկայացնել և մասնակցել բանավեճերի, լուծել իրավիճակային խնդիրներ, կառուցել բանավոր և գրավոր խոսք:
Կտիրապետի ռուսաց լեզվով մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու կարողություններին, ռուսաց լեզվով դատողություններ անելու լուծումների նոր տարբերակներ առաջարկելու և դրանք հիմնավորելու հմտություններին:
Բովանդակությունը.

Тема 1. Основные фонетичекие и интонационные нормы русского языка. Речевые темы: Древнейшие племена. Народности и государства Армянского нагорья. Держава Тиграна II. Конец Арташесидов и утверждение в Армении династии Аршакидов. **Тема 2.** Лексические нормы русского языка. (Лексическое значение слова. Фразеологический оборот. Употребление синонимов, антонимов, паронимов. Лексическая омонимия.Архаизмы, историзмы, неологизмы). Нарушения лексических норм (тавтология, паронимия, плеоназм и т.д.). Речевые темы: Принятие христианства в Армении; Раздел Армении между Римом и Ираном; Падение древнеармянского государства; Месроп Маштоц и создание армянской письменности; **Тема 3**. Состав слова: основа слова и окончание, корень, суффикс, префикс. Речевые темы: Всенародное восстание 450 – 451 годов против Сасанидской Персии;

Царство Багратидов; Движение павликиан; Образование Киликийского армянского государства; **Тема 4**. Семантический потенциал аффиксов. Речевые темы: Завоевание Армении Османской Турцией и Сефевидской Персией; Книгопечатание; Армения в начале XIX века; Освобождение Восточной Армении от ханского ига. **Тема 5**. Имя существительное (лексико - грамматические разряды, род, число, падеж имен сушествительных); имя прилагательное (значение и грамматические признаки имени прилагательного; изменение имен прилагательных). согласование имён существительных и прилагательных. Речевые темы:Усиление национального гнёта; Возникновение Армянского вопроса. Резня западных армян в 1890-х годах;

24/Բ65- Ռուսաց լեզու – 2 (2 կրեդիտ)
10 ժամ գործնական
2-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը
Ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները, ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը ,զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա ռուսերենի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները, հաղորդակցման պայմաններին համապատասխան ընտրվող խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները, մասնագիտական բնագրերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:
Կկարողանա կիրառել մասնագիտական և հաղորդակցական ոլորտներին պատկանող բնագրերի ընթերցանության տեսակները (թռուցիկ, ընդհանուր բովանդակության ընկալման, որոնողական, մանրազնին), համառոտագրել և ընդլայնել բնագրի տեղեկատվությունը, մեկնաբանել այն, փոխակերպել բնագրի ոճը, դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, մասնակցել բանավեճերի:
Կտիրապետի ռուսաց լեզվով մասնագիտական թեմաներով հաղորդակցվելու կարողություններին, ռուսաց լեզվով դատողություններ անելու լուծումների նոր տարբերակներ առաջարկելու և դրանք հիմնավորելու հմտություններին:
Բովանդակություն
Тема 1. Глагол. Значение и грамматические признаки глагола: наречие, местоимение, числительное. Речевые темы: Военные действия на Кавказском фронте в 1914 – 1916 годах; Геноцид западных армян в 1915 – 1916 годах: Армения в 1918 – 1920 годах; **Тема 2.** Причастие. Деепричастие. Причастный и деепричастный обороты. Речевые темы: Советская Армения и зарубежные армяне; Республика накануне Великой

Отечественной войны: Прогрессивные силы зарубежных армян в борьбе против фашизма; **Тема 3.** Способы выражения синтаксических отношений, простое предложение, типы предложений по цели высказывания, главные члены предложения. Речевые темы: Достижения армянской советской культуры: Культурная жизнь республики: **Тема 4.** Способы выражения синтаксических отношений, сложное предложение, сочинительная связь, Речевые темы: Современная мировая экономика; Мир поздней Евразии: Зарождение современной экономики и современного общества; **Тема 5.** Сложное предложение, подчинительная связь, прямая речь, косвенная речь.

24/Բ30- Օտար լեզու – 1 (2 կրեդիտ)
10 ժամ գործնական
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է՝

1. ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել նրանց հաղորդակցական հմտությունները՝ մասնագիտական տերմինաբանությամբ հագեցած տեքստերի, աուդիոնյութերի ուսումնասիրության, քննարկումների, դերային խաղերի անցկացման և մասնագիտական ոլորտի վերաբերյալ բառապաշարի հարստացման միջոցով: ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները:
2. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. Անգլերենի քերականական և ոճական առանձնահատկությունները,
2. Մասնագիտական տեքստերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:
3. A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

Կկարողանա՝

1. Ընկալել և վերարտադրել կարդացած և ունկնդրած տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը:
2. Շարադրել խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան:
3. Կատարել A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն, փոխակերպել և մեկնաբանել տեքստը,
4. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, և հակիրճ ներկայացնել,

5. Կիրառել մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:

Կտիրապետի՝

1. Թարգմանություններ կատարելու հմտություններին:
2. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները և գործնական հմտությունները ամենօրյա իրավիճակներում և մասնագիտական գործընթացում:
3. Կիրառելու յուրացրած լեզվական բառապաշարը տարբեր իրավիճակներում:
4. Ստեղծագործաբար կիրառելու և զարգացնելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները:

Բովանդակություն

Unit 1. Where are you from? Introductions and greetings; names, countries, and nationalities. Text on specialty: "History of Athens" (part 1). Unit 2. What do you do? Jobs, workplaces, and school daily schedules; clock time. Unit 3. How much are these? Shopping and prices; clothing and personal items; colors and materials. Text on specialty: "History of Athens" (part 2). Unit 4. Do you play the guitar? Music, movies, and TV programs; free-time activities and excuses; dates and times. Text on specialty: "Mummies made in Egypt". Unit 5. What an interesting family! Talking about families and family members; physical descriptions and personality traits. Text on specialty: "The pen story". Unit 6. How often do you run? Sports, fitness activities, and exercise; routines.

24/Բ31- Օտար լեզու – 2 (2 կրեդիտ)
10 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

1. ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել նրանց հաղորդակցական հմտությունները՝ մասնագիտական տերմինաբանությամբ հագեցած տեքստերի, աուդիոնյութերի ուսումնասիրության, քննարկումների, դերային խաղերի անցկացման և մասնագիտական ոլորտի վերաբերյալ բառապաշարի հարստացման միջոցով:
2. Ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները:
3. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Անգլերենի քերականական և ոճական առանձնահատկությունները,

2. Մասնագիտական տեքստերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:
3. B 1 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

Կկարողանա՝

1. Ընկալել և վերարտադրել կարդացած և ունկնդրած տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը:
2. Շարադրել խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան:
3. Կատարել B1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն, փոխակերպել և մեկնաբանել տեքստը,
4. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, և հակիրճ ներկայացնել,
5. Կիրառել մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:

Կտիրապետի՝

1. Թարգմանություններ կատարելու հմտություններին:
2. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները և գործնական հմտությունները ամենօրյա իրավիճակներում և մասնագիտական գործընթացում:
3. Կիրառելու յուրացրած լեզվական բառապաշարը տարբեր իրավիճակներում:
4. Ստեղծագործաբար կիրառելու և զարգացնելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները:

Բովանդակություն

Unit 7. We went dancing! Free-time and weekend activities. Text on specialty: "Bells". Unit 8. How's the neighborhood? Stores and places in a city; neighborhoods, houses, and apartments. Unit 9. What does she look like? Appearance and dress; clothing and clothing styles; people. Unit 10. Have you ever been there? Past experiences; unusual activities. Text on specialty: "San Marino-ancient land of liberty". Unit 11. It's a really nice city. Cities; hometowns; countries. Text on specialty: "Alexander the Great". Unit 12. It's important to get rest. Health problems; medication and remedies; products in a pharmacy. Text on specialty: "Julius Caesar". Unit 13. What would you like? Food and restaurants.

22/Բ8- Գրաբար (3 կրեդիտ)
10 ժամ գործնական
3-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը

Դասընթացն ունի ճանաչողական և կիրառական ուղղվածություն: Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գրաբարի քերականական որոշ առանձնահատկություններին, սովորեցնել գրաբարյան տեքստերի ընթերցանության և թարգմանության առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. գրաբարի անցյալի և ներկայի հիմքերի, կրավորական ձևերի կազմության առանձնահատկությունները, բայական ժամանակաձևերի տարբերությունը
2. անվանական հոլովման առանձնահատկությունները
3. արտաքին և ներքին հոլովումների կազմության և թարգմանության առանձնահատկությունները
4. բնագրային թարգմանության առանձնահատկությունները

Կկարողանա՝

1. գործնականում տարբերակել գրաբարի անցյալի և ներկայի հիմքերը,
2. ցույց տալ կրավորական ձևերի կազմության առանձնահատկությունները,
3. տարբերակել գրաբարի բայական ժամանակաձևերը,
4. բնորոշել գրաբարի անվանական հոլովման տեսակները
5. գործնականում կատարել բնագրային բնագրերի թարգմանություն

Կտիրապետի գրաբարյան բնագրեր թարգմանելու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Գրաբարի անցյալ կատարյալի հիմքը, նրանից կազմվող ժամանակաձևերը: **Թեմա 2**. Խոնարհման տիպերը: Անցյալ կատարյալի հիմքի կազմությունը: **Թեմա 3**. Ներկա ժամանակաձևի կազմությունը, խոնարհումը: **Թեմա 4**. Ստորադասական 1-ին ապառնի: **Թեմա 5**. Կրավորականի կազմությունը: **Թեմա 6**. Թարգմանություններ: **Թեմա 7**. Անցյալ կատարյալի հիմքի կազմությունը և 2-րդ ապառնի: **Թեմա 8**. Բուն և արգելական հրամայական: Ժամանակաձևերի տարբերությունը: **Թեմա 9**. Անկատար անցյալ և անցյալ կատարյալ ժամանակաձև: **Թեմա 10**. Անվանական հոլովում: Պարզ և խառը հոլովումներ: **Թեմա 11**. Ի արտաքին հոլովում: Բնագրային թարգմանություն: **Թեմա 12**. Ու արտաքին հոլովում: Բնագրային թարգմանություն: **Թեմա 13**. Ի-Ա արտաքին հոլովում: Բնագրային թարգմանություն: **Թեմա 14**. Ի-Ա ներքին հոլովում: Բնագրային թարգմանություն:

23/Բ27-Հետազոտության մեթոդաբանություն (2 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

8-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել հետազոտություն կատարելու սկզբունքներին, ընդունված կանոններին, պահանջներին, զարգացնել մասնագիտական ոլորտում խնդրո առարկայի ուսումնասիրման կարողությունները: Ապահովել ինչպես ուսումնական, այնպես էլ ակադեմիական հետազոտական

աշխատանք (ռեֆերատ, կուրսային աշխատանք, բակալավրի ավարտական աշխատանք կատարելու, հոդված գրելու) հիմնական սկզբունքները, հետազոտական աշխատանքի պլանավորման կանոնները, աշխատանքին առաջադրվող կառուցվածքային և բովանդակային պահանջները, գիտական աշխատանքի էթիկայի նորմերը, տեղեկատվություն հավաքելու, ուսումնասիրելու, վերլուծելու, համեմատելու, ընդհանրացնելու, մեջբերումներ ու հղումներ կատարելու, եզրակացություններ ու առաջարկություններ ձևակերպելու, այնուհետև դրանք ամփոփ ու գրագետ ներկայացնելու եղանակները: Դասընթացը կօգնի ուսանողներին արդյունավետ պլանավորել իրենց հետազոտությունները, պատրաստել գիտականության սկզբունքներին և գիտական էթիկայի կանոններին համապատասխանող աշխատանքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա գիտական ճանաչողության հասկացությունը, հետազոտական աշխատանքի առանձնահատկությունները, ուսումնասիրության մեթոդները, տեղեկատվական աղբյուրների, մասնագիտական գրականության, վիճակագրական նյութի հետ աշխատելու կանոնները, հետազոտական աշխատանք կատարելու եղանակները, աշխատանքում հղումների կատարման կարգը:

Կկարողանա հիմնավորել թեմայի արդիականությունը, ներկայացնել ուսումնասիրության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրը, առանձնացնել հետազոտության հիմնական դրույթները, ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

Կտիրապետի հետազոտական աշխատանքի մեթոդներին, արդի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մասնագիտական հիմնախնդրի ուսումնասիրության ձևերին, եզրակացությունների ներկայացման գիտական ոճին:

Բովանդակություն

Ներածություն: Գիտական ճանաչողությունը: Գիտական ոճ: Առանձնահատկությունները:

Թեմա 1. Գիտական ճանաչողությունը, գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը: **Թեմա 2.** Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը: **Թեմա3.** Գիտահետազոտական աշխատանքների տարատեսակները: **Թեմա 4.** Գիտահետազոտական աշխատանք գրելու ընդհանուր սկզբունքները: Մասնագիտական աղբյուրների բացահայտման եղանակները: **Թեմա 5.** Փաստարկման ընդհանուր մեթոդաբանությունը և ակադեմիական ազնվությունը /Մ. Զաքարյանի «Ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները Հ. Մաթևոսյանի «Մեծամոր» էսսեում» հոդվածի օրինակով/: **Թեմա 6.** Հղումները գիտական հրապարակումներում: Հետազոտական աշխատանք կատարելիս առավել հաճախ հանդիպող հասկացությու ններ: **Թեմա 7.** Ռեֆերատը որպես տեքստի հիմնական տեղեկատվության սեղմ փոխադրություն:Կուրսային և ավարտական աշխատանքների տիտղոսաթերթի օրին

ակելի նմուշներ **Թեմա 8.** Գրավոր խոսք: Ծանոթագրություններ: Ներածություն: Հիմնական մաս: Եզրակացություն: Օգտագործված գրականության ցանկ:

24/Բ12- Կրոնագիտության հիմունքներ (2 կրեդիտ)
8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար
3-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը
Ուսանողներին տալ ընդհանուր համակարգված գիտելիքներ կրոնի, դրա պատմական դրսևորումների առաջացման, ձևավորման և զարգացման, հասարակակական և հոգևոր կյանքում դերակատարության մասին, տալ ընդհանուր գիտելիքներ աշխարհում գոյություն ունեցող կրոնների, դրանց, դասակարգման սկզբունքների, օրինաչափությունների, առանձնահատկությունների, Հայոց եկեղեցու հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ, ծանոթացնել ժամանակակից ավանդական և ոչ ավանդական կրոնների աշխարհայացքային և դավանաբանական հիմնարար սկզբունքներին և պաշտամունքային առանձնահատկություններին:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա կրոնի սահմանումը և կառուցվածքը, նրա տեղն ու դերը հասարակության մեջ, ժամանակակից կրոնների և կրոնների պատմական ձևերի ձևավորման ու զարգացման պատմությունը, ազգային և համաշխարհային կրոնների բնութագիրը, գլխավոր առանձնահատկություններն ու հիմնական գծերը,, ոչ ավանդական կրոնների առանձնահատկությունները և դասակարգումը, Հայոց եկեղեցու պատմությունը, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները, ՀՀ արդի կրոնական իրավիճակը:
Կկարողանա հասկանալ և վերլուծել կրոնական ու կրոնագիտական գրականությունը, սահմանել կրոն հասկացությունը և կրոնական տարբեր երևույթները, դասակարգել կրոնի բազմազան և տարատեսակ դրսևորումները, խմբավորել տարբեր կրոններ, բացահայտել և համակարգել ժամանակակից կրոնների աշխարհայացքային, ծիսապաշտամունքային, դավանաբանական առանձնահատկությունները, իրականացնել կրոնների համեմատական վերլուծություն և քննական արժևորում, դիտարկել և համեմատել տարբեր կրոններ:
Կտիրապետի ժամանակակից կրոնների աշխարհայացքային, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկություններին, կրոնների ուսումնասիրության մեթոդներն ու սկզբունքերը բացատրելու և լուսաբանելու հնարներին, կրոնագիտության արդի հիմնախնդիրներին:
Բովանդակություն
Թեմա 1. «Կրոնագիտության հիմունքներ» դասընթացի առարկան: **Թեմա 2.** Կրոնի պատմական ձևերը: **Թեմա 3.** Բուդդայականություն: **Թեմա 4.** Քրիստոնեություն: **Թեմա 5.** Իսլամ: **Թեմա 6.** Արդի կրոնական դենոմինացիաներն ու ներփակ հոսանքները: **Թեմա 7.** Արդի կրոնական իր վիճակը ՀՀ-ում:

23/Բ53- Տրամաբանության հիմունքներ (3 կրեդիտ)
8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար
2-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մի շարք տրամաբանական հիմնախնդիրների, կանոնների և օրենքների, որը կօգնի նրանց իրենց մասնագիտության ոլորտում կիրառելու և առավել շոշափելի արդյունքների հասնելու: Տրամաբանական գիտելիքը կնպաստի ուսանողի կանոնավոր մտածողության զարգացմանը, սեփական մտքերի կոնկրետ ներկայացմանը և հիմնավորմանը:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա տրամաբանության օրենքները և սահմանման ու բաժանման կանոնները, հասկացության կազմավորման ձևերը, մտահանգման տարատեսակները:
Կկարողանա վերլուծել և մեկնաբանել փաստերը, բացատրել մտքի կառուցվածքի տրամաբանական կանոններն ու օրենքները, ճշմարիտ եզրակացություններ ստանալ և հիմնավորել գիտական գիտելիքները:
Կտիրապետի բանավեճերի, ապացուցման, հերքման, քննադատության գործընթացներին, գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների կիրառմանը, կանոնավոր մտածողության հմտությունների, տրամաբանության օրենքների պահանջների կապակցմանը մասնագիտական առարկայի պահանջների հետ:
Բովանդակություն
Թեմա 1. Տրամաբանության առարկան: **Թեմա 2.** Հասկացության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 3.** Սահմանում և բաժանում: **Թեմա 4.** Դատողություն: **Թեմա 5.** Մտահանգում: **Թեմա 6.** Դեդուկտիվ մտահանգումներ: **Թեմա 7.** Ինդուկտիվ մտահանգում: **Թեմա 8.** Ապացուցում և հերքում: **Թեմա 9.** Վարկած: Գիտական տեսության տրամաբանական հիմքերը: **Թեմա 10.** Տրամաբանության օրենքները:

23/Բ54- Փիլիսոփայության հիմունքներ- (2 կրեդիտ)
12 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար
5-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնարար հարցադրումները, դրանց տեսական և գործնական նշանակությունները, տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում և աշխարհայացքի ձևավորման գործում: Փիլիսոփայական գիտելիքը հնարավորություն է ընձեռում խորությամբ ընկալելու և վերլուծելու շրջակա միջավայրն ու հասարակական հարաբերությունները, հստակ պատկերացում կազմել հասարակական կարծիքի, զարգացման առաջընթացի, հասարակական շահերի, պահանջմունքների վերաբերյալ և կանխատեսում անել զարգացման ուղղությամբ:

Սովորողը, ծանոթանալով փիլիսոփայական ուսմունքներին, հստակ պատկերացում է կազմելու մարդու էության և գոյության հիմնախնդիրների վերաբերյալ:
Հստակ կողմնորոշում կունենա ժամանակի և տարածության առարկայական պատկերացումների և գիտական ըմբռնման հարցում, ինչպես նաև մարդկային փոխհարաբերությունների, ճշմարիտի, արդարի, ստի և մոլորության խնդրի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա փիլիսոփայության գիտական-մեթոդաբանական, աշխարհայացքային, արժեբանական գործառույթները, ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման, տարբերակման սկզբունքները, քաղաքակրթական զարգացումների օրինաչափությունները և միտումները:

Կկարողանա պարզաբանել բնական և հասարակական գիտությունների գործառույթները, տարբերակել քաղաքակրթական հայեցակարգերն ու դրանց հարացույցերը, գնահատել փակ և բաց համակարգերի զարգացման առանձնահատկությունները, վերլուծել հասարակության պատմական զարգացման ուղիները:

Կտիրապետի փիլիսոփայության հիմնարար եզրույթներին, սկզբունքներին և նրանց տեսական ու գործնական նշանակությանը, կեցության, մարդկային գոյության իմաստի հիմնախնդիրներին:

Բովանդակություն

Թեմա 1. Փիլիսոփայության առարկայական տիրույթը և գործառույթները: **Թեմա 2.** Փիլիսոփայական մտքի զարգացման տրամաբանությունը: **Թեմա 3.** Գոյաբանություն: **Թեմա 4.** Փիլիսոփայական մարդաբանություն /անթրոպոլոգիա/: **Թեմա 5.** Հոգեկանի ծագման հիմնահարցը տեսական-գաղափարական տարասեռ համակարգերում: **Թեմա 6.** Իմացաբանություն: **Թեմա 7.** Սոցիալական փիլիսոփայություն:

21/Բ10- Իրավագիտության հիմունքներ (2 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ապահովել իրավագիտության հիմնարար դրույթների, պետության և իրավունքի ծագման ու գործառույթների, պատմական տիպերի և ձևերի, իրավունքի հիմնական ճյուղերի հիմունքների իմացություն, գիտելիքներ հաղորդել հասարակության պետաիրավական վերնաշենքի, սոցիալական կյանքի կազմակերպման պետաիրավական ձևերի ու կառուցակարգերի, հասարակության, պետության և իրավունքի բազմաթիվ ու բազմաբնույթ առնչությունների վերաբերյալ:

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մարդու իրավունքների և ազատությունների հասարակության պետաիրավական վերնաշենքի կառուցվածքի և գործառույթների իմացություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. իրավունքի և պետության ծագումն ու հիմնական հատկանիշները
2. իրավունքի և պետության գործառույթները
3. իրավունքի և պետության պատմական տիպերը
4. իրավունքի հիմնական ձևերը (աղբյուրները)
5. պետության ձևերը
6. մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները
7. հասարակության քաղաքական համակարգի կառուցվածքը և պետության դերը քաղաքական համակարգում
8. իրավունքի համակարգը կազմող ճյուղերի հիմունքները

Կկարողանա՝

1. սահմանել «իրավունք», «պետություն», «պետության պատմական տիպ», «պետության ձև», «իրավունքի համակարգ», «իրավանորմ», «իրավահարաբերություն» հասկացությունները
2. ներկայացնել իրավունքի և պետության ծագման նախադրյալները
3. բնութագրել իրավունքի և պետության հիմնական հատկանիշները
4. դասակարգել իրավունքի և պետության պատմական տիպերը
5. տարբերակել իրավունքի աղբյուրները
6. ներկայացնել պետության հիմնական ձևերը
7. դասակարգել իրավունքի և պետության գործառույթները
8. վերլուծել իրավունքի հիմնական ճյուղերը

Կտիրապետի՝

1. սահմանադրական իրավունքի հիմնական ինստիտուտներին
2. վարչական իրավունքի հիմունքներին
3. քաղաքացիական իրավունքի հիմունքներին
4. աշխատանքային իրավունքի հիմունքներին
5. բնապահպանական իրավունքի հիմունքներին
6. ընտանեկան իրավունքի հիմունքներին
7. ֆինանսական իրավունքի հիմունքներին
8. քրեական իրավունքի հիմունքներին
9. միջազգային իրավունքի հիմունքներին

Բովանդակություն

Թեմա 1. Իրավագիտության ուսումնասիրման առարկան և մեթոդները: **Թեմա 2.** Պետության և իրավունքի ծագումը: **Թեմա 3.** Պետության ծագման մասին հիմնական

ուսմունքները: **Թեմա 4.** Պետության հիմնական տարբերիչ հատկանիշները: **Թեմա 5.** Պետության և իրավունքի պատմական տիպերը: **Թեմա 6.** Պետության և իրավունքի ձևերը: **Թեմա 7.** Պետության գործառույթները: **Թեմա 8.** Պետական ապարատի հասկացությունը և կառուցվածքը: **Թեմա 9.** Սահմանադրական իրավունքի հիմունքներ: **Թեմա 10** Քաղաքացիական իրավունքի հիմունքներ: **Թեմա 11** Քրեական իրավունքի հիմունքներ: **Թեմա 12.** Աշխատանքային իրավունքի հիմունքներ: **Թեմա 13** Ընտանեկան իրավունքի հիմունքներ: **Թեմա 14** Վարչական իրավունքի հիմունքներ: **Թեմա 15** Ֆինանսական իրավունքի հիմունքներ: **Թեմա 16** Բնապահպանական իրավունքի հիմունքներ: **Թեմա 17** Ազգային եվ միջազգային իրավունք:

1.2. Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

23/Բ55- Քաղաքագիտության հիմունքներ (2 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

1. ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական հասկացություններին, քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին:
2. Սովորեցնել կողմնորոշվել բարդ և հակասական քաղաքական աշխարհում, ներկայացնել ու պաշտպանել սեփական հետաքրքրություններն ու շահերը, հարգելով մյուսների իրավունքները և շահերը:
3. Նպաստել ուսանողների մոտ քաղաքական իրականության, քաղաքական գործընթացների վերաբերյալ վերլուծական մտքի ձևավորմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Քաղաքական գիտության ձևավորումն ու զարգացումը,
2. քաղաքական գիտության առաջացման և զարգացման հիմնական փուլերը,
3. քաղաքական իշխանության էությունն ու բովանդակությունը, կառուցվածքը, լեգիտիմությունն ու լեգալությունը,
4. քաղաքական համակարգի էությունը և կառուցվածքը,
5. ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմների էությունն ու բնորոշ գծերը,
6. իրավական պետության էությունն ու հիմնական սկզբունքները,
7. քաղաքական կուսակցության էությունը, գործառույթները: Կուսակցական համակարգերի տիպաբանությունը,
8. քաղաքական գաղափարախոսության հասկացությունը, գործառույթները, հիմնական գաղափարախոսական հոսանքները,

9. քաղաքական կոնֆլիկտի էությունը, տիպերը, հաղթահարման ուղիները:

Կկարողանա՝

1. կատարել քաղաքագիտական վերլուծություններ,
2. կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում,
3. պատկերացում կազմել քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին
4. արտահայտել սեփական քաղաքական կարծիքը, անհրաժեշտության դեպքում միավորվել որևէ քաղաքական գաղափարի շուրջ:

Կտիրապետի՝

1. քաղաքագիտության առարկայի կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին
2. քաղաքագիտության տեսության և պատմության հիմնական հասկացություններին, սկզբունքներին,
3. հասարակական, քաղաքական ոլորտներում առկա տարբեր հիմնախնդիրներին, դրանք ներկայացնելու, բացահայտելու, վերլուծելու, քննարկելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան և օբյեկտը: **Թեմա 2.** Քաղաքագիտության տեսական-գաղափարական ակունքները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն: **Թեմա 4.** Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 5.** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ **Թեմա 7.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 8.** Քաղաքական կոնֆլիկտներ: **Թեմա 9.** Քաղաքական գաղափարախոսություն: **Թեմա 10.** Քաղաքական լիդերություն:

12/Բ28- Տնտեսագիտության հիմունքներ (3 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ տնտեսության զարգացման պատմական շրջաններում ձևավորված տնտեսական հարաբերությունների, տնտեսական կատեգորիաների և տնտեսական և իրավական օրենքների համակարգերի, շուկայական տնտեսության գործառնության միկրոտնտեսական և մակրոտնտեսական օրինաչափությունների մասին: Զարգացնել գիտելիքներ տնտեսագիտական հասկացությունների, դրանց վերլուծության կարևորության և պրակտիկայում դրանք կիրառելու արդյունքում ֆինանսների ձևավորման և դրանց վերաբաշխման ուղղությամբ: Ուսումնասիրել և զուգակցել տնտեսական և իրավական օրենքները:

Դրանք անհրաժեշտ են տնտեսավարող սուբյեկտների գործունեության գնահատման, համապատասխան իրավական դաշտի ապահովման և ձեռնարկատիրական

գործունեությունը վերահսկելու, ինչպես նաև ազատ մրցակցային պայմաններ ապահովելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա տնտեսական հարաբերությունների ժամանակակից տեսությունները, շուկայական տնտեսության զարգացման օրինաչափությունները, շուկայի հիմնական տարրերի գործողության մեխանիզմը, ձեռնարկատիրական գործունեության սկզբունքները և բիզնեսի կազմակերպման խնդիրները, պետության տնտեսական գործառութները, տնտեսության կարգավորման շուկայական և պետական մեխանիզմները, համաշխարհային տնտեսության զարգացման օրինաչափությունները և ազգային տնտեսության տեղն ու դերը:

Կկարողանա կողմնորոշվել, արտահայտվել տնտեսական հարաբերությունների ժամանակակից պրակտիկ քննարկումներում, վերլուծել, պատկերացնել շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների գործունեության նպատակներին և արդյունքներին հասնելու և շահույթ ստանալու առանձնահատկությունները,մեկնաբանել, բնութագրել տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը, մեկնաբանել, լուսաբանել տնտեսագիտական հասկացությունների, մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը բնակչության կենսամակարդակի բարձրացման և այդ գործում մարդկային կապիտալի դերի կարևորությունը, ներկայացնել, տարբերակել ազգային տնտեսության զարգացման համեմատական ցուցանիշներ և կիրառել այլ երկրների առաջավոր փորձը,տնտեսական կոնկրետ խնդիրների հետ կապված՝ բացահայտել, առանձնացնել թերությունները և գտնել ժամանակակից պայմաններում դրանց լուծման ուղիները:

Կտիրապետի փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական հաջողությունների հասնելու համար ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու և խմբային աշխատանքում իրեն դրսևորելու հմտություններին, պրակտիկ աշխատանքում տնտեսական պրոբլեմներ լուծելիս մասնակից դառնալուն, քննադատական մտածողություն ցուցաբերելուն,տնտեսական և իրավական օրենքների զուգակցմանը,նորմատիվային տնտեսագիտական մոտեցումների պրակտիկ կիրառմանը,

տնտեսական վերլուծություններ և հաշվարկներ կատարելու մեթոդների գործնական կիրառությանը, ֆինանսական, բյուջետային գիտելիքները առօրյա կյանքում օգտագործելու, հանրային կյանքին տեղեկացված և ակտիվ մասնակցելու, առաջացած խնդիրները լուծելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Տնտեսագիտության հիմունքներ առարկան և ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2.** Տնտեսագիտության ելակետային հասկացությունները: **Թեմա 3.** Շուկայական տնտեսություն: Շուկայի հիմնական տարրերը: **Թեմա 4.** Աշխատանքի և կապիտալի շուկաներ: **Թեմա 5.** Ձեռնարկատիրական

գործունեություն և շահույթ: **Թեմա 6.** Ազգային տնտեսության գնահատման հիմնական ցուցանիշները: **Թեմա 7.** Շուկայական տնտեսության ցիկլային զարգացումը: Գործազրկությունը և ինֆլյացիան: Եկամուտների բաշխման տեսությունը: **Թեմա 8.** Սպառում, խնայողություն, ներդրում: **Թեմա 9.** Դրամավարկային քաղաքականությունը և բանկային համակարգը: **Թեմա 10.** Ֆինանսական համակարգը և պետության ֆինանսական քաղաքականությունը:

23/Բ38- Մշակութաբանության հիմունքներ (3 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել կայուն գիտելիքներ մշակույթ հասկացության վերաբերյալ: Արմատավորվում է համակարգված պատկերացում մշակույթ հասկացության բաղադրիչների, գործընթացների և մեխանիզմների մասին: Դասընթացը բացահայտում է մշակութաբանության՝ որպես գիտության էությունը և տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում: Օգնում է ուսանողին հստակ պատկերացում կազմելու, թե ինչպես է առաջացել մշակույթը նախ որպես երևույթ, հոգևոր պահանջմունքի տարատեսակ, այնուհետև նպաստել մարդկային հասարակության առաջընթացին: Ծանոթանալով նախնադարից մինչ օրս տարբեր դարաշրջաններում տարբեր ժողովուրդների ու ազգերի կողմից ստեղծած մշակութային արժեքներին, հնարավորություն կունենա այն համադրելու հայ ժողովրդի կողմից ստեղծած մշակութային արժեքներին: Մշակութաբանության, որպես գիտության մեջ հայազգի մշակութաբանության Էդուարդ Մարգարյանի ներդրումը, մշակույթը որպես մարդկային գործունեության հատուկ կամ առանձնահատուկ գործունեություն դիտարկելը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա «Մշակույթ» հասկացության սահմանումները, մշակույթի առանձին բաղադրիչներն ու դրսևորումները:

Կկարողանա բացատրել մշակույթի կառուցվածքը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները, ներկայացնել համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունները, լուսաբանել մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները, զանազանել համաշխարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները:

Կտիրապետի արդի դարաշրջանում մշակութային գործոնի դերի աճի կարևորման հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Մշակութաբանությունը որպես գիտություն: Մշակույթի ըմբռնումը: Մշակույթ հասկացության ծագումը և բովանդակության պատմական զարգացումը: Մշակույթի սահմանումը և գործառույթները: Մշակույթի կառուցվածքը, հոգևոր և նյութական մշակույթ: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Հոգևոր գործունեության մշակութային ձևերը, մշակույթի ազգային և համամարդկային բնույթը, զանգվածային

և էլիտար մշակույթ, կրոնի, գիտության, արվեստի ու մշակույթի փոխկապակցվածությունը: **Թեմա 3.** Մշակույթ-բնություն-հասարակություն: Հասարակություն և մշակույթ, բնություն և մշակույթ, մշակույթ-արժեք-քաղաքակրթություն, քաղաքակրթության մասին արդի տեսությունները: **Թեմա 4.** Նախնադարյան հասարակության և Հին արևելքի մշակույթը: Նախնադարյան հասարակության պարբերացման հարցը: Օյկումեն: Հին Միջագետքի, Եգիպտոսի և Հնդկաստանի մշակույթները: **Թեմա 5.** Հին Հունաստանի և Հռոմի մշակույթը: Հին Հունաստանի մշակույթի զարգացման փուլերը, դասական շրջան: Հելլենիզմի մշակույթը և Հին Հռոմի մշակույթը: **Թեմա 6.** Միջնադարյան մշակույթը: Վերածննդի դարաշրջանի մշակույթը: Բյուզանդիայի մշակույթը: Եվրոպայի միջնադարյան մշակույթը: Կրթության համակարգի փոփոխությունը, համալսարանների հիմնումը /Բոլոնյան և Փարիզյան մոդելները/: Վերածնությունը Իտալիայում: Հյուսիսային վերածնունդ: Վերածնունդը Արևելքում: Արևելյան վերածննդի հարցը: **Թեմա 7**. Նոր դարաշրջանի մշակույթը /17-19-րդ դար/: 17-րդ դարի Եվրոպական մշակույթը: 18-րդ դ.մշակույթը, 19-րդ դարի մշակույթը: Ռուսական մշակույթի առանձնահատկությունները: **Թեմա 8.** Մշակույթը 20-րդ դարում: Մշակույթը որպես 20-րդ դարի պատմական իրադարձության անդրադարձ: Գեղագիտական նոր ըմբռնումների ու գեղարվեստական ուղղությունների ձևավորումը**:**

Թեմա 9. Հայկական մշակույթը պատմական զարգացման ընթացքում, ձևավորման նախադրյալները, համահայկական պետական համակարգի ձևավորումը և մշակույթը: Մշակույթը Արարատի թագավորությունում: Հայկական մշակույթը հելլենիզմի դարաշրջանում: Հայկական միջնադարյան մշակույթը: Նոր շրջանի հայկական մշակույթը:

2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ

2.1 Պարտադիր դասընթացներ

13/Բ52 – Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (3 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ‹‹Մարդ - բնական միջավայր›› համակարգում բնակչության անվտանգ կենսագործունեության ապահովումը: Տնտեսական գործունեության ընթացքում մարդը միշտ ենթարկվում է շրջակա միջավայրի բացասական երևույթների ազդեցություններին, ենթարկվում է արտադրական վնասվածքների, պետք է պատկերացնի և կարողանա ցանկացած իրավիճակում ճիշտ միջոցառումներ իրականացնել դրանց հետևանքները վնասազերծելու և նորմալ կենսագործունեության համար բավարար պայմաններ ստեղծելու համար: Դասընթացում մեծ տեղ է հատկացվում նաև աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծելու և իր հանգիստը կազմակերպելու գործընթացների գործընթացներին:

Դասընթացի նպատակն է ծանոթացնել առաջին օգնության հիմունքներին: Ստացված գիտելիքները հնարավարություն են տալիս բնութագրել արտակարգ պատահարը (իրավիճակը), որի դեպքում որոշակի տարածքում (աղետի գոտի, դեպքի վայր) խաթարվում է կարգավորված կենսագործունեությունը և արդյունքում առաջանում է առաջին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն; հասկանալ թե ով է տվյալ իրավիճակում տուժած: Դասընթացը հնարավարություն է ընձեռում արտակարգ իրավիճակներում կողմնորոշվել, ճիշտ որոշում կայացնել և իրադրությանը համապատասխանաբար օգնության քայլեր ձեռնարկել՝ ցուցաբերել առաջին օգնություն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա ճանաչել մարդու օրգանիզմի կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, հիմնավորել անվտանգ կենսագործունեության համար անհրաժեշտ ընդհանուր սանիտարատեխնիկական պահանջները, նկարագրել բնական միջավայրը և նրա աղտոտումը, լուսաբանել մարդու տեղը և դերը բիոսֆերայում,մթնոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները, ջրոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները, բնահող, նրա աղտոտումն ու հետևանքները, ներկայացնել բնական, տեխնածին, էկոլոգիական, անտրոպոգեն ծագման արտակարգ իրավիճակների էությունները և առանձնահատկությունները, նկարագրել արտակարգ իրավիճակները, վերլուծելու արտակարգ իրավիճակները և կազմակերպել իրադրությանը համապատասխան առաջին բուժօգնություն, արժևորելու առաջին բուժօգնության գիտելիքները և հմտությունները:

Կկարողանա կիրառել ստացած գիտելիքները ճիշտ կողմնորոշվել ցանկացած արտակարգ իրավիճակների պայմաններում զերծ մնալ սպասվելիք վտանգներից և օգնություն ցուցաբերել մյուսներին, իրականացնել պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից, հակահրդեհային պաշտպանություն, պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից, ներկայացնել իոնացնող ճառագայթների ազդեցությունից, էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից պաշտպանվելու ուղիները, լուսաբանել պաշտպանությունը աղմուկից, ինֆրա- և ուլտրաձայներից, թրթռոցներից (տատանումներից), վնասակար նյութերի ազդեցությունից, կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում, իրադրությանը համապատասխան օգնության քայլեր ձեռնարկել,

ցուցաբերել առաջին բժշկական օգնություն արտակարգ իրավիճակին:

Կտիրապետի կայուն զարգացման ռազմավարությանը անվտանգության կառավարման համակարգերին, արտակարգ իրավիճակների ընթացքում ձեռնարկվող քայլերին, անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից պաշտպանվելու հմտություններին,

քիմիական և ռադիոակտիվ վարակվածության գոտիներում մարդկանց անհատական պաշտպանական միջոցներին, վտանգված տեղանքում փրկարարական

աշխատանքներիռեժիմների, կատարել արհեստական շնչառություն, կատարել սրտի անուղղակի մերսում:

Բովանդակություն

Ներածություն: Թեմա 1. Մարդու օրգանիզմի բաղադրությունը, կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: **Թեմա 2.** Բնական միջավայրը և նրա աղտոտումը: **Թեմա 3.** Պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից: **Թեմա 4.** Հակահրդեհային պաշտպանություն: **Թեմա 5.** Պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից: **Թեմա 6.**Պաշտպանություն էլեկտրական հոսանքի ազդեցությունից: **Թեմա 7.** Իոնացնող ճառագայթների ազդեցությունից: **Թեմա 8.** Պաշտպանություն էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից: **Թեմա 9.** Պաշտպանություն աղմուկից, ինֆրա և ուլտրա ձայներից: **Թեմա 10.** Պաշտպանություն ճնշման տակ գտնվող համակարգերում առաջացող վտանգներից: **Թեմա 11.** Պաշտպանություն թրթռոցներից (տատանումներից): **Թեմա 12.** Պաշտպանություն վնասակար նյութերի ազդեցությունից: **Թեմա 13.** Հրատապ գործողությունների փուլերը: **Թեմա 14.** Սրտի աշխատանքի խանգարումներ: **Թեմա 15.** Արյունահոսություններ: **Թեմա 16.** Այրվածքներ: **Թեմա 17.** Թունավորումներ:

11/Բ51- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ (2 կրեդիտ)

6 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը

Ծանոթացնել ուսանողներին համակարգիչների, ծրագրավորման, ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիմնական հասկացություններին, համակարգիչների մինիմալ կառուցվածքին և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքին, Windows օպերացիոն համակարգին և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

Սովորեցնել Microsoft Office ծրագրային փաթեթի հիմնական կիրառական տեխնոլոգիաներով գործնական աշխատանքներ կատարելու հմտությունները՝MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը և աշխատանքը նրա հետ, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչը, օգտագործել MS Office փաթեթի Power Point ծրագրը շնորհանդեսներ պատրաստելու համար: Ծանոթացնել համացանցին և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա ինֆորմատիկայի տեսական հիմունքները, համակարգիչների տեխնիկական ապահովումը և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի հիմունքները, համակարգիչների ծրագրային ապահովման տեսակները, նշանակությունը և աշխատանքի սկզբունքները, MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչի և նրա աշխատանքի հիմունքները, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչի օգտագործման հիմունքները, Համացանցի

կիրառության, համացանցում մատուցվող ծառայություններից օգտվելու սկզբունքները:

Կկարողանա աշխատել «Windows»-ի միջավայրում, օգտագործել MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը՝ փաստաթղթերի ստեղծման և ձևավորման համար, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչը, MS Office փաթեթի Power Point խմբագրիչը՝ ներկայացումներ պատրաստելու համար, օգտվել համացանցից:

Կտրրապետի համակարգիչների կառուցվածքի և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի վերաբերյալ գիտելիքների, Windows օպերացիոն համակարգի և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին, MS Office փաթեթի Word տեքստային խմբագրի օգնությամբ փաստաթղթերի ստեղծման և ձևավորման հմտություններին, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրի օգտագործման հմտություններին, համացանցից օգտվելու և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

Բովանդակությունը

Թեմա 1. Ինֆորմատիկայի տեսական հիմունքները: **Թեմա 2.** Համակարգիչներ, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքները: **Թեմա 3.** Ալգորիթմներ, բլոկ-սխեմաներ, ծրագրեր, ծրագրային ապահովում: **Թեմա 4.** Windows օպերացիոն համակարգ, ընդհանուր տեղեկություններ: **Թեմա 5.** Microsoft Office ծրագրային փաթեթի հիմնական տեխնոլոգիաները: **Թեմա 6**. Համացանց:

2.2 Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

13/Բ5 – Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր (3 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը

Ուսանողներին պատկերացում տալ բնագիտության հայեցակարգերի վերաբերյալ ժամանակակից մոտեցումների մասին: Դասընթացը միտված է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության արդի ձեռքբերումների լուսաբանմանը: Դասընթացը բացատրում է կենդանի և անկենդան նյութի տարբերությունը, հնարավոր զարգացումները՝ կապված ինֆորմացիայի և ինֆորմացիոն փոխներգործության հետ: Տրված է կենսոլորտի կառուցվածքային առանձնահատկությունները, դրա առանձին բաղադրիչների միջև եղած կապերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա բնագիտության ժամանակակից հայեցակարգերը, դրանց վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, բնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքը, առաջացման

և զարգացման հայեցակարգերը, բնագիտության դերը աշխարհաընկալման գործընթացներում, հիմնավորել բնագիտության դերը արտադրության զարգացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում, տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները, արեգակնային համակարգի առանձնահատկությունները, երկիր մոլորակը, կենսոլորտը, որպես գլոբալ էկոհամակարգ:

Կկարողանա վերլուծել բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները, կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ, նկարագրել կենսոլորտի բաղադրիչների՝ /ջրոլորտ, քարոլորտ, մթնոլորտ/ փոխադարձ կապը և փոխպայմանավորվածությունը, հիմնավորել մատերիայի կենսաբանական կազմակերպվածության բնութագրերը, բացատրել երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները:

Կտիրապետի բնագիտական գիտությունների մեթոդաբանությանը և գործնական կիրառության հմտություններին, բնություն-կենսոլորտ-մարդ համակարգի փոխներգործության առանձնահատկություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Ժամանակակից բնագիտության գործառույթները, հայեցակարգերը, իմացության մեթոդաբանությունը: **Թեմա 2.** Բնափիլիսոփայության պատկերացումները և գիտական գիտելիքները Անտիկ աշխարհում և միջին դարերում: Վերածննդի դարաշրջանի և Նոր ժամանակի գիտական հեղափոխությունը: Վերածննդի դարաշրջանը և բնագիտական հայտնագործությունները: **Թեմա 3.** Տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները: Հասկացողություն տիեզերական մասշտաբների մասին: **Թեմա 4.** Արեգակնային համակարգի կառուցվածքը: **Թեմա 5.** Երկիր մոլորակը որպես բնագիտական հայեցակարգերի կարևորագույն օբյեկտ, երկրի կառուցվածքը և ձևը: **Թեմա 6.** Մթնոլորտ, կառուցվածքի և բաղադրամասերի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները **Թեմա 7.** Արեգակնային ճառագայթում, սպեկտրիալ բաղադրությունը: **Թեմա 8.** Ջրոլորտ, ջուրը և կյանքը: **Թեմա 9.** Երկրագնդի վրա օրգանական նյութերի **առաջացման** նախադրյալները: **Թեմա 10.** Արեգակնային ճառագայթման չափման մեթոդները: **Թեմա** 11. Երկրագնդի օդային թաղանթը, առանձնահատկությունները: **Թեմա 12.** Հողերի ֆիզիկաքիմիական հատկությունների որոշման մեթոդները: **Թեմա** 13. Ջուրը երկրի վրա և դրա հատկությունները: Ջրոլորտի էկոլոգիական հիմնահարցերը: **Թեմա 14.** Երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները

13/Բ25 – Սոցիոլոգիա (2 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիայի՝ որպես գիտության առանձնահատկություններին, գիտությունների համակարգում

սոցիոլոգիայի տեղին ու դերին, սոցիոլոգիայի աշխարհայացքային և էթիկական առանձնահատկություններին, ուսումնասիրության առարկային՝ հասարակությանը և դրա կառուցվածքին, սոցիոլոգիայի հիմնարար տեսություններին, մշակույթին և դրա տարրերին, ինչպես նաև հասարակության մեջ տեղի ունեցող մի շարք սոցիալական գործընթացներին ու առկա հիմնախնդիրներին: Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին սոցիոլոգիական գիտության ձևավորմանն ու զարգացմանը, առանցքային հասկացություններին և պարզաբանել սոցիալական աշ-խատանքի տարբեր բնագավառներում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա սոցիոլոգիական գիտելիքների ազատ կիրառության հիմնարար սկզբունքի, հասարակության սոցիալական կառուցվածքի, սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդների, դրանց առանձնահատկությունների և կիրառության, սոցիոլոգիական հետազոտությունների կատարման մեթոդների մասին:

Կկարողանա բնորոշել առօրյա կյանքի երևույթների և գործընթացների սոցիալական էությունը, կիրառել սոցիոլոգիայի տեսական մոտեցումները՝ հասարակության տարբեր գործընթացների, հիմնախնդիրների մեկնաբանման նպատակով, իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն:

Կտիրապետի սոցիոլոգիական աշխարհայացքի առանձնահատկություններին, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, սոցիոլոգիական հետազոտություններ կատարելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Սոցիոլոգիան որպես գիտություն. Սոցիոլոգիան որպես գիտություն. կայացման պատմությունն ու զարգացման առանձնահատկությունները: Սոցիոլոգիայի առաջացման նախադրյալները: Սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը և առարկան: Սոցիոլոգիայի մեթոդը: Սոցիոլոգիայի կառուցվածքը: Մակրո և միկրոսոցիոլոգիա: Սոցիոլոգիան և այլ գիտությունները: Սոցիոլոգիայի գործառույթները: **Թեմա 2. Ամերիկյան և ժամանակակից արևմտյան սոցիոլոգիան.** 1920-1940 թթ. էմպիրիկ սոցիոլոգիան: Թ. Փարսոնսի սոցիալական գործողության տեսությունը, սոցիալական համակարգերի հայեցակարգը: Ռ. Մերթոնի միջին մակարդակի տեսությունը և գործառական վերլուծությունը: Բախման տեսությունը: Դյուրգհեյմյան ավանդույթը ֆրանսիական սոցիոլոգիայում: Վեբերական և մարքսիստական ավանդույթները գերմանական սոցիոլոգիայում: Ժամանակակից արևմտյան սոցիոլոգիա: **Թեմա 3. Հասարակությունը որպես սոցիոլոգիական վերլուծության օբյեկտ.** Հասարակության մասին պատկերացումների ծագումը: «Հասարակություն» հասկացությունը հիմնական սոցիոլոգիական տեսություններում: Հասարակությունը որպես սոցիալական համակարգ: Հասարակության հիմնական հայտանիշները: Հասարակությունների տիպավորումը: «Սոցիալական կառուցվածք»

հասկացությունը: Մակրո և միկրոկառուցվածք: Սոցիալական խմբեր: **Թեմա4. Սոցիալական հաստատություններ և սոցիալական կազմակերպություններ.** «Սոցիալական հաստատություն» հասկացությունը: Սոցիալական հաստատությունների հիմնական հայտանիշները: Սոցիալական հաստատությունների տիպաբանությունը: Սոցիալական հաստատությունների գործառույթները: «Կազմակերպություն» հասկացությունը: Սոցիալական կազմակերպությունների ձևավորման մեխանիզմները: Սոցիալական կազմակերպության հիմնական հայտանիշները: Սոցիալական կազմակերպությունների տիպաբանությունը: **Թեմա 5. Սոցիալական շերտավորվածություն և սոցիալական շարժունություն.** Սոցիալական անհավասարության հիմնախնդիրը սոցիոլոգիայում: «Սոցիալական շերտավորվածություն» հասկացությունը: Շերտավորված համակարգերի տիպերը: Խորհրդային հասարակության սոցիալական շերտավորվածությունը: «Սոցիալական շարժունություն» հասկացությունը: Սոցիալական շարժունության հիմնական տեսակները: Սոցիալական շարժունության հիմնական ուղիներն ու մեխանիզմները: Սոցիալական շարժունության հիմնական չափանիշները: Սոցիալական շարժունությունը ԽՍՀՄ-ում և ժամանակակից հասարակության մեջ: **Թեմա 6. Անձի սոցիոլոգիական հիմնախնդիրները և սոցիալականացումը.** «Անձ հասկացությունը» և անձի տեսությունները: Անձի կառուցվածքը: Անձի տիպերը: Անձի գործառույթները, սոցիալական կարգավիճակը և սոցիալական դերերը: Հասարակության և անձի փոխազդեցությունը: Սոցիալականացման հասկացությունները և տեսությունները: Սոցիալականացման փուլերը: Սոցիալականացման գործակալները և ինստիտուտները: **Թեմա 7. Շեղված վարք.** «Սոցիալական նորմեր» հասկացությունը: Սոցիալական նորմերի տեսակները: Վարքի շեղման բացատրության հիմնական գիտական մոտեցումները: Շեղված վարք: Շեղված վարքի պատճառները: Վարքի շեղման հիմնական ձևերը: Սոցիալական հսկողության հիմնախնդիրները, հիմնական մեխանիզմներն ու մեթոդները: **Թեմա 8. Սոցիոլոգիական հետազոտություններ. կառուցվածքը, մեթոդիկան և տեխնիկան.** Սոցիոլոգիական հետազոտության փուլերն ու տեսակները: Սոցիոլոգիական հետազոտությունների ծրագիրը: Սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդները: Դիտարկման մեթոդը: Փաստաթղթերի վերլուծության մեթոդը: Փորձի մեթոդ: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների կիրառումը և վերլուծությունը:

3. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ

3.1 Պարտադիր դասընթացներ

23/Բ5- Ընդհանուր մանկավարժություն – 1 (3 կրեդիտ)
8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին գաղափար տալ մանկավարժության հիմնական հասկացությունների /դաստիարակություն, ուսուցում, կրթություն, զարգացում, ձևավորում և այլն/ մասին, բացահայտել ուսուցման և դաստիարակության հիմնահարցերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա մանկավարժության օբյեկտը, առարկան, խնդիրները, մանկավարժության հիմնական հասկացությունները՝ դաստիարակություն, կրթություն, ուսուցում, ուսուցման և դաստիարակության օրինաչափությունները, սկզբունքները, մեթոդները, միջոցները, կազմակերպման ձևերը և այլն, մանկավարժության դերը անձի ձևավորման գործում:

Կկարողանա ուսումնասիրել տարբեր առարկաների դասավանդման մեթոդիկաները, նախապատրաստվել դպրոցում անցկացվելիք մանկավարժական պրակտիկայի համար, կազմել դասի օրվա պլան, լսել, քննարկել և վարել դասեր, օգնել ուսուցիչներին կրթադաստիարակչական տարբեր հարցերում:

Կտիրապետի ուսուցչի մասնագիտության առանձնահատկություններին, մանկավարժական վարպետության հիմնական բաղադրիչներին՝ մանկավարժական տեխնիկա, կազմակերպիչ, դաստիարակ և այլն:

Բովանդակություն

Թեմա 1. Մանկավարժության առարկան, հիմնական հասկացություններն ու խնդիրները: **Թեմա 2.** Անձնավորության դաստիարակությունը, զարգացումը և ձևավորումը: **Թեմա 3**. Դպրոցականի անձի զարգացման և ձևավորման տարիքային փուլերը, դրանց համառոտ բնութագիրը: **Թեմա 4.** Մանկավարժական գործընթաց: **Թեմա 5.** Դիդակտիկան որպես գիտություն և ուսումնական առարկա: **Թեմա 6.** Կրթության բովանդակություն: Հայ ազգային կրթության տիպերը: **Թեմա 7.** Ուսումնական աշխատաքների կազմակերպման ձևերը, նրանց պատմական զարգացումը:

23/Բ6- **Ընդհանուր մանկավարժություն – 2 (3 կրեդիտ)**

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել դաստիարակության էությանը, նպատակին, խնդիրներին, շարժիչ ուժերին, կազմակերպման օրինաչափություններին, սկզբունքներին ու մեթոդներին: Ապագա մանկավարժին տեղեկացնել դպրոցի բարեփոխումների ներկա ռազմավարության մասին, նրանց նախապատրաստել առարկայական մեթոդիկաների ուսումնասիրման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. դաստիարակության էությունը,
2. դաստիարակության նպատակը, խնդիրները,
3. շարժիչ ուժերը, կազմակերպման օրինաչափությունները, ձևերը, սկզբունքները, մեթոդները,
4. ինքնադաստիարակության և վերադաստիարակության էությունը,
5. կոլեկտիվը որպես դաստիարակության օբյկետ և սուբյեկտ՝ կարևորելով դաստիարակության վերջնական արդյունքը:

Կկարողանա՝

1. ըմբռնել դաստիարակության նպատակը,
2. պատմական բնույթը,
3. հայ ազգային դաստիարակության բնորոշ կողմերը,
4. աշակերտական կոլեկտիվի օբյեկտ և սուբյեկտ լինելը, անձի զարգացման փուլերը, գնահատել ինքնադաստիարակության և վերադաստիարակության դերը մեր կյանքում:

Կտիրապետի՝

1. դաստիարակության օրինաչափություններին, սկզբունքներին,
2. մեթոդներին /գիտակցության ձևավորման, գործունեության կազմակերպման և խթանման/, հնարներին,
3. աշակերտական կոլեկտիվի զարգացման առանձնահատկություններին:
4. Սովորողների ինքնադաստիարակության և վերադաստիարակության հարցերում գործնական մոտեցում դրսևորելուն՝ կարևորելով ընտանեկան դաստիարակության դերը: /Ելնելով ժամանակակից հասարակական դրսևորումներից/:
5. Ուսանողը պետք է կարողանա որոշումներ ընդունել դաստիարակչական բնույթի տարբեր իրավիճակներում՝ ելնելով անձի տարիքային և անհատական առանձնահատկություններից:

Բովանդակություն

Թեմա 1. Դաստիարակության գործընթացի բովանդակությունը: **Թեմա 2.** Դաստիարակության տեխնոլոգիաներ և միջոցներ: **Թեմա 3.** Դաստիարակության մեթոդներ: **Թեմա 4**. Կոլեկտիվի ձևավորումն ու բնորոշ գծերը: **Թեմա 5.** Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը: ԹԵՄԱ 6. Դաստիարակության բաղադրատարրերը: **Թեմա 7.** Դաստիարակության հիմնահարցերը նորմատիվային փաստաթղթերում:

23/Բ40– Ներառական կրթության հիմունքներ (3 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

5-րդ, կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը մասնագիտական կրթության գործընթացում, ներառական կրթության ներդրման հետ կապված մանկավարժական հիմնախնդիրների, սկզբունքների, մեթոդների յուրացումն է:

Դասընթացի առաջին բաժնի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ներառական կրթության գաղափարական և օրենսդրական հիմքերին, հասկացություններին, պատմական զարգացման փուլերին ու առանձնահատկություններին:
Երկրորդ բաժնի նպատակն է զինել ներառականության միջավայրում անհրաժեշտ և հոգեբանամանկավարժական գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, նպաստել ներառական կրթության կազմակերպման մշակույթի ձևավորմանը, մասնագիտական և անձնային որակների ու կոմպետենտությունները զարգացմանը:
Երրորդ բաժինը նախատեսված է ներառական կրթության պայմաններում կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծման կարողությունների զարգացմանը՝ տարբեր գիտական մոտեցումների ու մեթոդների կիրառմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. մեկնաբանել ներառական կրթության էությունը, գաղափարախոսական հիմնադրությունները, օրենսդրական հիմքերն ու զարգացման հեռանկարները, հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները,
2. հիմնավորել ՀՈՒԱ շահերից բխող գործընթացների կազմակերպման մատահրավերներ,
3. վերլուծել ներառական կրթության կազմակերպման մանկավարժական մեթոդները,
4. ճանաչել մասնագիտական կոնսիլիումի անդամների միջև փոխհամագործակցության ու թիմային աշխատանքի կազմակերպման սկզբունքները,
5. վերլուծել ներառական գործընթացի մասնակիցների միջև հաղորդակցման առանձնահատկությունները:

Կկարողանա՝

1. կազմակերպել օրենսդրության ու ներառական կրթության գաղափարախոսությանը համապատասխան հաղորդակցման, ուսուցման, դաստիարարակության ու զարգացման միջավայր,
2. ձևավորել՝ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքների անհատական ուսումնական պլաններ (ԱՈՒՊ)՝ ըստ սովորողների կարիքների,
3. վերլուծել և կազմակերպել դրանց իրականացման ուղիները:

Կտիրապետի ԱՈՒՊ–ներով աշխատանքի մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմանը, անհատական մոտեցման սկզբունքներին: Բոլոր աշակերտներին ուսումնական գործընթացում լիարժեք ներառելու մանկավարժական և հոգեբանական միջոցների ու հնարների ընտրության հիմնավորմանն ու դրանց համապատասխան գործընթացների կազմակերպմանը:

Բովանդակություն

Թեմա 1. Ներառական կրթության էությունն ու գաղափարախոսական հիմքերը: **Թեմա 2.** Հատուկ և ներառական կրթության կազմակերպման ձևերը: **Թեմա 3**. Ներառականության գաղափարի պատմական զարգացման ակունքները: **Թեմա 4**. Ներառական մանկավարժության էությունը: **Թեմա 5.** Ներառական կրթության կազմակերպման գիտատեսական հայեցակարգ Ներառական կրթության կազմակերպման գիտատեսական հայեցակարգեր: **Թեմա 6**. Հոգեֆիզիկական զարգացման խանգարումների դասակարգումները: **Թեմա 7.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ ներառական մանկավարժական գործընթացի կազմակերպումը: **Թեմա 8**. Սովորողների կարիքների գնահատման մեթոդաբանությունը: Բնական ռեսուրսներ: Մարդկային ռեսուրսներ: Ալբերտ Մասլոուի պահանջմունքերի տեսությունը և բուրգը: **Թեմա 9**. Հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցման առանձնահատկությունները: Հոգեբանական զարգացման և բարոյական ինքնակատարելագործման պահանջմունքներ: **Թեմա 10.** Սովորողների դիտարկում և ուսումնական ունակությունների բացահայտում: Անհատական ուսումնական պլանի կազմում: SMART մեթոդը որպես ԱՈՒՊ-ի ձևավորման և նպատակադրման հիմք: Սովորողների դիտարկում և ուսումնական ունակությունների բացահայտում: Անահտական ուսումնական պլանի կազմում: SMART մեթոդը որպես ԱՈՒՊ-ի ձևավորման և նպատակադրման հիմք: **Թեմա 11**. ԿԱՊԿՈՒ երեխա ունեցող ընտանիքների առանձնահատկությունները, նրանց աջակցության հոգեբանամանկավարժական ուղիներն ու մեթոդները: **Թեմա 12**. Հոգեբանամանկավարժական դիագնոստիկ աշխատանքների կազմակերպման տրամաբանությունը, մեթոդներն ու գործիքները: **Թեմա 13**. ԿԱՊԿՈՒ երեխաների ուշադրության և հիշողության դիագնոստիկան և զարգացումը՝ որպես ուսումնական ունակությունների զարգացման հիմք: **Թեմա 14**. ԿԱՊԿՈՒ երեխաների մտածողության և երևակայության դիագնոստիկան և զարգացումը՝ որպես ուսումնական ունակությունների զարգացման հիմք: **Թեմա 15.** ԿԱՊԿՈՒ երեխաների բանավոր և գրավոր խոսքի զարգացման մակարդակի հետազոտություններ, հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդները: **Թեմա 16**. ԿԱՊԿՈՒ երեխաների անձնային առանձնահատկությունների և հուզական ոլորտի խնդիրների դիագնոստիկա և կարգավորման մեթոդներ:

23/Բ3- Ընդհանուր հոգեբանություն-1 (3 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

3-րդ կիսամյակ,ստուգարք

Դասընթացի նպատակն է նպաստել, որ ուսանողներն իմանան հոգեկանի կառուցվածքը. մանրամասն ուսումնասիրելով հոգեկանի գործընթացները, վիճակները, հուզակամային ոլորտը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. սահմանել հոգեբանություն գիտության զարգացման առարկան, խնդիրները, սկզբունքները, հետազոտման մեթոդները, հոգեբանության հիմնական հասկացությունները:
2. ճանաչել կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիական ինտեգրատիվ մակարդակները և ուղեղի գործունեության ֆունկցիոնալ համակարգը, հոգեկան երևույթների, գործընթացների ռեֆլեկտոր բնույթը, հոգեկանի կառուցվածքը:

Կկարողանա՝

1. բնորոշել մարդու հոգեկան երևույթների առանձնահատկությունները:
2. օգտագործել համապատասխան մեթոդներ, մեթոդիկաներ:
3. նախագծել մասնագիտական գիտելիքների, հմտությունների զարգացում:

Կտիրապետի՝ հոգեբանություն գիտության ժամանակակից տեսական հայեցակարգերին, մոտեցումներին, հոգեբանական հետազոտման մեթոդների կիրառմանը:

Բովանդակություն

Թեմա 1. Ընդհանուր հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2**. Հոգեբանության զարգացման փուլերը: **Թեմա 3.** Հոգեբանության ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 4.** Հոգեկանի կառուցվածքը: **Թեմա 5.** Հոգեկանի գործընթացները: **Թեմա 6.** Հուզակամային ոլորտ: **Թեմա 7.** Պահանջմունքներ և նպատակներ: **Թեմա 8.** Հոգեկանի վիճակները. Տրամադրություն, աֆֆեկտ, կիրք, սթրես: **Թեմա 9.** Սթրեսի առանձնահատկությունները, տեսակները, փուլերը: **Թեմա 10.** Հետտրավմատիկ սթրես, Դեպրեսիա:

23/Բ4- Ընդհանուր հոգեբանություն-2 (3 կրեդիտ)

8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար

4-րդ կիսամյակ,քննություն

Դասընթացի նպատակն է ներկայացնել տարիքային շրջափուլերը, տարիքային առանձնահատկությունները: Հասնել այն բանին, որ սովորողները զանազանեն և ուսումնասիրեն անհատական տարբերությունները: Կարողանան ստացված գիտելիքները կիրառել իրենց մասնագիտական գործունեության ոլորտներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա անձի ձևավորման տարաբաժանման առանձնահատկությունները:

Կկարողանա ներկայացնել և միմյանցից զանազանել տարիքային շրջափուլերը և յուրաքանչյուր տարիքին բնորոշ Ճգնաժամերը:

Կտիրապետի անհատական տարբերությունների և տարիքային առանձնահատկությունների մասին առկա գիտելիքների կիրառման մեթոդներին իրենց մասնագիտական ոլորտներում:

Բովանդակություն

Թեմա 1. Տարիք հասկացության մեկնաբանումը: **Թեմա 2.** Տարիային շրջափուլեր: Ճգնաժամեր: **Թեմա 3.** Հոգեսեքսուալ զարգացման փուլերը: **Թեմա 4.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 0-3 տարեկան: **Թեմա 5.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 3-7 տարեկան: **Թեման 6.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 7-11 տարեկան: **Թեմա 7.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. դեռահասություն: **Թեմա 8.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. ծերություն: **Թեմա 9.** Անհատական տարբերություններ. խառնվածք, բնավորություն, անձնային որակներ, գծեր: **Թեմա 10.** Մտավոր ունակություններ: **Թեմա 11.** Ընդունակություններ. օժտվածություն, տաղանդ, հանճար:

23/Բ45 –Պատմության դասավանդման մեթոդիկա -1 (5 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար
5-րդ, կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին ուսուցանել կողմնորոշվելու պետական չափորոշիչներում, ծրագրերում ուսումնական և մեթոդական ձեռնարկներից օգտվելիս, ուսումնական նյութը մոդելավորել, հաշվետվություններ կազմել, պատմության դասընթացի ժամանակ ուսումնական նյութը վերլուծել, ուսանողներին հանրակրթական դպրոցներում գործնական աշխատանքի նախապատրաստել:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. «Մեթոդիկա», «մեթոդ» և «պատմության դասավանդման մեթոդիկա» հասկացությունները: ՈՒսուցչի և աշակերտի ուսումնական գործունեության արդյունավետության որոշումը:
2. Դպրոցում պատմության ուսուցման նպատակները, խնդիրները, գիտական հիմնավորումներն ու պատմական կրթության բովանդակության որոշումը:
3. 1920-1990-ական թթ. բարեփոխումները և պատմական կրթությունը: Դպրոցական պատմական կրթության ժամանակակից հասկացության համակարգը: Դպրոցական պատմական կրթությանը ներկայացվող պահանջները: Պատմական գիտելիքների կառուցվածքը:
4. 1990-ական թ. բարեփոխումները և պատմական կրթությունը: Դպրոցական պատմական կրթության ժամանակակից հասկացության համակարգը: Դպրոցական պատմական կրթությանը ներկայացվող պահանջները: Պատմական գիտելիքների կառուցվածքը:
5. Դպրոցական պատմության դասագրքի բնութագիրն ու նրա բաղադրամասերը: Պատմության դասերի ընթացքում դասագրքերի հետ աշխատանքի ընդհանուր համակարգը:ՈՒսուցման մեթոդները կամ ուսումնական գործունեության միջոցները: Մեթոդների դասակարգումը:

6. Փաստերը պատմության ուսուցման ընթացքում: Իրադարձություններ: Երևույթներ: Գործընթացներ:
7. Պարզաբանում: Դատողություն: Բնութագրում: Ապացուցում: Համեմատական և ընդհանրական բնութագրումներ:
8. Դպրոցականների հմտությունների և ունակությունների դասակարգումը հոգեբանա-մանկավարժական գրականության մեջ: Ընդհանուր ունակությունների դասակարգումը (ուսումնա-կազմակերպչական, խոսակցական (գրավոր և բանավոր), ուսումնա-տեղեկատվական, ուսումնա-մտավոր):
9. Ճննական ուսուցման տեսակները:
10. Պատմական քարտեզների ընդհանուր բնութագիրը: Պատմական քարտեզների տարբերությունները աշխարհագրական քարտեզներից: Քարտեզների առաջացման անհրաժեշտությունը:
11. Ժամանակագրության դերն ու գործառույթները հանրակրթական դպրոցում: Ժամանակագրության ուսուցման նպատակը դպրոցում: Պատմական թվերի ուսուցման կարևորության որոշումը:
12. Կարծիքներ հոգեբանա-մանկավարժական գրականության մեջ պատմական փաստաթղթերի վերաբերյալ: Պատմության ներկայացման ճշմարտացիությունն ու հավաստիությունը:
13. ՈՒսուցչի կողմից գրքերի տարաբնույթ օգտագործման եղանակները: Պատմական գրականության ընթերցանության աստիճանը: Ավանդական ընթերցանության թերությունները: Ընթերցանության ձևերը, եղանակներն ու հնարները: Սողորողների կողմից պատմության դասերի ընթացքում գրքերի տարաբնույթ օգտագործման ուսուցման մեթոդները:

Կկարողանա՝

1. ըմբռնել պատմությունը՝ որպես գիտություն և ուսումնական առարկա, մեթոդիկայի տեղն ու դերը դպրոցական պատմական կրթության գործընթացում:
2. Պլանավորել և իրականացնել դասի նախապատրաստական աշխատանքները հիմնական և ավագ դպրոցներում և կանխատեսել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները:

Կտիրապետի՝

1. Սահմանել պատմության ուսուցման նպատակները, խնդիրները, տալ գիտական հիմնավորումներն:
2. Պատմության դասավանդման հետազոտման մեթոդներին, մանկավարժական գործընթացի ախտորոշման և գնահատման մեթոդիկային, գիտելիքների հաղորդման, ուսուցման տեխնոլոգիաներին, դպրոցի կառավարման աստիճանական մասնակցությանը:
3. Պլանավորել և իրականացնել դասի նախապատրաստական աշխատանքները հիմնական և ավագ դպրոցներում:

4. Պատմության դասավանդման հետազոտման մեթոդներին, մանկավարժական գործընթացի ախտորոշման և գնահատման մեթոդիկային, գիտելիքների հաղորդման, ուսուցման տեխնոլոգիաներին, դպրոցի կառավարման աստիճանական մասնակցությանը:

Բովանդակություն

Թեմա 1. Պատմության դասավանդման մեթոդիկան՝ որպես մանկավարժական գիտություն: Պատմության դասավանդման մեթոդիկայի առարկան, խնդիրները և հիմնական գործառույթները: **Թեմա 2.** Պատմական կրթության զարգացումը ԽՍՀՄ-ում 1920-1990 թվականներին: **Թեմա 3.** Պատմական կրթության նպատակները, կառուցվածքը և ուսումնա-դաստիարակչական խնդիրները ժամանակակից հայկական դպրոցում: **Թեմա 4.** Դասագիրքը որպես գիտելիքների կարևորագույն աղբյուր և ուսուցման միջոց: Ուսուցման եղանակների բազմազանությունը: **Թեմա 5.** ՈՒսուցման մեթոդներն ու եղանակները: Մեթոդների բազմազանությունը: **Թեմա 6.** Պատմական նյութի կառուցվածքը և նրա ուսուցման եղանակները: **Թեմա 7**. Պատմական տեսական ուսումնական նյութի ուսումնասիրությունը: **Թեմա 8**. Սովորողների հմտությունները և ուսումնական աշխատանքի եղանակները: **Թեմա 9.** Ճնշականությունը պատմության ուսուցման ընթացքում: **Թեմա 10.** Քարտեզների դերն ու նշանակությունը պատմության դասավանդման ընթացքում: **Թեմա 11.** Ժամանակագրության ուսուցումը պատմության դասերին: **Թեմա 12.** Պատմական փաստաթղթերի՝ որպես պատմական գիտելիքների սկզբնաղբյուրների ուսուցումը:

23/Բ46–Պատմության դասավանդման մեթոդիկա- 2 (6 կրեդիտ)

18 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար

6-րդ, կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ապագա մանկավարժների տեսական և գործնական նախապատրաստումը, նրանց կողմից մանկավարժական գործունեության էության ճանաչումը, մանկավարժական, հոգեբանական և մեթոդական հմտությունների և ունակությունների ձեռքբերումը և պատմություն մասնագիտությամբ մանկավարժական գործունեության նախապատրաստումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. դաս հասկացության բնորոշումը: Դասի կառուցվածքային բաղադրամասերը և նախապատրաստման հիմնական պայմանները: Դասերի տիպերն ու նրանց դասակարգումը մեթոդա-մանկավարժական գրականության մեջ: Դասավանդման ձևերն ու դասի տիպերը: Դասերի դասակարգումն ու դրանց էությունը: Առաջավոր մեթոդի դերը նույն տիպի, սակայն տարբեր տեսակի դասերում:
2. Դպրոցական դասախոսության տեղը ուսումնական գործընթացում և դրա տեսակները: Դպրոցական դասախոսության թեմաների ընտրություն ու նրա

անցկացումը: Երկխոսությունների կազմակերպումը դպրոցական դասախոսության ժամանակ և դրանց արդյունավետության որոշումը: Սովորողների կողմից դասախոսությունների համառոտագրման ուսուցման մեթոդիկան ու նշանակությունը:

3. Պատմության դասերին ներկայացվող պահանջները: Ինչպե՞ս նախապատրաստվել պատմության դասերին: Համապատասխան փաստաթղթերի, նյութերի առկայություն: Թեմատիկ պլանավորում, համապատասխան դասարանի սովորողների ճանաչողական խնդիրների լուծում: Կիսամյակային, ամսական, օրվա պլաններ, դրանց նպատակներն ու ներկայացվող պահանջները: ՈՒսուցչի կողմից տրվող հարցերի նպատակը, դերն ու նշանակությունը:
4. Նորարարական դասեր: Գիտելիքների կոդավորման գաղափարը: Նորարար ուսուցիչներն ու նրանց դերը ուսուցման զարգացման գործընթացում:
5. Ինչ է ինտերակտիվ մեթոդը, ինչպես գործածել: Բազմաբնույթ մտածողության տեսակները:

Կկարողանա՝

1. Բացահայտել սովորողների գիտելիքների և ունակությունների ստուգման ձևերն ու եղանակները :
2. Գործնական պարապմունքների ժամանակ հարցերի էության բացահայտումը: Պատմության դասերի էվրիստիկական ձևերը՝ բանավեճային դասեր: Այլընտրանքային և հակասական իրավիճակներ:
3. Որո՞նք են պատմական գլխավոր փաստերը, ինչու՞ են նրանք կազմում դասի բովանդակության հիմնական փաստային մասը: Ինչու՞ են պատմական գլխավոր փաստերից բխում հիմնական եզրակացություններն ու ընդհանրացումները: Պատմական փաստերի տեսականորեն անհավասար վիճակը: Գլխավոր, կարևոր և երկրորդական փաստերի առանձնացման յուրահատկությունները:
4. Պլանավորել և իրականացնել դասի նախապատրաստական աշխատանքները հիմնական և ավագ դպրոցներում, սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների կանխատեսել
5. Ինտերակտիվ մեթոդների կիրառումը պատմության դասավանդման ընթացքում:
6. Բազմաբնույթ մտածողության տեսակների կիրառումը պատմության դասավանդման ընթացքում:

Կտիրապետի՝

1. մոդուլային դասերին, դրանց էությունն ու առանձնահատկություններին:
2. Ճշմարտության համեմատությունների միջոցով հասնել և հակասությունների տրամաբանության:
3. Միջառարկայական դասերի աբցկացմանը: Խմբային ուսուցման: Պատմության ուսուցման ստուգարքային համակարգին:

4. Դասի համառոտագրության հասկացության պարզաբանմանը: Դասի համառոտագրմանը և օրվա պլանի, նրանց անհրաժեշտությանն ու նշանակությանը: Ընդարձակ և համառոտ պլաններ, դրանց առանձնահատկություններին ու նմանություններին: Պլանների կազմման աղյուսակային և գրավոր ձևերին: Աշխատանքային տետրերին:
5. Պատմության դասավանդման հետազոտման մեթոդներին, մանկավարժական գործընթացի ախտորոշման և գնահատման մեթոդիկային, գիտելիքների հաղորդման, ուսուցման տեխնոլոգիաներին, դպրոցի կառավարման աստիճանական մասնակցությանը:
6. Ներառարկայական և միջառարկայական կապերի միջոցով դասի վարման ընթացքի պլանավորման, իրականացմանը:
7. Բազմաբնույթ մտածողության տեսակների միջոցով դասի վարման ընթացքի պլանավորում, իրականացում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Պատմության դասերի տեսակներն ու ուսուցման ձևերը միջին դպրոցում: **Թեմա 2**. ՈՒսումնական պարապմունքները բարձր դասարաներում: **Թեմա 3.**ՈՒսուցչի նախապատրաստվելը պատմության դասերին: **Թեմա 4.** Նորարարությունները պատմության դասավանդման ընթացքում:

23/Բ46/1–Պատմության դասավանդման մեթոդիկա- 3 (6 կրեդիտ)

10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

7-րդ, կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ապագա մանկավարժների տեսական և գործնական նախապատրաստումը, նրանց կողմից մանկավարժական գործունեության էության ճանաչումը, մանկավարժական, հոգեբանական և մեթոդական հմտությունների և ունակությունների ձեռքբերումը և պատմություն մասնագիտությամբ մանկավարժական գործունեության նախապատրաստումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Ինչ է ինտերակտիվ մեթոդը, ինչպես գործածել:
2. Ինչ են իրենիցից ներկայացնում ներառարկայական և միջառարկայական կապերը:
3. Բազմաբնույթ մտածողության տեսակները:

Կկարողանա՝

1. Ինտերակտիվ մեթոդների կիրառումը պատմության դասավանդման ընթացքում:
2. Ներառարկայական և միջառարկայական կապերի կիրառումը պատմության դասավանդման ընթացքում:

3. Բազմաբնույթ մտածողության տեսակների կիրառումը պատմության դասավանդման ընթացքում:

Կտիրապետի՝

1. Ինտերակտիվ մեթոդներով դասի վարման ընթացքի պլանավորմանը, իրականացմանը:
2. Ներառարկայական և միջառարկայական կապերի միջոցով դասի վարման ընթացքի պլանավորմանը, իրականացմանը:
3. Բազմաբնույթ մտածողության տեսակների միջոցով դասի վարման ընթացքի պլանավորմանը, իրականացմանը:

Բովանդակություն

Թեմա 1. Պատմության ուսուցման ինտերակտիվ /փոխներգործուն մեթոդները: **Թեմա 2.** Ներառարկայական, միջառարկայական կապերի հաստատումը պատմության դասավանդման ժամանակ: **Թեմա 3.** Բազմաբնույթ մտածողության տեսակաները և նրա կիրառումը պատմության ուսուցման ընթացքում:

23/Բ22 –Հայոց պատմություն-1 (5 կրեդիտ)

12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համակողմանի և ամբողջական գիտելիքներ հայ ժողովրդի հնագույն, հին և միջին շրջանների քաղաքական, տնտեսական և մշակույթային պատմության, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի, էթնիկ հիմնահարցերի, վարչական բաժանումների, քաղաքների պատկերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա հայոց պատմության հնագույն, հին և միջին շրջանների ամբողջական և համակողմանի պատմությունը**,**

կկարողանա վերլուծել, պարզաբանել, դասակարգել հայոց հնագույն, հին և միջին շրջանների պատմությունը**,**

կտիրապետի հնագույն, հին և միջին շրջանների պատմության դասընթացին, կիրառել ձեռքբերված գիտելիքները պատմական նյութը ուսումնասիրելիս:

Բովանդակություն

Թեմա 1. Ներածություն: **Թեմա 2.** Համայնական հասարակությունը Հայկական լեռնաշխարհում: **Թեմա 3.** Ուրարտու (Արարատյան թագավորություն): **Թեմա 4.** Հայ ժողովրդի կազմավորումը: **Թեմա 5.**Երվանդունիների թագավորությունը (Մ.թ.ա. VIIIդարեր): **Թեմա 6.** Հայկական թագավորությունների անկախության վերականգնումը.Աշտաշեսյանների թագավորությունը: **Թեմա 7.** Հայաստանը՝ աշխարհակալ տերություն: **Թեմա 8.** Պայքար պետականության ամրապնդմանհամար՝ Տիգրան Մեծի հաջորդների օրոք: **Թեմա 9.** Արշակունիների

թագավորությունը Հայաստանում I-III դարերում: **Թեմա 10.** Հասարակական-տնտեսական հարաբերությունները Հայաստանում մ.թ.ա. II -մ.թ. III դարերում : **Թեմա 11.** Հայկական մշակույթը մ.թ.ա. II - մ.թ. IIIդարերում: **Թեմա 12.** Ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը Հայաստանում: **Թեմա 13.** Մեծ Հայքի թագավորությունը IV դարում և Vդարի առաջին երեսնամյակում: Թեմա 14. Ազատագրական պատերազմները հինգերորդդարում: **Թեմա 15.** Հայաստանը VI դարում: **Թեմա 16.** Հայաստանը VII դարում: **Թեմա 17.** Հայ ժողովրդի ազատագրական պայքարըարաբական տիրապետության դեմ VIII-IXդարերում: **Թեմա 18.** Աղանդավորական շարժումներըՀայաստանում I\/–IX դարերում: **Թեմա 19**. Հայկական մշակույթը IV–IX դարերում:

23/Բ23 –Հայոց պատմություն-2 (5 կրեդիտ)
12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
2-րդ, կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել միջնադարում հայոց պետականության գլխավոր փուլերի, հայոց բանակի ու հայ զինվորականության դերի, հայ եկեղեցու և պետության փոխհարաբերությունների, զարգացած ավատատիրության և ուշ միջնադարյան դարաշրջանների առանձնահատկությունների վերաբերյալ:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա հայոց միջնադարյան պետականության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին**,**
Կկարողանա պատկերացնել հայ իրականության մեջ զարգացած ավատատիրական հարաբերությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
Կտիրապետի պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողությունների:
Բովանդակություն
Թեմա 1. Հայաստանի անկախության վերկանգնումը: Բագրատունիների թագավորությունը: **Թեմա 2.** Հայոց թագավորությունը խաղաղ զարգացման և տնտեսական վերելքի ժամանակաշրջանում: **Թեմա 3.** Բագրատունյաց թագավորության թուլացումը և անկումը: **Թեմա 4.** Թոնդրակյան շարժումը և գյուղացիական ելույթները Հայաստանում IX-XI դարերում: **Թեմա 5.** Հասարակական-տնտեսական հարաբերությունները և պետական կարգը IX-XI դարերում: **Թեմա 6.** Հայ ժողովրդի պայքարը սելջուկ-թուրքերի դեմ: **Թեմա 7.** Հյուսիս-արևելյան Հայաստանի ազատագրումը. Զաքարյանների իշխանությունը: **Թեմա 8.** Հայաստանը մոնղոլական նվաճումների ժամանակաշրջանում: **Թեմա 9.** Կիլիկիայի հայկական պետությունը: **Թեմա 10.** Հայկական մշակույթը IX-XIV դարի կեսերին: **Թեմա 11.** Հայկական գաղթավայրերը (IX -XIV դարի կեսեր): **Թեմա 12.** Հայաստանը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում: **Թեմա 13.** Վարչական կարգը և

հասարակական տնտեսական հարաբերությունները Հայաստանում (XIV դարի կեսեր - XVII դարի կեսեր): **Թեմա 14.** Հայ ազատագրական շարժման առաջին քայլերը: **Թեմա 15.** Հայկական գաղթավայրերը (XIV դարի կեսեր–XVII դարի կեսեր): **Թեմա 16.** Հայկական մշակույթը (XIV դարի կեսեր - XVIIդարի կեսեր):

23/Բ24 –Հայոց պատմություն-3 (6 կրեդիտ)
16 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
3-րդ, կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմն ընդգրկող ժամանակաշրջանի հայոց պատմության առանձնահատկությունների, հայ ազգային-ազատագրական պայքարի, Հայաստանի հասարակական-տնտեսական ու մշակութային կյանքի վերաբերյալ:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա հայ ազատագրական պայքարի պատմությունը, գիտելիքներ կունենա Հայաստանում ռուսական տիրապետություն հաստատելու վերաբերյալ:
Կկարողանա հասկանալ Արևելյան Հայաստանում ռուսական տիրապետության հաստատման պատմական նշանակությունը:
Կտիրապետի պատմական փաստերը համադրելու և ինքնուրույն վերլուծության ենթարկելու որոշակի հմտության, երևույթները համակողմանի գնահատելու կարողության:
Բովանդակություն
Թեմա 1. Հայկական հարց: Առաջացումը, բովանդակությունը: **Թեմա 2.** Ազատագրական պատերազմները 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 3.** Ազատագրական պատերազմները Արցախում և Սյունիքում: **Թեմա 4.** Հայ ազատագրական շարժումները 18-րդ դարի երկրորդ կեսին: **Թեմա 5.** 1804-1813թթ. ռուս-պարսկական և 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմները: **Թեմա 6.** 1826–1828թթ. ռուս-պարսկական և 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմները: **Թեմա 7.** Արևմտյան և Արևելյան Հայաստանների քաղաքական և սոցիալ-տնտեսական դրությունը 1830-1860-ական թվականներին: **Թեմա 8.** Արևմտահայերի ցեղասպանությունը թուրքական ծրագրի կենսագործման սկիզբ:

23/Բ25 –Հայոց պատմություն-4 (6 կրեդիտ)
16 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
4-րդ, կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է ներկայացնել հայոց պատմության նոր ժամանակաշրջանի՝ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից մինչև 1918թ. ընդգրկող հիմնախնդիրները, որը հնարավորություն կտա ձևավորել հայոց նոր պատմության իմացություն՝ բազմաթիվ նորահայտ նյութերի ներկայացման և մեկնաբանման միջոցով:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա ներկայացվող ժամանակաշրջանի նոր պատմության հիմնախնդիրները:

Կկարողանա համակողմանիորեն վերլուծել ազատագրական պայքարը, Հայկական հարցի առաջացումը և բովանդակությունը:

Կտիրապետի պատմական փաստերը համադրելու և ինքնուրույն վերլուծության ենթարկելու որոշակի հմտության, երևույթները համակողմանի գնահատելու կարողության:

Բովանդակություն

Թեմա 1. Հայ հասարակական-քաղաքական միտքը և ազատագրական շարժումները: **Թեմա 2.** 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 3.** Հայ քաղաքական կուսակցությունների ձավավորումը: **Թեմա 4.** Հայկական հարցը և մեծ տերությունները 1890-ական թվականներին: **Թեմա 5.** Ազգային-ազատագրական պայքարի նոր մարտավարությունը 2-րդ դարի սկզբին: **Թեմա 6.** Արևելյան Հայաստանը 1907-1914թթ.: **Թեմա 7.** Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հայոց մեծ եղեռնը: **Թեմա 8.** Հայաստանը 1917թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունների տարիներին: **Թեմա 9.** Հայկական մշակույթը19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին **Թեմա 10.** 1918թ. թուրքական արշավանքներն Անդրկովկաս և ինքնապաշտպանական կռիվները:

23/Բ26 –Հայոց պատմություն-5 (5 կրեդիտ)

12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

5-րդ, կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

1. Ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի առաջին Հանարապետության քաղաքական և մշակույթային հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները, ներկայացնել նորահայտ նյութերը:
2. Պարզաբանել Հայաստանի խարհրդայնացման հետ կապված տարակարծությունները, քննության առնել 1920-1940-ական թվականներին հանրապետությունում տնտեսական, քաղաքական և մշակույթային կյանքի կազմակերպման ձեռնարկումները, կոմունիստական կուսակցության մենատիրության հաստատումը և այդ ճանապարհին թույլ տրված սխալները, ինչպես նաև օբյեկտիվորեն գնահատել այդ գործընթացները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա համակողմանի և խոր գիտելիքներ Հայաստանի առաջին Հանրապետության ամբողջական պատմության վերաբերյալ:

Կկարողանա նորահայտ նյութերի հենքի վրա վերաիմաստավորել և վերագնահատել պատմագրության տեսակետները:

Կտիրապետի նյութը համադրելու, վերլուծելու, պարզաբանելու, արժևորելու և գնահատելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Ներածություն: **Թեմա 2.** ՀՀ հռչակումը: Անկախ պետականությանկայացումը: **Թեմա 3**. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը և հասարակակա -քաղաքական կյանքը: **Թեմա 4.** Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում: **Թեմա 5.** Հայկական հարցը Սան Ռեմոյի կոնֆերանսում: Սևրի պայմանագիրը: **Թեմա 6.** Հայ-ռուսական հարաբերությունները: **Թեմա 7.** Հայ-ադրբեջանական հարաբերությունները: **Թեմա 8.** Հայ-վրացական հարաբերությունները: **Թեմա 9.** Բոլշևիկների 1920թ. մայիսյան ապստամբությունը: **Թեմա 10.** Թուրք-հայկական պատերազմը: ՀՀ անկումը: **Թեմա 11.** Խորհրդային իշխանության առաջին քայլերը: Քաղաքական կռիվները Հայաստանում: **Թեմա 12.** 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը: **Թեմա 13**. Հայկական տարածքների (Լոռի, Ջավախք, Լեռնային Ղարաբաղ, Զանգեզուր) հարցը: **Թեմա 14.** Սոցիալ-տնտեսական կացությունը վերականգնման տարիներին: **Թեմա 15.** Խորհրդային Հայաստանի ինդուստրացումը: Ինդուստրացման արդյունքները: **Թեմա 16**. Գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Կոլեկտիվացման ավարտը Հայաստանում: **Թեմա 17.** Հասարակական – քաղաքական կյանքը: Կոմունիստական կուսակցության մենիշխանության հաստատումը: **Թեմա 18.** Կրթություն և մշակույթ: **Թեմա 19.** Սփյուռքի ձևավորումը: Սփյուռքահայության սոցիալ – տնտեսական կացությունը: **Թեմա 20.** Հայ ժողովրդը Հայրենական մեծ պատերազմի գործուն մասնակից:

23/Բ27 –Հայոց պատմություն-6 (6 կրեդիտ)

16 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

6-րդ, կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է քննության առնել 1940-1980-ական թվականներին հանրապետությունում տնտեսական, քաղաքական և մշակույթային կյանքի կազմակերպման ձեռնարկումները, կոմունիստական կուսակցության մենատիրության հաստատումը և այդ ճանապարհին թույլ տրված սխալները, ինչպես նաև օբյեկտիվորեն գնահատել այդ գործընթացները, պարզաբանել ԽՍՀՄ փլուզման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատչառները և հետևանքները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա կատարել ճիշտ հետևություններ:

Կտիրապետի հայոց պատմության նորագույն շրջանի կնճռոտ և վիճահարույց խնդիրներին:

Բովանդակություն

Թեմա 1. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 1946-1953թթ.: **Թեմա 2.** 1950-ական թվականների սոցիալ-տնտեսական ռեֆորմները: **Թեմա 3.** Տնտեսությունը

1960-1985թթ.: **Թեմա 4.** Հասրական-քաղաքական կյանքը: **Թեմա 5.** Վերակառուցման քաղաքականությունը և նրա դրսևորումները Հայաստանում: **Թեմա 6.** Ղարաբաղյան շարժումը: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը: **Թեմա 7.** Պայքար հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար: **Թեմա 8.** Հայաստանի Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի 1989թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը: Ադրբեջանի ոտնձգությունները Հայաստանի դեմ **Թեմա 9.** 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը: **Թեմա 10.** Ազգային շարժումների ուժեղացումը ԽՍՀՄ-ում: Սոցիալիզմի բոլշևիկյան մոդելի կրախը:

23/Բ28–Հայոց պատմություն-7 (4 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
7-րդ, կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է՝

1. Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության նորագույն շրջանի՝ Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության, վերաբերյալ:
2. Սերմանել սեր և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ:
3. Դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա Հայաստանի երրորդ Հանրապետության պատմությունը:
Կկարողանա քննական և ինքնուրույն մոտեցումներ ցուցաբերել պատմական երևույթները գնահատելու առումով:
Կտիրապետի երևույթները պատմականորեն գնահատելու, վերլուծելու հմտություններին, հասկանա ու արժևորի դրանց ազդեցությունն ու օրգանական կապը պատմական զարգացումների հետ:
Բովանդակություն
Թեմա 1. Անկախության հռչակումը և պետականության կայացման գործընթացը: **Թեմա 2**. Հայստանի Հանրապետության ներքին դրությունը: **Թեմա 3**. Հանրապետության իշխանությունների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: **Թեմա 4**. ՀՀ մշակութային կյանքը: **Թեմա 5**. Հայաստանի հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը: **Թեմա 6**. Հասարական – քաղաքական կյանքը: **Թեմա 7**. Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հռչակումը և կայացումը: **Թեմա 8**. Հայկական Սփյուռքը 1991-2018:

23/Բ17–Հայաստանի պատմական աշխարհագրություն (3 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

1. Հիմնարար գիտելիքների հաղորդում Հայկական լեռնաշխարհի տարածքի, սահմանների ու վարչական կարգի վերաբերյալ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:
2. Ձեռք բերած գիտելիքները գործնական կիրառության համար վերլուծելու հմտությունների ձևավորում և հետազոտական մակարդակում կրթության շարունակության ապահովում:
3. Սովորողի բարոյական և ազգային նկարագրի, հայրենասիրության ու ազգային արժանապատվության դաստիարակություն, իր պատմական արմատները իմացություն, պատմական հիշողության ձևավորում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Նկարագրել Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները,
2. Ներկայացնել Պատմական Հայաստանի ճանապարհներն ու դրանց նշանակությունը
3. Նկարագրել Հայաստանի վարչատարածքային բաժանումները պատմական տարբեր ժամանակահատվածներում և բացատրել դրանց առանձնահատկությունները
4. Ճանաչել, նկարագրել և բացատրել Հայաստանի արևորագույն վայրերի (քաղաքներ, ավաններ, բերդեր, ճակատամարտերի վայրեր) տեղագրությունը

Կկարողանա՝

1. Հայոց պատմության զանազան հարցերի լուսաբանման համար հասկանալ և օգտագործել Հայկական լեռնաշխարհիի ֆիզիկաաշխարհագրական, Մեծ Հայքի վարչական, Հայոց պատմության տարբեր ժամանակաշրջանների պատմական քարտեզները:
2. Քննել Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների վերաբերյալ պատմագիտության մեջ առկա տեսակետները:
3. Քննել ու համեմատել Հայաստանի տարածքը, սահմաններն ու վարչական կարգը պատմական տարբեր ժամանակահատվածներում:
4. Առարկայի ուսումնասիրությամբ վեր հանել և մոռացությունից փրկել պատմական Հայաստանի տեղանունները:
5. Ուսումնասիրելով աղբյուրները և պատմաաշխարհագրական զանազան հարցերի շուրջ եղած տեսակետները՝ քննել, հիմնավորել, գնահատել դրանք և կատարել գիտական եզրահանգումներ

Կտիրապետի՝

1. Պատմաշխարհագրական գիտելիքների օգտագործմամբ բազում քաղաքական կնճռոտ հարցեր մեկնաբանելու և բացահայտելու կարողություն:

2. Ձեռք բերած գիտելիքները մատուցելու մասնագիտական բառապաշարը, գրավոր և բանավոր խոսքը նախընտրելու հմտություն:
3. Պատմաաշխարհագրական զանազան հարցերի վերաբերյալ Պատմագիտության մեջ առկա զանազան տեսակետների նկատմամբ քննադատական մոտեցում և սեփական վերաբերմունքի արտահայտում:

Բովանդակություն

Թեմա 1. Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները: **Թեմա 2.** Հին և վաղ միջնադարյան Հայաստանի ճանապարհները: **Թեմա 3.** Հայաստանի վարչաքաղաքական և տնտեսական կացությունը Ք. ա. 9-ից Ք. հ. 5-րդ դարերում: **Թեմա 4.** Հին Հայաստանի պատմա-աշխարհագրական նկարագրությունը Կլավդիոս Պտղոմեոսի և «Աշխարհացույցի»: **Թեմա 5**. Հայաստանի վարչա-քաղաքական և տնտեսական կացությունը 5-13-րդ դարերում: **Թեմա 6.** Հայաստանը 7-9-րդ դարերում: Հայաստանը արաբական խալիֆայության տիրապետության տակ: **Թեմա 7.** Հայաստանը 9-11-րդ դարերում: Հայաստանի վարչական անկախության վերականգնումը: **Թեմա 8.** Հայաստանը 11-12-րդ դարերում: Հայաստանը բյուզանդական կարճատև տիրապետության շրջանում: **Թեմա 9.** Հայաստանի վարչա-քաղաքական և տնտեսական կացությունը 13-18-րդ դարերում: **Թեմա 10**. Հայաստանը 1801-1918թթ.: Արևելյան Հայաստանը ռուսական կայսրության վարչական բաժանումներում: **Թեմա 11**. Հայաստանի վարչական բաժանումները 20-րդ դարի սկզբին:

23/Բ18–Հայոց պատմության աղբյուրագիտություն (6 կրեդիտ)

16 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

1. Հիմնարար գիտելիքներ տալ հայ բազմադարյան մատենագրության ընթացքի, աղբյուրագիտական գիտելիքների ձևավորման, կուտակման և համակարգ դառնալու գործընթացի վերաբերյալ,
2. զարգացնել ինչպես նախագրային, այնպես էլ հետգրային շրջանի աղբյուրների վերլուծության ու դասակարգման հմտություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. դասընթացի վերաբերյալ գոյություն ունեցող հիմնական գրականության վերաբերյալ,
2. հայոց պատմության աղբյուրագիտության հիմնական խնդիրների և նպատակների վերաբերյալ,
3. հայոց պատմության աղբյուրագիտական բազմալեզու և բազմաբնույթ միավորների մասին,

4. պատմության շարադրման, ուսումնասիրություններ կատարելու ընթացքում աղբյուրների օգտագործման եղանակների մասին:

Կկարողանա՝

1. դասակարգել պատմական սկզբնաղբյուրները,
2. առանձնացնել գլխավորը երկրորդականից,
3. արժևորել սկզբնաղբյուրները և ունակ լինել դրանք օգտագործելու ընդհանուր առարկան յոկարողանալ կեղծ, սուբյեկտիվ, փաստերը հայտնաբերել և մերժելով դրանք հասու լինել պատմական ճշմարտությանը:

Կտիրապետի՝

1. ձեռք բերած աղբյուրագիտական գիտելիքները կիրառել ստեղծագործաբար,
2. աղբյուրագիտական յուրաքանչյուր փաստ վերլուծել, համեմատություններ անել և հանգել հետևությունների,
3. օգտվել տարատեսակ աղբյուրներից,
4. աղբյուրագիտական գիտելիքներն օգտագործել գիտական զեկուցումներ պատրաստելիս, կարողանալ վարել գիտական բանավեճեր:

Բովանդակություն

Թեմա 1. Աղբյուրագիտություն առարկան, նրա տեղը պատմական օժանդակ գիտությունների շարքում: Պատմական սկզբնաղբյուր հասկացությունը: Պատմական սկզբնաղբյուրի ուսումնասիրության հիմնական փուլերն ու ձևերը: Պատմական սկզբնաղբյուրների դասակարգումը: **Թեմա 2**. Խեթա-ասորական և ուրարտական սեպագիր արձանագրությունները որպես Ք.ա. 2-րդ հազարամյակի Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների պատմության սկզբնաղբյուրներ: Սեպագիր աղբյուրների ձևի և բովանդակության հիմնական օրինաչափությունները: Բեհիսթունյան արձանագրությունը:Հայկական, վրացական և հունական ավանդությունների հայ ժողովրդի կազմավորման մասին:**Թեմա 3**. Հայաստանի և հարակից երկրների տարածքում հայտնաբերված արամեերեն, հունարեն և լատիներեն վիմագիր արձանագրությունները: Արտաշես 1-ի արամեագիր սահմանաքարերը: Արմավիրի արամեերեն ու հունարեն արձանագրությունները: Տրդատ 1-ի Գառնիի և Տրդատ 3-ի Ապարանի և Ֆարկին-Տիգրանակերտի հունարեն արձանագրությունները: Հայաստանի և Ադրբեջանի տարածքում հայտնաբերված լատիներեն արձանագրություններն իբրև Հին Հայաստանի պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուրներ: **Թեմա 4**. Հունական գրավոր սկզբնաղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Հերոդոտոս Հալիկառնասցու, Քսենոփոնի, Պոլիբիոսի ու Պլուտարքոսի, Ստրաբոնի, Ապպիանոսի և այլոց տեղեկությունները Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ: **Թեմա 5.** Հռոմեական գրավոր սկզբնաղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Պլինիուս Ավագի, Տիտուս Լիվիուսի, Կոռնելիուս Տակիտոսի, Դիոն Կասսիոսի, Հերոդիանոսի և այլոց տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին: **Թեմա 6.** Կորյուն, «Վարք Մաշտոցի» և Ագաթանգեղոս, «Հայոց պատմություն»:

«Վարք Մաշտոցի» աշխատության հեղինակը, գրելու ժամանակը, շարժառիթն ու նպատակաուղղվածությունը: Աղբյուրի արժանահավատության հարցը: Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» աշխատության հեղինակի հարցը: Աշխատության գրելու ժամանակի, գրավոր և բանահյուսական աղբյուրների հարցը: Աշխատությունը գրելու կրոնա-քաղաքական շարժառիթները: Աղբյուրի արժանահավատության հարցը: Հրատարակությունների թվականները: **Թեմա 7.** Փավստոս Բուզանդի ապրած ժամանակի և աշխատություն գրելու հարցերը: Հեղինակի օգտագործած գրավոր և բանահյուսական աղբյուրները: Հայ ժողովրդական վեպը: Աշխատության ներքին կառուցվածքը և արժանահավատության աստիճանը: Եղիշե, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին». աշխատության հեղինակն ու նրա ապրած ժամանակաշրջանը: Աշխատությունը գրելու շարժառիթը և ժամանակը: Հեղինակի քաղաքական կողմնապահությունները: Աղբյուրի ներքին կառուցվածքն ու արժանահավատության աստիճանը: Հրատարակության թվականը:

Ղազար Փարպեցու կյանքը, նրա առնչությունները Մամիկոնյան նախարարական տան հետ: «Թուղթ առ Վահան Մամիկոնյան» աշխատության՝ որպես 5-րդ դարի երկրորդ կեսի Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի մասին պատմող սկզբնաղբյուրի աղբյուրագիտական արժեքը: «Պատմություն հայոցը» գրելու ժամանակը, նրա ներքին կառուցվածքը, քաղաքական նպատակամիտվածությունը, հեղինակի տոհմասիրական նախապատվությունը: Աղբյուրի արժանահավատության աստիճանն ու պատմագիտական արժեքը: Հրատարակությունների թվականները: **Թեմա 8**. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»: Հեղինակի և նրա ապրած ժամանակի հարցը: Աշխատությունը գրելու շարժառիթները: Հեղինակի օգտագործած աղբյուրները: Աշխատության ներքին կառուցվածքը: Հեղինակի ինքնատիպ վերաբերմունքը հարազատ ժողովրդի ու նրա պատմական անցյալի նկատմամբ: Աղբյուրի արժանահավատության հարցը: Հրատարակությունների թվականները: Սեբեոս, «Պատմություն»: Սեբեոսի անձի և ապրած ժամանակի հարցը: Նրա «Պատմություն» աշխատության գրելու շարժառիթներն ու ժամանակը: Հեղինակի օգտագործած աղբյուրները: Աշխատության ներքին կառուցվածքը, արժանահավատության աստիճանը: Հրատարակությունների թվականները: Հովհան Մամիկոնյան. «Տարոնի պատմություն» աշխատությունը, նրա ստեղծման ժամանակի և հեղինակների հարցը: Բովանդակությունն ու աղբյուրագիտական արժեքը: **Թեմա 9**. Հայկական թարգմանական գրականության սկզբնավորումը: Հունաբան դպրոցի ձևավորումն ու գործունեությունը: Մաշտոցի, Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի կրոնա փիլիսոփայական ստեղծագործությունները: Անանիա Շիրակացի: **Թեմա 10**. Ղևոնդ, «Պատմություն»: Աշխատության հեղինակի և այն գրելու ժամանակաի հարցը: Աշխատությունը գրելու շարժառիթնրն, օգտագործած սկզբնաղբյուրները, նրա ներքին կառուցվածքը և արժանահավատության հարցը: Հրատարակության թվականը: Շապուհ Բագրատունի և Հովհաննես Դրասխանակերտցի: Հեղինակներն ու նրանց ապրած ժամանակը: Նրանց հեղինակած

աշխատությունները, օգտագործած աղբյուրները: Աշխատությունների ներքին կառուցվածքը, նրանց արժանահավատության աստիճանը: Հրատարակության թվականը: **Թեմա 11**. Բյուզանդական սկզբնաղբյուրները Հայաստանի մասին: Ամմիանոս Մարկելլինոս, Պետրոս Պատրիկիոս, Զոնարաս, Պրոկոպիոս Կեսարացի, Թեոփանես Խոստովանող, Թեոփանեսին Շարունակող, Փոտ Պատրիարք, Կոստանդին Ծիրանածին: **Թեմա 12**. Թովմա Արծրունու «Պատմություն տանն Արծրունյաց», Ստեփանոս Տարոնեցու «Պատմութիւն տիեզերական» և Արիստակես Լաստիվերցու «Պատմություն» աշխատությունները: Հեղինակները, նրանց ապրած ժամանակն ու աշխատությունները գրելու շարժառիթները: Աղբյուրների ժամանակագրական ու թեմատիկ ընդգրկումը, նրանց ներքին կառուցվածքն ու արժանահավատության աստիճանը: Հրատարակության թվականները: **Թեմա 13**. Արաբական սկզբնաղբյուրները Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության ինչպես նաև Հայաստանի վարչաքաղաքական բաժանման մասին: **Թեմա 14**. Հայ միջնադարյան տարեգիրները՝ Մատթեոս Ուռհայեցի, Սամուել Անեցի, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի Գրիգոր Ակներցի: Հեղինակների ապրած ժամանակաշրջանը, հեղինակած աշխատությունների բնույթն ու կառուցվածքը, ժամանակագրական ընդգրկումներն, աղբյուրագիտական արժեքը: Հրատարակության թվականները: **Թեմա 15**. Ստեփանոս Օրբելյան, «Պատմություն նահանգին Սիսական», Թովմա Մեծոբեցի, «Պատմութիւն Լանգ Թամուրայ և յաջորդաց իւրոց»: Աշխատությունների հեղինակները և նրաց ապրած ժամանակաշրջանը: Աշխատությունը գրելու ժամանակը և շարժառիթները: Աշխատությունների քաղաքական-գաղափարական ուղղվածությունը, ներքին կառուցվածքը և աղբյուրագիտական- պատմագիտական արժեքը: **Թեմա 16**. Առաքել Դավրիժեցու «Պատմություն Հայոց» աշխատությունները: Զաքարիա Քանաքեռցու, Աբրահամ Կրետացու, Աբրահամ Երևանցու «Պատմություն» աշխատությունները: Ստեփանոս Շահումյանը և նրա «Դավիթ Բեկի և Ղափանի պատերազմի մասին» աշխատությունը: Խաչատուր Ջուղայեցին և նրա «Պատմություն Պարսից» աշխատությունը: Հեղինակները և նրանց ապրած ժամանակը: Աշխատությունները գրելու շարժառիթներն ու նրանց ժամանակագրական ընդգրկումները: Հեղինակների օգտագործած սկզբնաղբյուրները: Աշխատությունների ներքին կառուցվածքն ու արժանահավատության աստիճանը: Հրատարակության թվականները: **Թեմա 17**. Հայ միջնադարյան փիլիսոփայական և իրավական բնույթի աշխատությունները որպես Հայաստանի և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուրներ: **Թեմա 18**. Եկեղեցական-հոգևոր բնույթի աշխատությունները որպես Հայոց պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուրներ: **Թեմա 19**. Մանր ժամանակագրություններն ու ուղեգրություններն իբրև Հայաստանի և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուրներ: **Թեմա 20**. Թուրքական աղբյուրներն իբրև Հայաստանի և հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրներ: **Թեմա 21**. Հայկական հարցի և Հայոց մեծ ցեղասպանության պատմության սկզբնաղբյուրները:

23/Բ21–Հայոց պատմության պատմագրություն (4 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
7-րդ, կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել հայկական պատմական գիտության անցած ողջ ուղու մասին՝ սկսած նախագրական շրջանի պատկերացումներից մինչև մեր օրերի պատմագիտական դպրոցները, ուղղությունները, տեսությունները,
2. Անդրադառնալ հայ պատմագիտության ձեռքբերումներին, ինչպես նաև ներկա վիճակին ու հեռանկարներին:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. կբացահայտի հայ պատմագրության զարգացման ուրույն ընթացքը և առանձնահատկությունները,
2. կհասկանա հայ իրականության մեջ պատմական գիտելիքների առաջացման, կուտակման և համակարգման ընթացքը,
3. կընկալի հայոց պատմության պատմագրության խնդիրները, գիտելիքներ ձեռք կբերի պատմագրական հետազոտությունների տիպերի մասին,
4. ի վիճակի կլինի կողմնորոշվել պատմական գիտության պատմության վիճելի հարցերում:

Կկարողանա՝

1. ըմբռնել Հայաստանում պատմական գիտելիքների առաջացման ընթացքը և տրամաբանությունը,
2. գնահատել հայ պատմագրության զարգացման խոշոր փուլերից յուրաքանչյուրի ինքնատիպությունը և առանձին նշանավոր պատմիչների դերն ու ավանդը հայ պատմագրության ձևավորման ու առաջընթացի համատեքստում,
3. դասակարգել հայ միջնադարյան պատմագրության ընթացքը, բնութագրել նրա զարգացման առանձին փուլերը,

Կտիրապետի՝

1. ընդլայնել և կիրառել ունեցած գիտելիքները,
2. վերլուծել փաստերը և եզրակացություններ կատարել՝ հենվելով նախորդ հետազոտողների ձեռքբերումների վրա,
3. օգտվել տեղեկատվության ժամանակակից միջոցներից:

Բովանդակություն

Ներածություն: «Պատմագրություն» հասկացության հիմնական իմաստները: **Թեմա 1.** Պատմական գիտելիքների առաջացումը Հայաստանում: **Թեմա 2.** Նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը: **Թեմա 3.** Միջնադարյան հայ

պատմագրությունը: **Թեմա 4.** Պատմագիտության առաջընթացը 18-րդ դարի վերջերին: **Թեմա 5.** Հայ պատմագիտական միտքը 19-րդ դ. առաջին կեսին: **Թեմա 6.** Հայ պատմագիտական միտքը 19-րդ դ. երկրորդ կեսին: **Թեմա 7.** Հայ պատմագիտությունը 20-րդ դարում:

23/Բ13–Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն (4 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
8-րդ, կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է՝

1. ծանոթանալ համաշխարհային պատմության աղբյուրագիտության պատմական զարգացմանը,
2. խորացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները, նրանց մեջ ձևավորել ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների իրականացման հմտություններ,
3. ձևավորել պատմական աղբյուրների փնտրման-հայտնաբերման, քննադատական վերլուծման և համակարգման կարողություններ,
4. արժևորել և կարևորել հին աղբյուրների ուսումնասիրման դերը համաշխարհային պատմության գործում, բացահայտել տարատեսակ և բազմաբնույթ աղբյուրների պատմական նշանակությանը:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. աղբյուրների տիպերն ու դրանց բազմազանությունը,
2. աղբյուրագիտության զարգացման փուլերը,
3. պատմական աղբյուրների ուսումնասիրման-հետազոտման մեթոդիկան,
4. պատմական յուրաքանչյուր շրջանի ժառանգության գնահատման ավանդական և ժամանակակից դիրքորոշումներն ու մոտեցումները,
5. աղբյուրագիտության զարգացման ընթացքում ձևավորված մշակույթի և առհասարակ մարդկային քաղաքակրթության արժեքային համակարգերի կարևորագույն նվաճումները։

Կկարողանա՝

1. իրականացնել տարատեսակ ու բազմաշերտ աղբյուրների արդյունավետ հետազոտում և տեղեկույթի փնտրտուք,
2. քննադատորեն վերլուծել պատմական տեղեկույթը,
3. համառոտագրել և ամփոփել նկարագրություններն ու շարադրանքները,
4. տրամաբանորեն ճիշտ, պարզ և հիմնավորված կառուցել խոսքը,
5. ցուցաբերել հասարակական-պատմական գիտելիքներ, սոցիալապես ընդունելի ձևերով հրապարակավ պաշտպանել սեփական դիրքորոշումները, տեսակետներն ու մոտեցումները,

6. իմաստավորել հնագույն շրջանի պատմության երևույթներն ու գործընթացներն իրենց ժամանակաշրջանի զարգացումների և փոխկապակցությունների միջավայրում, համեմատել-հարադրել պատմական ընդհանուր գործընթացներն ու առանձին փաստերը, վեր հանել և պարզաբանել պատմական գործընթացների և իրադարձությունների էական գծերը:

Կտիրապետի՝

1. պատմական աղբյուրների և պատմական գրականության հետ աշխատելու, ուսումնասիրելու, հմտություններին,
2. տարբեր աղբյուրագիտական դպրոցների հայեցակարգերը քննադատորեն ընդունելու ընդունակությանը,
3. պատմական փաստաթղթերի կարևորագույն հրապարակումներին և դրանց պահպանության տրամադրման վերաբերյալ պատկերացումներին,
4. հրապարակային ելույթներ և բանավեճեր վարելու ձևերին,
5. պատմական ժառանգության, մշակույթի, քաղաքացիության և մարդասիրության հիմնարար արժեքների վերաբերյալ պատկերացումներին,
6. կրթությունը մշտապես շարունակելու պահանջին:

Բովանդակություն

Թեմա 1. Դասընթացի առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Արևմուտքի հնագույն և միջնադարյան պատմական աղբյուրների դասակարգումը, զարգացման հիմնական փուլերն ու դրանց դերն ու տեղը աղբյուրագիտության ուսումնասիրման գործում: **Թեմա 3.** Առաջին տեղեկությունները հին գերմանների, սլավոնների, ուշ հռոմեական կայսրության և Բյուզանդիայի պատմության վերաբերյալ/մինչև 8-րդ դարի կես/: **Թեմա 4.** Ուշ հռոմեական կայսրության աղբյուրներ/4-5-րդ դարեր/: **Թեմա 5.** Վաղ միջնադարյան Եվրոպայի պատմության սոցիալ-տնտեսական և քաղաքական-իրավական աղբյուրները: **Թեմա 6.** Վաղ միջնադարյան շրջանի ժամանակագրական աղբյուրներ: **Թեմա 7.** Արևմտյան միջնադարյան պատմության գյուղատնտեսական աղբյուրագիտությունը: **Թեմա 8.** Խաչակրաց արշավանքների դարաշրջանը. դրանց աղբյուրների և խնդիրների մեկնաբանումը: **Թեմա 9.** Դասական միջնադարյան շրջանի ժամանակագրական աղբյուրները: **Թեմա 10.** Միջնադարյան գրականության հուշարձանները որպես պատմական աղբյուր: **Թեմա 11.** Հատուկ (օժանդակ) պատմական դիսցիպլինները, դրանց ձևավորման և զարգացման պատմությունը:

23/Բ14-Հայ ազգագրություն (4 կրեդիտ)

10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը

Դիտարկվում են հայ ազգագրության հիմնախնդիրները, ճանաչողական և կիրառական նշանակությունը, գիտության տեղը հայագիտության համակարգում: Բացահայտվում է հայոց կենցաղամշակութային յուրահատկությունները, ժողովրդագրական և էթնոմշակութային պատկերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. հայ ազգագրության աղբյուրների ու ձևավորման մասին,
2. հայոց ավանդական մշակույթի ու նրա համալիրների մասին. հումանիտար, կենսապահովման ու սոցիոնորմատիվ մշակույթ մասին:

Կկարողանա՝

1. կարողանա գնահատել հայոց մշակույթի ավանդական ու ժամամանակակից դրսևորումները,
2. բացահայտել հայոց մշակութային ժառանգության տարբեր բաղադրիչներ պատմական ու արդի կտրվածքով,
3. օգտվել ազգագրական նյութից:

Կտիրապետի՝

1. վերլուծելու մշակութային բաղադրիչները համաժամանկյա ու տարաժամանկյա կտրվածքով,
2. իրականացնել ազգագրական, բանահավքչական աշխատանքներ,
3. իմացությունը կիրառել հետազոտական, վարչական և հանրային աշխատանքային ոլորտներում:

Բովանդակություն

Թեմա 1. Հայ ազգագրությունը 19-րդ դ. առաջին կեսին /Ղ. Ինճինճյան, Մ. Բժշկյան, Մ. Թաղիադյան, Խ. Աբովյան/: **Թեմա 2**. Հայ ազգագրությունը 19-րդ դ. 2-րդ կես - 1920-ական թթ./ Գ. Սրվանձտյանց, Գր. Խալաթյանց, Ե. Լալայան/: **Թեմա 3**. Ստ. Լիսիցյանի և Խ. Սամվելյանի ազգագրական գործունեությունը: **Թեմա 4**. ՀՀ-ում ազգագրական գիտական հաստատությունների և ազգագրական թանգարանների համառոտ ակնարկ: **Թեմա 5**. Հայերը աշխարհի էթնիկ հանրությունների համակարգում, հայերի էթնոլեզվական, մարդաբանական, խառնվածքային, դավանաբանական, ժողովրդագրական բնութագիրը: **Թեմա 6**. ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդագրական և էթնոմշակութային բնութագիրը: **Թեմա 7**. Հայերի ավանդական և ժամանակակից արտադրական մշակույթը. երկրագործական մշակույթ, Հայկական լեռնաշխարհը երկրագործական մշակույթի կենտրոն: Բրիչային և արորագութանային երկրագործության արտադրատեխնիկան, աշխատանքի կազմակերպման հնավանդ – 95 – ձևերը: Անասնապահական մշակույթ, ձևերը, համագործակցության և փոխօգնության ավանդական սկզբունքները: Տնայնագործական և արհեստագործական մշակույթ: Համքարական կազմակերպությունները քաղաքներում, դրոշները և սովորույթները: Օժանդակ և յուրացնող տնտեսաձևերը: Ժողովրդական ավանդական փոխադրամիջոցները և կապի միջոցները: **Թեմա 8**. Հայոց կենսապահովման մշակույթը. Գյուղական և քաղաքային ավանդական ժամանակակից բնակավայրերի տիպերը, կառուցվածքը, բնորոշ գծերը: Հայ ժողովրդական բնակարանը և ներսույթը՝ ջեռուցման, լուսավորության ավանդական և ժամանակից միջոցները, կահույքը, դրանց

գործառութային բնութագրությունը: Հայոց ավանդական և ժամանակակից տարազային համալիրները, տարածքային առանձնահատկությունները: Հայկական ուտեստն ու ըմպելիքները, հացկերույթները: **Թեմա 9**. Սոցիոներմատիվ մշակույթ, հայերի ավանդական և ժամանակակից ընտանքը և վավերելակարգը: Հայերի ընտանեկան ծիսակարգը, ամուսնության և հարսանեկան ծիսաշարը, տղաբերքի և մանկատածության, հուղարկավորման և հիշատակման հետ կապված ավանդական և ժամանակակից սովորույթները և ծեսերը: Հայոց ազգակցական համակարգը, տնտեսական, տարածքային և գաղափարական կապերը: Հայերի գյուղական համայնքը 19-20-րդ դդ.: **Թեմա 10**. Հայոց ավանդական և ժամանակակից հումանիտար մշակույթը. Հնագույն հավատալիքների, պաշտամունքի, բանավոր ստեղծագործությունների, տոների վերաբերյալ պատկերացումները հայոց մեջ:

23/Բ39 – Նախնադարյան հասարակության պատմություն (4 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է՝

1. նախնադարյան հասարկության զարգացման հիմնական փուլերի,
2. հոմինիդների ընտանիքի զարգացման և ժամանակակից մարդու ձևավորման գործընթացների,
3. սոցիոգենեզի, պոլիտոգենեզի, կուլտուրոգենեզի հիմնական փուլերի մասին:

Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝

1. Սահմանել նախնադարյան հասարակության պատմության զարգացման հիմնական փուլերը,
2. Բնորոշել անթրոպոգենեզի հիմնական էտապները:

Կկարողանա՝

1. քննել հոմինիդների բրածո ներկայացուցիչների առանձնահատկությունները,
2. չափել նրանց տարածման տիրույթները և համեմատել աշխատանքային գործունեությունը:

Կտիրապետի՝

1. Զգալ և տիրապետել սոցիոգենեզի, կուլտուրոգենեզի, պոլիտոգենեզի հիմնական էտապների զարգացման տրամաբանությանը:

Բովանդակություն
Թեմա 1. Նախնադարի պատմություն առարկան և նրա տեղը գիտությունների համակարգում: **Թեմա 2.** Նախնադարյան պատմության պարբերացում և ժամանակագրություն: **Թեմա 3.** Նախնադարի պատմության հիմնական փուլերի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 4.** Նախնադարյան տոհմական համայնքի ժամանակաշրջան: **Թեմա 5.** Նախնադարի պատմության աղբյուրագիտությունը: **Թեմա 6.** Ազգաբանությունը /ազգագրություն/ նախնադարյան հասարակության

պատության ուսումնասիրման համար: **Թեմա 7.** Պատմական մարդաբանություն: **Թեմա 8.** Հնէակենդանաբանություն: **Թեմա 9.** Հնէաբուսաբանություն: **Թեմա 10.** Ճշգրիտ գիտությունների դերը նախնադարի պատմության ուսումնասիրման մեջ: **Թեմա 11.** Լեզվաբանություն: **Թեմա 12.** Գրավոր աղբյուրներ: **Թեմա 13.** Ինֆորմատիկա: **Թեմա 14.** Նախնադարյան հասարակության պատմության համադրական /սինթետիկ/ վերականգնման առանձնահատկությունը: **Թեմա 15.** Նախնադարի պատմության պատմագրություն: **Թեմա 16.** Մարդու ծագումը: **Թեմա 17**. Մարդկային հասարակության ծագումը: **Թեմա 18**. Նախնադարյան կոլեկտիվիզմի զարգացում: **Թեմա 19.** Մտածողության և խոսքի ծագումն ու զարգացումը: **Թեմա 20.** Գաղափարական պատկերացումների ակունքները: **Թեմա 21.** Նախնադարյան հասուն հասարակություն: **Թեմա 22.** Ռասսաների ծագումը: **Թեմա 23.** Համայնատոհմական կարգերի ծագում: **Թեմա 24.** Վաղ նախնադարյան համայնքի փուլ: **Թեմա 25.** Սոցիալ-տնտեսական հարաբերությունները վաղ նախնադարյան համայնքում: **Թեմա 26.** Բնակչությունը և դրա վերարտադրությունը: Թեմա 27. Սեռատարիքային կազմակերպություն: **Թեմա 28.** Ամուսնություն և ընտանիք: Թեմա 29. Համայնական կազմակերպություն: **Թեմա 30.** Իշխանության կազմակերպում: **Թեմա 31.** Սոցիալական նորմեր: **Թեմա 32.** Հոգևոր մշակույթ /պարզունակ/: **Թեմա 33.** Լեզվական և էթնիկական կեցություն: **Թեմա 34.** Ուշ նախնադարյան համայնքի փուլ: **Թեմա 35.** Ժողովրդագրություն: Ամուսնություններ: **Թեմա 36.** Բնակչության վերարտադրություն: **Թեմա 37.** Սեռատարիքային կազմակերպությունը: **Թեմա 38.** Ամուսնություն և ընտանիք: **Թեմա39.** Համայնատոհմական կազմակերպություն: **Թեմա 40.** Իշխանության կազմակերպում: **Թեմա 41.** Նոր աստիճանի հոգևոր մշակույթ: **Թեմա 42.** Քարեդևյան արվեստ: **Թեմա 43.** Նախնադարյան հասարակության քայքայումը: **Թեմա 44.** Մետաղների հայտնագործում: **Թեմա 45.** Դասակարգային հասարակության ինստիտուտի զարգացում: **Թեմա 46.** Պետության և իրավունքի կազմավորում: **Թեմա 47.** Դասակարգային հասարակության ինստիտուտների ձևավորման գործընթացի տարբերակներն ու ենթատեսակները: **Թեմա 48.** Հեղաշրջումը սեռերի հասարակական դիրքում: **Թեմա 49.** Ամուսնություն և ընտանիք: **Թեմա 50.** Համայնքային և տոհմացեղային կազմակերպությունը: **Թեմա 51.** Հոգևոր մշակույթ:

23/Բ32 –Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն (3 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար
3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել բազային գիտելիքներ հնագիտության դիսցիպլինի տեսության, տերմինաբանության, կարևորագույն հնագիտական մշակույթների և քաղաքակրթությունների ու մշակույթի հաջորդական զարգացման փուլերի և առանձնահատկությունների մասին: Տալ գիտելիքներ Հայաստանի հնագիտության կարևորագույն հնագիտական մշակույթների, փուլաբաժանումների և այլնի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. հնագիտության տեսության խնդրացանկը,
2. հնագիտական պեղումների, պարբերացման և պատմամշակութային գործընթացների տրամաբանությունը,
3. կատարել վերլուծական բնույթի պատմահնագիտական աշխատանք, պատրաստ կլինի գիտելիքերը կիրառել գործնականում:

Կկարողանա՝

1. հնագիտա-ազգագրական տեղեկությունների հիման վրա կատարել հետազոտական աշխատանք, լուսաբանելու տեղական օրինաչափությունները և առանձնահատկությունները,
2. տիպաբանել փաստացի հնագիտական և ազգագրական նյութը,
3. հասկանալ հնագույն և հին Հայաստանի ու հարակից երկրների մշակույթների ու հասարակությունների զարգացման մեխանիզմները և առանձնահատկությունները,
4. հասկանալ հնագիտական ուսումնասիրության հիմնական խնդիրներն ու եղանակները:

Կտիրապետի՝

1. կիրառել գիտելիքները փաստացի նյութի ստուգաբանման ժամանակ,
2. ծրագրավորել հնագույն պատմության տվյալների բազաների և օբյեկտա-ռելացիոն կիրառությունները,
3. կողմնորոշվել հնագույն մշակույթների զարգացման տեսական հարցերում,
4. օգտվելու Հայաստանի և Եվրասիայի տարաբնույթ հնագիտական սկզբնաղբյուրներից և դրանք օգտագործել ապագա մասնագիտության մեջ,
5. օգտագործել հնագիտության հիմնական ձեռքբերումները:

Բովանդակություն

ԹԵՄԱ 1. Հնագիտությունը որպես պատմության օժանդակ գիտություն և բաղկացուցիչ մաս: Հնագիտական նյութի հայտնաբերման և թվագրման ժամանակակից եղանակներ /Պեղումներ, դրա տեսակները և ուսումնասիրման ձևերը, մեթոդները/: **ԹԵՄԱ 2.** Հնագիտության էպոխաները: Հին քարե դար /Պալեոլիթ/: Միջին քարե դար /Մեզոլիթ/: Նոր քարի դար /նեոլիթ/: Պղնձի դար /էնեոլիթ/: Դամբարանների տեսակները և թաղման ձևերը հնագույն անցյալում /Հնա-փոսային կամ գետնափոսային թաղումներ, կատակոմբներ/: Հայաստանի ժայռապատկերները: **ԹԵՄԱ 3.** Շենգավիթյան հնագիտական մշակույթ: Կուր-արաքսյան մշակույթ: Առանձնահատկություններն ու տեղը Առաջավորասիական քաղաքակրթության ձևավորման գործում:Սանդրո Սարդարյանի հետազոտությունների մասին: **ԹԵՄԱ 4.** Բրոնզի դար: Երկաթի դար: Հայաստանի բրոնզեդարյան և երկաթեդարյան հուշարձանները: Էմմա Խանզադյանի պեղումները: **ԹԵՄԱ 5.** Վանի և Անիի պեղումները 19-րդ դարավերջին: Սևանի ավազանի

առաջին հնագիտական ուսումնասիրողները: Ն. Յա. Մառի հնագիտական գործունեությունը Հայաստանում: Հ.Ա. Օրբելու դերը հայ հնագիտության զարգացման գործում: **ԹԵՄԱ 6.** Սևանի ավազանի տարբեր տարիների հնագիտական արշավախմբերը և ուսումնասիրող հնագետները: Հարություն Մնացականյանի պեղումները: Հնագիտության զարգացումը Հայաստանում: **ԹԵՄԱ 7.** Պատմական Հայաստանի քաղաքատեղիների պեղումներն ու դրանց նշանակությունն Հայաստանի պատմության ուսումնասիրման գործում: Կարմիր բլուրի պեղումները: Արին բերդի /Էրեբունի/ պեղումները: Արգիշտիխինիլի-Արմավիր քաղաքի պեղումները: Բորիս Պիոտրովսկի, Հարություն Մարտիրոսյան: **ԹԵՄԱ 8.** Արտաշատի և Դվին հին մայրաքաղաքի պեղումները: Կարո Ղաֆադարյան, Բաբկեն Առաքելյան, Գևորգ Տիրացյան, Արամ Քալանթարյան:

23/Բ30–Հին Արևելքի պատմություն (3 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար
1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ուսանողներին տեղեկություններ հաղորդել Հին Արևելյան քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման միտումների մասին, ինչպես նաև փոխանցել գիտելիքներ այդ քաղաքակրթությունների տիպաբանական, Հին Արևելյան հասարակությունների կառուցվածքի, գաղափարախոսության, կրոնի և մշակույթի վերաբերյալ: Ուսանողներին հաղորդակից դարձնել Հին Արևելքի հնագույն պետությունների պատմությանը, նրանց մոտ ձևավորել նյութը վերլուծելու, արժեվորելու և վերահիմաստավորելու կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Հին Արևելյան քաղաքակրթությունների ձևավորման ու զարգացման պատմությունը,
2. Առաջատար հնագույն պետությունների որոշիչ դերը աշխարհաքաղաքական հիմնական գործընթացներում,
3. Հին Արևելյան ժողովուրդների քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի առանձնահատկությունները և նրանց դերը մարդկության առաջընթացում,

Կկարողանա՝

1. Ճիշտ գնահատել Հին Արևելյան քաղաքակրթությունների դերակատարումը համաշխարհային պատմական գործընթացում,
2. Բացահայտել Հին Արևելքի պատմության կոնկրետ փաստերն ու իրադարձություններն ընդհանուր տեսությունների և գաղափարների դիտանկյունից,

3. Վերլուծել Հին Արևելյան քաղաքակրթությունների դրական և բացասական կողմերը, կատարել հետևություններ,

Կտիրապետի՝

1. Հին Արևելյան երկրների պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքներին,
2. Պատմական գիտության ժամանակակից ձեռքբերումներին, պատմական երևույթների և փաստերի վերլուծությանը:

Բովանդակություն

Թեմա 1. Հին Արևելքի պատմության ներածություն: **Թեմա 2.**Հին Միջագետքի քաղաքակրթությունը Ք.Ա. 4-1-Ին հազարամյակներում: **Թեմա 3**_Հին Եգիպտական քաղաքակրթությունը Ք. Ա. 4-1-Ին հազարամյակներում.: **Թեմա 4.** Հին Եգիպտական մշակույթը: **Թեմա 5.** Խեթական քաղաքակրթությունը Ք.Ա. 2-րդ հազարամյակում**:** **Թեմա 6.** Ասորեստանյան քաղաքակրթությունը Ք.Ա. 2-րդ հազարամյակում: **Թեմա 7.** Փյունիկյան և Հին Հրեական քաղաքակրթությունները Ք.Ա. 2-1-Ին հազարամյակներում: **Թեմա 8.** Հին Իրանական և Հին Հնդկական քաղաքակրթությունները Ք.Ա. 3-1-Ին հազարամյակներում: **Թեմա 9.** Հին Հնդկական մշակույթը: **Թեմա 10.** Հին Չինական քաղաքակրթությունը Ք.Ա. 2-1-Ին հազարամյակներում: **Թեմա 11.** Հին Չինական մշակույթը:

23/Բ31–Հին Հունաստանի և Հռոմի պատմություն (3 կրեդիտ)

10 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողի համար ըմբռնելի դարձնել Հին Հունաստանի և Հռոմի պատմության առանցքային հիմնահարցերն ու դրանց նշանակաությունը համաշխարհային պատմության համակարգում:
2. Ձևավորել հիմնարար գիտելիքներ համաշխարհային պատմության անտիկ շրջափուլի և նրա առանձնահատկությունների վերաբերյալ:
3. Արժևորել և կարևորել պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրման դերը համաշխարհային պատմության գործում, բացահայտել տարատեսակ և բազմաբնույթ աղբյուրների պատմական նշանակությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:
2. Անտիկ քաղաքակրթության տիպաբանությունը, զարգացման շրջափուլերը, կառուցակազմիկ բաղադրիչները:

3. Հին Հունաստանի և Հռոմի քաղաքական, տնտեսական, մշակութային պատմության հիմնական փաստերը և իրողությունները:

Կկարողանա՝

1. Հստակ պատկերացնել և ներկայացնել անտիկ քաղաքակրթության տիպաբանությունը:
2. Ներկայացնել և քննադատաբար վերլուծել Հին Հունաստանի և Հռոմի պատմության առանձին դեպքերը, իրադարձությունները, առանձին պատմական անհատների գործունեությունը, դրանք դիտարկել ընդհանուր պատմական, իսկ երբեմն էլ՝ քաղաքակրթական համատեքստում:
3. Գնահատել Հին հունական և հռոմեական քաղաքակրթության ինքնատիպությունների ձևավորման գործում պատմական կոնկրետ ժամանակի և պատմաքաղաքական իրողությունների ազդեցությունները:

Կտիրապետի՝

1. Ձեռք բերված գիտելիքները կիրառել այլ քաղաքակրթությունների տիպաբանության և պատմության ուսումնասիրության գործընթացում:
2. Համակարգել Հին Հունաստանի և Հռոմի պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքները, կատարել վերլուծություն, ինքնուրույն հետևություններ և հիմնավորել սեփական դիրքորոշումը:

Բովանդակություն

Բաժին առաջին. Թեմա 1. Հին Հունաստանի պատմության և քաղաքակրթության ներածություն: **Թեմա 2.** Սպարտան Ք.ա. 8-6-րդ դդ.: **Թեմա 3.** Հույն –Պարսկական պատերազմը Ք.ա. 5-րդ դ.: **Թեմա 4.** Հին Մակեդոնական պետությունը: **Թեմա 5.** Հին Հռոմի պատմության և քաղաքակրթության ուսումնասիրության ներածություն: **Թեմա 6.** Հռոմեական Հանրապետությունը Ք.ա. 3-1-րդ դարերում: **Թեմա 7.** Պայքար Կարթագենի դեմ Ք.ա. 3-2-րդ դդ.: **Թեմա 8.** Հանրապետական կարգի ճգնաժամը Ք.ա. 80-70-ական թթ:. Առաջին եռապետությունը (տրիումվիրատ) և քազաքացիական պատերազմը: **Թեմա 9.** Երկրորդ եռապետությունը (տրիումվիրատ) և քաղաքացիական պատերազմը: **Թեմա 10.** Հռոմեական կայսրության բաժանումը արևմտյան և արևելյան (Բյուզանդիա) հատվածների: Արևմտահռոմեական կայսրության անկումը(476թ.):

23/Բ48–Ռուսաստանի պատմություն-1 (5 կրեդիտ)

10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է գիտաճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսասատանի պատմության պատմական անցյալին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին,
2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, ճիշտ պատկերացում կունենա ներկա զարգացումների մասին:

Կկարողանա՝

1. սթափորեն վերլուծել փաստերը և անաչառ հետևություններ:

Կտիրապետի՝

1. օգտվել տարաբնույթ և տարալեզու սկբնաղբյուրներից, տիրապետել դրանց մեկնաբանման առանձնահատկություններին,
2. կատարելագործել զեկուցում պատրաստելու ու գիտական բանավեճ վարելու մշակույթը:

Բովանդակություն

Թեմա 1. Ժողովուրդներն ու հնագույն պետությունները Ռուսաստանի տարածքում: **Թեմա 2.** Արևելյան սլավոնները: **Թեմա 3.** Հին ռուսական պետության կազմավորումը: **Թեմա 4.** Կիևյան Ռուսիան՝ 9-12-րդ դ. սկիզբ: **Թեմա 5.** Ռուսական հողերն ու իշխանությունները 12-13-րդ դդ..: **Թեմա 6.** Հին ռուսական մինչմոնղոլական մշակույթը: **Թեմա 7.** Ռուսիայի պայքարը մոնղոլական նվաճողների և խաչակիրների դեմ 13-րդ դ.: **Թեմա 8.** Մոսկվայի իշխանության բարձրացումը 13-15-րդ դ. 1-ին կեսին: **Թեմա 9.** Մոսկվայի շուրջը ռուսական հողերի միավորման ավարտը: **Թեմա 10.** Ռուսական պետությունը 16-րդ դ.: **Թեմա 11.** Իվան Ահեղ: **Թեմա 12.** Ռուսաստանը 16-17-րդ դարերի սահմանագծին: **Թեմա 13.** Խառնակ ժամանակներ: **Թեմա 14.** Սոցիալ-տնտեսական զարգացումը 17-րդ դ.: **Թեմա 15.** Ռուսաստանը խառնակ ժամանակներից հետո: **Թեմա 16.** Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը 17-րդ դ.: **Թեմա 17.** «Խռովարար դար»: Թեմա 18. Ռուսական մշակույթը 13-17-րդ դդ.: **Թեմա 18.** Ռուսաստանը 17-րդ դ. վերջին-18-րդ դ. 1-ին քառորդին: **Թեմա 19.** Պյոտրյան վերափոխումները: **Թեմա 20.** Ազնվականական կայսրությունը և պալատական հեղաշրջումները 18-րդ դ. 2-րդ քառորդին: **Թեմա 21.** Ռուսաստանը 18-րդ դ. 2-րդ կեսին: **Թեմա 22.** Եկատերինա Մեծի լուսավորյալ միապետությունը: **Թեմա 23.** Ռուսական մշակույթը 18-րդ դ.:

23/Բ49–Ռուսաստանի պատմություն-2 (6 կրեդիտ)

14 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

1. Ուսումնասիրել ռուսական պետության տեղը և դերը համաշխարհային պատմության մեջ:
2. Ծանոթանալ Ռուսական պետության պատմության ուսումնասիրությանը բացարձակ միապետության ստեղծման ճանապարհին, ռուսական պետության պայքարին դեպի Բալթիկ և Սև ծովեր ելք ունենալու համար, Ռուսաստանի վերածվելը համաշխարհային մեծ տերության, ինչպես նաև հայ-ռուսական

հարաբերությունների սկզբնավորմանը և հետագա ժամանակաշրջանում դրա պատմական նշանակությանը:

3. Ուսումնասիրել ռուսական պետության պատմությունը 19-րդ դարի սկզբից մինչև 1917թ. ռուսական հեղափոխությունները:
4. Ուսումնասիրել այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի սահմանների ընդարձակումը, նրա մասնակցությունը Եվրոպայում տեղի ունեցող իրադարձություններին և Ռուսաստանի դիրքորոշմանը Արևելյան հարցում: Ռուսական կայսրության մուտքը Անդրկովկաս, այդ թվում՝ Արևելյան Հայաստան: Ռուսական կայսրության վարած ազգային-գաղութային քաղաքականությանը, այդ թվում՝ Արևելյան Հայաստանում: 19-րդ դարում Ռուսաստանում տեղի ունեցող հասարակական-քաղաքական շարժումներին և դրանց ազդեցությունը հայ հասարակական-քաղաքական շարժումների վրա ինչպես նաև 19-րդ դարի ռուսական մշակույթին:
5. Հաղորդակից դարձնել վերոնշյալ ժամանակաշրջանում Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականությանը, ռուսական կայսրության սահմանների ընդարձակմանը և Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին (ճորտատիրական իրավունքի վերացում, նարոդնիկական շարժման ծավալում, բանվորական կազմակերպությունների ստեղծում, քաղաքական կուսակցությունների հանդես գալ հեղափոխական շարժումներ և այլն): Ռուսաստանի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. 19-րդ դարի սկզբին Եվրոպայում տեղի ունեցող մեծ իրադարձություններին իր մշտական մասնակցությունն է ունեցել ռուսական կայսրությունը, Ռուսաստանը մասնակցելով Արևելյան հարցի լուծման եվրոպական տերությունների մրցավազքին՝ կարողացավ իր դիրքերը հաստատել Անդրկովկասում և Մեծ Դանուբյան իշխանություններում:
2. Ռուսաստանի պատմության 19-րդ դարի երկրորդ կեսը և 20-րդ դարի սկիզբը ընթացել է համաշխարհային պատմության զարգացմանը զուգահեռ և հանդիսացել է այդ պատմության անբաժան մասը: 19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքում պայքար է ծավալվում Ռուսաստանի հետամնացության վերացման և երկրի սոցիալ-տնտեսական կյանքում փոփոխությունների համար:

Կկարողանա՝

1. հասկանալ, որ Ռուսաստանում գոյություն ունեցող ճորտատիրական կարգերը խոչընդոտում էին Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը և ռուսական հասարակական-քաղաքական միտքը ամբողջությամբ միտված էր երկրում ճորտատիրական իրավունքի վերացմանը, որն իրա արձագանքներն

էր գտնում նաև կայսրության ծայրամասերում, այդ թվում նաև Արևելյան Հայաստանում,

2. գիտակցել, որ Ռուսաստանում ծավալվող հեղափոխական շարժումներին զուգահեռ ծավալվում էր նաև ոչ ռուս ժողովուրդների ազգային-ազատագարական շարժումները: Որ այս փուլում Ռուսաստանը մասնակցեց նաև առաջին համաշխարհային պատերազմին, որը պայքար էր աշխարհի վերաբաժանման համար: Ռուսաստանում ծավալված այդ հեղափոխական շարժումները ի վերջո հանգեցրին ցարիզմի տապալմանը:

Կտիրապետի՝

1. 19-րդ դարի առաջին կեսին ռուսական մշակույթը բուռն զարգացում է ապրում և այդ դարաշրջանի հետ է կապված դասական ռուսական գրականության, երաժշտության և արվեստի մյուս ճյուղերի ձևավորումը,
2. Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքում գաղափարախոսական նոր ուղղությունների՝ ինչպիսք էին նարոդնիկական և մարքսիստական գաղափարախոսությունների մասին:

Բովանդակություն

Թեմա 1. Իրադրությունը Ռուսասատանում 19-րդ դարի սկզբին: **Թեմա 2.** Ալեքսանդր Ի-ի ներքին և արտաքին քաղաքականությունը 1801-1812 թթ.: **Թեմա 3.** 1812 թ. Հայրենական պատերազմը: **Թեմա 4.** Ալեքսանդր Ի-ի կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը 1813-1825 թթ: **Թեմա 5.** Հասարակական շարժումները Ալեքսանդր Ի-ի կառավարման ժամանակաշրջանում: Դեկաբրիստներ: **Թեմա 6.** Ինքնակալության ներքին քաղաքականությունը և արտաքին քաղաքականությունը 19-րդ դարի երկրորդ քառորդում: **Թեմա 7.** Ազատագրական շարժումները և հասարակական միտքը Ռուսաստանում 19-րդ դարի երկրորդ քառորդում: **Թեմա 8.** Արևելյան ճգնաժամը 19-րդ դարի կեսին: **Թեմա 9.** Ճորտատիրական իրավունքի վերացումը: **Թեմա 10.** 1863-1874 թթ. բարեփոխումները: Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը բարեփոխումներից հետ: **Թեմա 11.** Ազատագրական շարժումները 60-80-ական թվականներին: Ռուս նարոդնիկությունը:

23/Բ50–Ռուսաստանի պատմություն-3 (4 կրեդիտ)

10 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար

7-րդ, կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը

Ուսանողների քաջատեղյակ դարձնել ցարական կարգերի տապալումից հետո խորհրդային համակարգի հաստատման գործընթացին, ինչպես նաև 1920-1930-ական թվականների խորհրդային իշխանության վարած ներքին և արտաքին քաղաքականությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա լիարժեք տեսական գիտելիքներ ձեռք բերի ոչ միայն Ռուսաստանի, այլև ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ժողովուրդների նորագույն պատմության վերաբերյալ,
Կկարողանա ճիշտ գնահատել Ռուսաստանի խաղացած դերը այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ճակատագրում:
Կտիրապետի 1920-1930-ական թվականներին Խորհրդային Միությունում տիրող հասարակական-քաղաքական կյանքի մասին,
Բովանդակություն
Թեմա 1. Քաղաքական ճգնաժամը և ինքնակալության անկումը Ռուսաստանում: Ռուսասատանը 1917 թ. փետրվար-հոկտեմբեր: **Թեմա 2.** Քաղաքացիական կռիվները Ռուսաստանում (1918-1922 թթ.): **Թեմա 3.** «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը: Անցումը ՆԷՊ-ին և նրա էությունը: **Թեմա 4.** ԽՍՀՄ կազմավորումը: Խորհրդային պետության միջազգային դրությունը 1920-ական թվականներին: **Թեմա 5.** Ինդուստրացումը ԽՍՀՄ-ում և նրա հետևանքները: **Թեմա 6.** Գյուղատնտեսության կոլեկտիվացումը և նրա բացասական հետևանքները : **Թեմա 7.** Վարչահրամայական համակարգի հաստատումը ԽՍՀՄ-ում և ստալինյան բռնաճնշումները 1930-ական թվականներին: **Թեմա 8.** Կուլտուրական շինարարությունը ԽՍՀՄ-ում 1920-30-ական թվականներին: **Թեմա 9.** ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը 1930-ական թվականներին:

23/Բ50/1–Ռուսաստանի պատմություն-4(3 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
8-րդ, կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակը
Գիտա-ճանաչողական գործընթացների միջոցով քաջատեղյակ դարձնել ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի Երկրորդ համաշխարհային, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմում խաղացած միջազգային դերի մասին: Հայրենական մեծ պատերազմին խորհրդային մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի մասնակցության մասին: Խորհրդային Միության և Ռուսաստանի հետպատերազմյան պատմության արդյունքներին:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա լիարժեք տեսական գիտելիքներ Խորհրդային Միության, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության պատմության մասին:
Կկարողանա հստակ պատկերացում կազմել խորհրդային հասարակության մեջ կատարված փոփոխություններին հետպատերազմյան շրջանում:
Կտիրապետի ներկա զարգացումներին և կատարել ճիշտ հետևություններ կյանքում:
Բովանդակությունը
Թեմա 1. ԽՍՀՄ-ը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.): **Թեմա** 2. Տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը ԽՍՀՄ-ում 1946-1953թթ:

Թեմա 3. Միջազգային իրադրությունը և ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը 1946-1953 թթ.: **Թեմա 4**. ԽՍՀՄ հասարակական-քաղաքկան և սոցիալ-տնտեսական զարգացումը խրուշչովյան «Ձնհալի» տարիներին (1953-1964 թթ.): **Թեմա 5.** Միջազգային իրադրությունը և ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը 1950-1960-ական թվականների սկզբներին: **Թեմա 6**. ԽՍՀՄ սոցիալ-տնտեսական զարգացումը լճացման տարիներին (1960-1980-ական թվականներ): **Թեմա 7**. Հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը ԽՍՀՄ-ում 1960-1980-ական թվականներին: **Թեմա 8**. ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը 1960-80-ական թվականներին: **Թեմա 9.** ԽՍՀՄ-ը գորբաչովյան վերակառուցման տարիներին (1985-1991թթ.): **Թեմա 10.** Ազգային հիմնախնդիրը ԽՍՀՄ-ում վերակառուցման տարիներին և հետխորհրդային շրջանում (1985-1990-ական թվականներ): **Թեմա 11.** Հետխորհրդային Ռուսաստանը 1990-ական թվականներին:

23/Բ36–Միջին դարերի պատմություն - 1 (4 կրեդիտ)
14 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
3-րդ, կիսամյակ, ստուգաք
Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին տալ Արևմտյան Եվրոպայի միջին դարերի պատմության վերաբերյալ համապարփակ գիտելիքներ:
2. Խորացնել մասնագիտական գիտելիքներն ու նրանց մեջ ձևավորել Արևմտյան Եվրոպայում հասարակական ու տնտեսական նոր տիպի հարաբերությունների ձևավորման ակունքների ու զարգացումների մեկնաբանումների կարողություններ:
3. Ուսանողին հասու դարձնել Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ու հետագա զարգացումներին:
4. Ուսանողին տալ միջնադարի պատմության երեք շրջափուլերի փոխկապակցվածությունը, առանձնահատկություններն ու նոր ձեռքբերումները:
5. Խորացնել նրանց գիտելիքները ուշ միջնադարում կայացած աշխարհագրական հայտնագործությունների ու գիտական նորամուծությունների մասին:
6. հասարակական նոր դասակարգերի՝ բուրժուազիայի և բանվոր դասակարգի կայացման ու դրանց փոխհարաբերությունների հետ կապված հիմնական գործընթացների նկարագիրը:
7. Ուսանողին հասու դարձնել Արևմտյան Եվրոպայի առավել զարգացած երկրներում ստեղծված տնտեսական նոր հարաբերությունների հետ կապված զարգացումներին ու առևտրա-արդյունաբերական խավի ձևավորման հետ կապված գործընթացներին:
8. Ուսանողին տալ Արևմտյան Եվրոպայի առավել զարգացած երկրների շահերի բախումների, աշխարհի վերաբաժանման ու դրա հետ կապված աշխարհաքաղաքական գործընթացներին վերաբերող համապարփակ գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա արևմտյան Եվրոպայի միջին դարերի պատմության երեք փուլերի նկարագիրն ու դրանց առանձնահատկությունները: Ընկալի ստրկատիրական հասարակությունից ֆեոդալական հասարակությանը անցնելու հետ կապված տնտեսական ու քաղաքական հիմնական գործընթացների հետևանքներն ու դրանց նշանակությունը արևմտաեվրոպական զարգացած և ուշ միջնադարյան քաղաքակրթության ձևավորման հարցում:

Կկարողանա բացահայտի միջնադարյան հասարակության կառուցվածքը և բովանդակությունը, արժևորի առանցքային իրադարձություններն ու տրամաբանորեն հասկանա դրանց փոխկապակցվածությունը:

Կտիրապետի արևմտյան Եվրոպայի միջին դարերի պատմությանն ու այն ներկայացնելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. «Միջին դարեր» հասկացությունը: **Թեմա 2.** Ժողովուրդների մեծ տեղաշարժը: **Թեմա 3.** Արևմտյան Հռոմեական կայսրության անկումն ու դրա աշխարհաքաղաքական հետևանքները: **Թեմա 4.** Բյուզանական կայսրության ձևավորումն ու նրա զարգացման վաղ շրջանի առանձնահատկությունները: **Թեմա 5.** Ֆրանկական Մերովինգյան թագավորությունը: **Թեմա 6.** Քրիստոնեության տարածումը Արևմտյան Եվրոպայի երկրներում: **Թեմա 7.** Սուրբ Պետրոսի Աթոռը: Պապի ու աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները: **Թեմա 8.** Գերմանական պետության ծնունդը: **Թեմա 9.** Իտալիան IX-XI դարերում: **Թեմա 10.** Անգլիան IX-XI դարերում: **Թեմա 11.** Հյուսիսային Եվրոպան IX-XI դարերում: **Թեմա 12.** Բյուզանդիան IX-XI դարերում: **Թեմա 13.** Արևմտյան Եվրոպայի մշակույթն ու հոգևոր կյանքը VII-XI դարերում: **Թեմա 14.** Ավատատիրական հասարակարգի ձևավորումը: **Թեմա 15.** Միջնադարյան քաղաքի ձևավորման նախադրյալները: **Թեմա 16.** Քրիստոնեական եկեղեցու պառակտումը: Հռոմեական եկեղեցու ճգնաժամը: Եկեղեցին 11-15-րդ դարերում: **Թեմա 17.** Պիրենեյները վաղ ու զարգացած միջնադարում: Իսպանական միապետության սկզբնավորումը:

23/Բ37–Միջին դարերի պատմություն - 2 (3 կրեդիտ)

10 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

4-րդ, կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին տալ Արևմտյան Եվրոպայի միջին դարերի պատմության վերաբերյալ համապարփակ գիտելիքներ:
2. Խորացնել մասնագիտական գիտելիքներն ու նրանց մեջ ձևավորել Արևմտյան Եվրոպայում հասարակական ու տնտեսական նոր տիպի հարաբերությունների ձևավորման ակունքների ու զարգացումների մեկնաբանումների կարողություններ:

3. Ուսանողին հասու դարձնել Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ու հետագա զարգացումներին:
4. Ուսանողին տալ միջնադարի պատմության երեք շրջափուլերի փոխկապակցվածությունը, առանձնահատկություններն ու նոր ձեռքբերումները:
5. Խորացնել նրանց գիտելիքները ուշ միջնադարում կայացած աշխարհագրական հայտնագործությունների ու գիտական նորամուծությունների մասին:
6. հասարակական նոր դասակարգերի՝ բուրժուազիայի և բանվոր դասակարգի կայացման ու դրանց փոխհարաբերությունների հետ կապված հիմնական գործընթացների նկարագիրը:
7. Ուսանողին հասու դարձնել Արևմտյան Եվրոպայի առավել զարգացած երկրներում ստեղծված տնտեսական նոր հարաբերությունների հետ կապված զարգացումներին ու առևտրա-արդյունաբերական խավի ձևավորման հետ կապված գործընթացներին:
8. Ուսանողին տալ Արևմտյան Եվրոպայի առավել զարգացած երկրների շահերի բախումների, աշխարհի վերաբաժանման ու դրա հետ կապված աշխարհաքաղաքական գործընթացներին վերաբերող համապարփակ գիտելիքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա արևմտյան Եվրոպայի միջին դարերի պատմության երեք փուլերի նկարագիրն ու դրանց առանձնահատկությունները: Ընկալի ստրկատիրական հասարակությունից ֆեոդալական հասարակությանը անցնելու հետ կապված տնտեսական ու քաղաքական հիմնական գործընթացների հետևանքներն ու դրանց նշանակությունը արևմտաեվրոպական զարգացած և ուշ միջնադարյան քաղաքակրթության ձևավորման հարցում:

Կկարողանա բացահայտի միջնադարյան հասարակության կառուցվածքը և բովանդակությունը, արժևորի առանցքային իրադարձություններն ու տրամաբանորեն հասկանա դրանց փոխկապակցվածությունը:

Կտիրապետի արևմտյան Եվրոպայի միջին դարերի պատմությանն ու այն ներկայացնելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Խաչակրաց արշավանքներն ու դրանց աշխարհաքաղաքական հետևանքները: **Թեմա 2.** Ֆրանսիան IX-XV դարերում: Կենտրոնացված պետության կազմավորման նախա-դրյալները: Ֆրանսիայի միավորումը: **Թեմա 3.** Անգլիան XI-XV դարերում: Անգլիական կենտրոնացված պետության ստեղծման առանձնահատկությունները: **Թեմա 4.** Հարյուրամյա պատերազմը /1337- 1453/: **Թեմա 5.** Գերմանիան XI-XV դարերում: **Թեմա 6.** Իտալիան XI – XV դարերում: **Թեմա 7.** Լեհաստանը X- XV դարերում: **Թեմա 8.** Բալկանյան երկրները XI-XIV դարերում: **Թեմա 9.** Օսմանյան թուրքերը Բալկաններում: **Թեմա 10.** Միջնադարյան համալսարանները: **Թեմա 11.** Բյուզանդական կայսրության անկումը: **Թեմա 12.** Վաղ

վերածնունդը և հումանիզմը Իտալիայում: **Թեմա 13.** Աշխարհագրական ու գիտական մեծ հայտնագործություններն ու գաղութատիրական համակարգի առաջացումը, 1455-1521թթ.: **Թեմա 14** Ռեֆորմացիան /1517-1555/: Գերմանիան 16-դարում և 17-րդ դ. սկզբներին: **Թեմա 15.** Անգլիան 16-17- րդ դարի առաջին կեսին: **Թեմա 16.** Ֆրանսիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 17.** Նիդերլանդական բուրժուական հեղափոխությունը: **Թեմա 18.** Միջազգային հարաբերությունները Եվրոպայում 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: Երեսունամյա պատերազմը /1618-1648 թթ/: **Թեմա 19.** Բնագիտության զարգացումը Արևմտյան Եվրոպայում:

23/Բ41-Նոր պատմություն- 1 (3 կրեդիտ)
8 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար
6-րդ, կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին տալ Արևմտյան Եվրոպայի նոր շրջանի պատմության վերաբերյալ համապարփակ գիտելիքներ:
2. Խորացնել մասնագիտական գիտելիքներն ու նրանց մեջ ձևավորել Արևմտյան Եվրոպայում հասարակական ու տնտեսական նոր տիպի հարաբերությունների ձևավորման ակունքների ու զարգացումների մեկնաբանումների կարողություններ:
3. Ուսանողին հասու դարձնել Արևմտյան Եվրոպայի առևտրա-արդյունաբերական համակարգի ձևավորման, զարգացման, արդյունաբերական ու գիտատեխնիկական հեղաշրջման և գաղութատիրական քաղաքականության զարգացումներին:
4. Ուսանողին տալ հասարակական նոր դասակարգերի՝ բուրժուազիայի և բանվոր դասակարգի կայացման ու դրանց փոխհարաբերությունների հետ կապված հիմնական գործընթացների նկարագիրը:
5. Ուսանողին հասու դարձնել Արևմտյան Եվրոպայի առավել զարգացած պետությունների շահերի բախումների, աշխարհի վերաբաժանման ու դրա հետ կապված աշխարհաքաղաքական գործընթացներին:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. դասընթացի բովանդակության առանցքային գործընթացները,
2. արևմտյան Եվրոպայի նոր պատմության փուլերն ու դրանց հիմնական ձեռքբերումներն ու առանձնահատկությունները,
3. դասընթացի ուսումնասիրման հիմնական մեթոդներն ու սկզբունքները, պատմական աղբյուրների ուսումնասիրման-հետազոտման մեթոդիկան,
4. տարածաշրջանում տեղի ունեցած աշխարհաքաղական առանցքային գործընթացների պատմահամեմատական ընկալում և մեկնաբանում:

Կկարողանա՝

1. ճշտորեն և հմտորեն օգտվել տարատեսակ ու բազմաբնույթ աղբյուրների տեղեկույթի հնարավորություններից՝ մասնագիտական խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելիս և լուծումներ առաջարկելիս,
2. իրականացնել տարատեսակ ու բազմաշերտ աղբյուրների արդյունավետ հետազոտում և տեղեկույթի փնտրտուք,
3. քննադատորեն վերլուծել պատմական այս կամ այն իրադարձությանը վերաբերող աղբյուրներին ու գիատական ուսումնասիրությունների հայեցակետերը,
4. տրամաբանորեն ճիշտ, պարզ և հիմնավորված կառուցել բանավոր և գրավոր խոսքը,
5. հրապարակավ պաշտպանել սեփական դիրքորոշումները, տեսակետներն ու մոտեցումները,
6. համադրել Նոր շրջանին նախորդած պատմական աշխարհաքաղաքական նշանակության իրադարձություններն ու երևույթներն տալ գրանց փոխկապացվածությունն ու մեկնաբանել ադյունքները:

Կտիրապետի՝

1. պատմական աղբյուրների և պատմական գրականության հետ աշխատելու, ուսումնասիրելու, դրանք փնտրել, գտնելու ընդունակություն,
2. տարբեր պատմագիտական դպրոցների հայեցակարգերը քննադատորեն ընդունելու և վերլուծելու ընդունակություն,
3. հրապարակային ելույթներ և բանավեճեր վարելու ձևերի տիրապետում,
4. պատմական ժառանգության, մշակույթի, քաղաքացիության և մարդասիրության հիմնարար արժեքների վերաբերյալ պատկերացումների ըմբռնում,
5. գիտելիքները մշտապես զարգացնելու անհրաժեշտության ըմբռնում:

Բովանդակություն

Թեմա 1. Երեսնամյա պատերազմի ազդեցությունը եվրոպական երկրների փոխհարաբերությունների հետագա զարգացումների վրա: **Թեմա 2.** Անգլիան Ստյուարտների օրոք: **Թեմա 3.** Արդյունաբերական հեղաշրջում Անգլիայում: Անգլիան 18-րդ վերջին և 19- րդ դարի սկզբին: **Թեմա 4.** Ֆրանսիան Լյուդովիկոս 14-րդի օրոք /1643-1715/: **Թեմա 5.** Ֆրանսիան 1715-1789 թվականներին: **Թեմա 6**. Իսպանիան ու Պորտուգալիան 17-րդ դ. երկրորդ կեսին ու 18-րդ դարում: **Թեմա 7.** Գերմանական երկրները 17-րդ դ. երկրորդ կեսին ու 19-րդ դ. առաջին կեսին: **Թեմա 8**. Ավստրիան 17-րդ դ. երկրորդ կեսին ու 18-րդ դարում: **Թեմա 9.** Իտալիան 17-րդ դ. երկրորդ կեսին ու 18- րդ դարում: **Թեմա 10.** Հոլանդիան և Բելգիան 17-րդ դ. երկրորդ կեսին ու 18-րդ դարում: **Թեմա 11.** Հյուսիսային Եվրոպայի երկրները 17-րդ դ. երկրորդ կեսին ու 18-րդ դարում: **Թեմա 12.** Անգլիական գաղութները Հյուսիսային Ամերիկայում 17-18-րդ դարերում: **Թեմա 13.** Լուսավորության դարաշրջանը: **Թեմա 14**. Ֆրանսիան 1789-1795 թթ: **Թեմա 15.** Նապոլեոն Բոնապարտի դարաշրջանը /1799-1815/:

23/Բ42-Նոր պատմություն -2 (4 կրեդիտ)
10 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար
7-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է՝

1. Ուսանողներին տալ Արևմտյան Եվրոպայի նոր շրջանի պատմության վերաբերյալ համապարփակ գիտելիքներ:
2. Խորացնել մասնագիտական գիտելիքներն ու նրանց մեջ ձևավորել Արևմտյան Եվրոպայում հասարակական ու տնտեսական նոր տիպի հարաբերությունների ձևավորման ակունքների ու զարգացումների մեկնաբանումների կարողություններ:
3. Ուսանողին հասու դարձնել Արևմտյան Եվրոպայի առևտրա-արդյունաբերական համակարգի ձևավորման, զարգացման, արդյունաբերական ու գիտատեխնիկական հեղաշրջման և գաղութատիրական քաղաքականության զարգացումներին:
4. Ուսանողին տալ հասարակական նոր դասակարգերի՝ բուրժուազիայի և բանվոր դասակարգի կայացման ու դրանց փոխհարաբերությունների հետ կապված հիմնական գործընթացների նկարագիրը:
5. Ուսանողին հասու դարձնել Արևմտյան Եվրոպայի առավել զարգացած պետությունների շահերի բախումների, աշխարհի վերաբաժանման ու դրա հետ կապված աշխարհաքաղաքական գործընթացներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. դասընթացի բովանդակության առանցքային գործընթացները,
2. արևմտյան Եվրոպայի նոր պատմության փուլերն ու դրանց հիմնական ձեռքբերումներն ու առանձնահատկությունները,
3. դասընթացի ուսումնասիրման հիմնական մեթոդներն ու սկզբունքները, պատմական աղբյուրների ուսումնասիրման-հետազոտման մեթոդիկան,
4. տարածաշրջանում տեղի ունեցած աշխարհաքաղական առանցքային գործընթացների պատմահամեմատական ընկալում և մեկնաբանում:

Կկարողանա՝

1. հմտորեն օգտվել տարատեսակ ու բազմաբնույթ աղբյուրների տեղեկույթի հնարավորություններից՝ մասնագիտական խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելիս և լուծումներ առաջարկելիս,
2. իրականացնել տարատեսակ ու բազմաշերտ աղբյուրների արդյունավետ հետազոտում և տեղեկույթի փնտրտուք,
3. քննադատորեն վերլուծել պատմական այս կամ այն իրադարձությանը վերաբերող աղբյուրներին ու գիատական ուսումնասիրությունների հայեցակետերը:

4. տրամաբանորեն ճիշտ, պարզ և հիմնավորված կառուցել բանավոր և գրավոր խոսքը,
5. հրապարակավ պաշտպանել սեփական դիրքորոշումները, տեսակետներն ու մոտեցումները,
6. համադրել Նոր շրջանին նախորդած պատմական աշխարհաքաղաքական նշանակության իրադարձություններն ու երևույթներն տալ գրանց փոխկապացվածությունն ու մեկնաբանել ադյունքները:

Կտիրապետի՝

1. պատմական աղբյուրների և պատմական գրականության հետ աշխատելու, ուսումնասիրելու, դրանք փնտրել, գտնելու ընդունակություն,
2. տարբեր պատմագիտական դպրոցների հայեցակարգերը քննադատորեն ընդունելու և վերլուծելու ընդունակություն,
3. հրապարակային ելույթներ և բանավեճեր վարելու ձևերի տիրապետում,
4. պատմական ժառանգության, մշակույթի, քաղաքացիության և մարդասիրության հիմնարար արժեքների վերաբերյալ պատկերացումների ըմբռնում,
5. գիտելիքները մշտապես զարգացնելու անհրաժեշտության ըմբռնում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մեծ Բրիտանիան 1870-1914 թթ.: **Թեմա 2.** Ֆրանսիան 1815-1870 թվականներին: **Թեմա 3.** Ֆրանսիան 1870-1914 թվականներին: **Թեմա 4.** Իսպանիան և Պորտուգալիան 1870-1914 թթ: **Թեմա 5.** Գերմանիան 1871 – 1914 թթ.: **Թեմա 6.** Իտալիան 19-րդ դարի առաջին կեսում ու 20-րդ դ. սկզբներին: **Թեմա 7.** Հոլանդիան և Բելգիան 1870-1914 թթ: **Թեմա 8.** Հյուսիսային Եվրոպայի երկրները 1870-1914 թթ: **Թեմա 10.** Ավստրո-Հունգարիան 1867-1918թթ: **Թեմա 11.** Արևելյան և հարավային Եվրոպան 1870-1918 թթ: **Թեմա 12.** ԱՄՆ-ը 19-րդ դարում: **Թեմա 13.** Եվրոպայի երկրների ու ԱՄՆ-ի ժողովուրդների հոգևոր կյանքը, կենցաղն ու բարքերը նոր ժամանակներում: **Թեմա 14.** Նոր ժամանակների հիմնական ձեռքբերումները: **Թեմա 15.** Եվրոպան առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: **Թեմա 16.** Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: **Թեմա 17.** Պատերազմական գործողությունների արևելյան ռազմաբեմը 1914-1915 թթ: **Թեմա 18.** Պատերազմական գործողությունները Բալկաններում ու թուրքական ճակատներում, 1915-1916 թթ: **Թեմա 19.** Պատերազմի մեջ նոր երկրների ներքաշվելը (Իտալիա, Բուլղարիա, այնուհետև ԱՄՆ, Կանադա): **Թեմա 20.** Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: **Թեմա 21.** Առաջին աշխարհամարտը (1914-1918 թթ):

23/Բ43-Նորագույն պատմություն-1 (6 կրեդիտ)

16 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

8-րդ, կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

1. Ծանոթանալ Նորագույն պատմության զարգացմանը,

2. խորացնել ուսանողների մասնագիտական գիտելիքները, ձևավորել ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների իրականացման հմտություններ,

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա նորագույն դարաշրջանի Եվրոպայի և Ամերիկայի պատմության, զարգացման տարբեր շրջափուլերի:

Կկարողանա գնահատել քաղաքական զարգացումները, անել անհրաժեշտ եզրահանգումներ գլոբալ աշխարհաքաղաքական զարգացումների վերաբերյալ,

Կտիրապետի՝

1. կատարել գիտահետազոտական ուսումնասիրություն,
2. օգտվել անհրաժեշտ սկզբնաղբյուրներից:

Բովանդակություն

Թեմա 1 Միջազգային հարաբերությունները 1918-1923թթ.: **Թեմա 2** Գերմանիան 1918-1939թթ.: **Թեմա 3**. Անգլիան 1918-1939թթ.: **Թեմա 4**. Ֆրանսիան 1918-1939թթ.: **Թեմա 5**. ԱՄՆ-ը 1918-1939թթ.: **Թեմա 6** Իտալիան 1918-1939թթ.: **Թեմա 7**. Իսպանիան 1918-1939թթ. հետո: **Թեմա 8** Ավստրիան 1918-1939թթ.: **Թեմա 9**. Հունգարիան 1918-1939թթ.: **Թեմա 10**. Ռումինիան 1918-1939թթ.: **Թեմա 11**. Ալբանիան 1918-1939թթ.: **Թեմա 12**. Հունաստանը 1918-1939թթ.: **Թեմա 13**. Բելգիան 1918-1939թթ.: **Թեմա 14** Նիդերլանդները 1918-1939թթ.: **Թեմա 15**. Սկանդինավյան երկրները 1918-1939թթ.: **Թեմա 16**. Լատինական Ամերիկայի երկրները 1918-1939թթ.: **Թեմա 17** Կանադան 1918-1939թթ.: **Թեմա 18**. Միջազգային հարաբերությունները 1924-1939թթ.:

23/Բ43/1-Նորագույն պատմություն-2 (6 կրեդիտ)

18 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար

9-րդ, կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ձևավորել պատմական աղբյուրների փնտրման-հայտնաբերման, քննադատական վերլուծման և համակարգման կարողություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա 20-21 դդ-21 դդ. հասարակական-քաղաքական զարգացման միտումների վերաբերյալ:

Կկարողանա՝

1. հարկ եղած դեպքում ներկայացնել արդի հասարակական-քաղաքական զարգացումների հիմքերը,
2. կատարել գիտա-հետազոտական ուսումնասիրություն,օգտվել անհրաժեշտ սկզբնաղբյուրներից, մասնակցել գիտաժողովների և բանավեճեր:

Կտիրապետի գիտաժողովների և բանավեճերի մասնակցելու հմտությանը:

Բովանդակություն

Թեմա 1. Երկրորդ համաշխարհային պատերազմը. 1939-1945թթ.: **Թեմա 2** Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի կազմավորումը և զարգացումը: **Թեմա 3.** Ռումինիայի սոցիալիստական հանրապետության կազմավորումը և զարգացումը: **Թեմա 4**. Հունգարիայի ժողովրդական հանրապետության կազմավորումը և զարգացումը: **Թեմա 5**. Ալբանիայի ժողովրդական հանրապետության կազմավորումը և զարգացումը: **Թեմա 6**. Գերմանական դեմոկրատական հանրապետության կազմավորումը և զարգացումը: **Թեմա 7**. Կուբան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: **Թեմա 8**. Ամերիկայի Միացյալ Նահանգներ: **Թեմա 9**. Անգլիա: **Թեմա 10**. Ֆրանսիա: **Թեմա 11**. Իտալիա: **Թեմա 12**. Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետություն: **Թեմա 13**. Ավստրիա: **Թեմա 14**. Կանադա: **Թեմա 15**. Հունաստան: **Թեմա 16**. Իսպանիա: **Թեմա 17**. Բելգիա: **Թեմա 18**. Նիդեռլանդներ: **Թեմա 19**. Սկանդինավյան երկրներ: **Թեմա 20**. Ֆինլանդիա: **Թեմա 21**. Պորտուգալիա: **Թեմա 22**. Իռլանդիա: **Թեմա** 23. Լատինական Ամերիկայի երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: **Թեմա 24**. Միջազգային հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

23/Բ10- Կովկասի և Հայաստանի հարակից երկրների պատմություն-1 (4 կրեդիտ)
12 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար
7-րդ, կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ներկայացնել Կովկասի և Հայաստանի հարակից երկրների պատմությունը, նրանց ժողովուրդների հասարակական – քաղաքական և մշակութային զարգացման առանձնահատկությունները՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝ ասիական երկրների զարգացման առանձնահատկությունները:

Կկարողանա՝ ճշգրտորեն գնահատել ասիական ժողովուրդների ունեցած ավանդը համաշխարհային պատմության մեջ:

Կտիրապետի՝ ասիական ժողովուրդների սոցիալ–տնտեսական, հասարակական քաղաքական, հոգևոր-մշակույթային արժեքներին:

Բովանդակությունը

Թեմա 1. Օսմանյան պետության կազմավորումը և վերածումը կայսրության /13-16-րդ դդ./: **Թեմա 2.** Օսմանյան կայսրությունը իր հզորության գագաթնակետին / 16-17-րդ դդ./: **Թեմա 3.** Օսմանյան կայսրությունը նոր շրջանում: **Թեմա 4**. Օսմանյան կայսրությունը 1876-1918թթ.: **Թեմա 5**. Թուրքիան 1920-1990 թթ.: **Թեմա 6**. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը /1991-2009թթ./: **Թեմա 7**. Հին Իրան:

Թեմա 8. Իրանը մ.թ. սկզբին: **Թեմա 9.** Իրանը 7-15-րդ դարերում: **Թեմա 10.** Իրանը 18-19-րդ դարերում: **Թեմա 11**. Իրանը 20-րդ դարի սկզբին: **Թեմա 12**. Քաղաքական իրադարձություններն Իրանում Առաջին աշխարհամարտից հետո և 20-րդ դարի 20-

ական թթ: **Թեմա 13.** Իրանը 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին: Թեմա 14. Իրանը հետպատերազմյան շրջանում 1950-1977թթ.: **Թեմա 15**. 1978-1979թթ. իսլամական հեղափոխությունը և Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծումը: **Թեմա 16**. Իրանը հետխոմեյնիական շրջանում:

23/Բ11- Կովկասի և Հայաստանի հարակից երկրների պատմություն-2 (5 կրեդիտ)
16 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար
8-րդ, կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է ուսանողներին ճանաչողական, գիտա-տեսական և քաղաքական դիտանկյուններով ներկայացնել Կովկասի և Հայաստանի հարակից երկրների պատմությունը լուսաբանել տարաբնույթ վիճահարույց և միմյանց հակադիր տեսակետներ:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա հարևան երկրների պատմությունը:
Կկարողանա կատարել տեսական ընդհանրացումներ:
Կտիրապետի հարևան ժողովուրդների պատմական զարգացման առանձնահատկություններին, նրանց քաղաքակրթությունների էությանը:
Բովանդակություն
Թեմա 1. Վրաստանը հնագույն ժամանակներում: **Թեմա** 2. Վրաստանը 4-8-րդ դարերում: **Թեմա**3. Վրաստանը 9-11-րդ դարերում: **Թեմա**4. Վրաստանը 13-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի սկիզբը: **Թեմա 5**. Վրաստանը 19-րդ դարում - 20-րդ դարի սկզբին: **Թեմա 6.** Վրաստանը խորհրդային ժամանակաշրջանում: **Թեմա 7.** Վրաստանը հետխորհրդային տարիներին: **Թեմա 8.** Արևելյան Անդրկովկասը 8-16-րդ դարերում: **Թեմա 9.** Արևելյան Անդրկովկասը 16-րդ դարում -19-րդ դարի սկզբին: **Թեմա 10.**Արևելյան Անդրկովկասը ռուսական կայսրության կազմում: **Թեմա 11.** Արևելյան Անդրկովկասը 20-րդ դարի սկզբին: **Թեմա 12.** Ադրբեջանի անկախ հանրապետությունը 1918-20 թթ.: **Թեմա 13.** Ադրբեջանի խորհրդայնացումը և հարաբերությունները հարևան երկրների հետ (1920 - 1921 թթ.): **Թեմա 14.** Ադրբեջանը խորհրդային տարիներին (1921-1980-ական թթ.): **Թեմա 15.** Ադրբեջանի հանրապետությունը հետխորհրդային տարիներին:

23/Բ02–Թանգարանագիտություն և արխիվագիտությունն (2 կրեդիտ)
12 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար
4-րդ, կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել թանգարանագիտություն և արխիվագիտություն հասկացություններին ու դրանց պատմությանը: Ըմբռնելի դարձնել դրանց կարևորությունը պատմամշակութային տեղեկույթի պահպանման, քարոզչության ու փոխանցման հարցերում: Ձևավորել թանգարանային արժեքների փնտրման, դրանց պարունակած տեղեկույթների գիտական վերլուծման ու

հիմնավորման կարողություններ: Արժևորել և կարևորել պատմամշակութային շարժական հուշարձանների ուսումնասիրման դերը համաշխարհային պատմության գործում, բացահայտել տարատեսակ և բազմաբնույթ աղբյուրների պատմական նշանակությանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Դասընթացի հիմնարար-բազային նյութերը,
2. թանգարանների և արխիվների տիպերն ու դրանց առանձնահատկությունները,
3. թանգարանային արժեքների և արխիվային նյութերի դերը մարդկային քաղաքակրթության պատմամշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների ուսումնասիրման գործում,
4. թանգարանային արժեքների և արխիվային նյութերի դասակարգման և հետազոտման սկզբունքները,
5. թանգարանային արժեքների և արխիվային նյութերի պահպանման և ցուցադրման սկզբունքները,

Կկարողանա՝

1. ճշտորեն և հմտորեն օգտվել տարատեսակ ու բազմաբնույթ աղբյուրների տեղեկույթի հնարավորություններից՝ մասնագիտական խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելիս և լուծումներ առաջարկելիս,
2. իրականացնել տարատեսակ ու բազմաշերտ աղբյուրների արդյունավետ հետազոտում և տեղեկույթի փնտրտուք,
3. քննադատորեն վերլուծել տեղեկույթի պատմական աղբյուրները,
4. համառոտագրել և ամփոփել թանգարանային արժեքի և արխիվային նյութի նկարագրություններն ու շարադրանքները,
5. տրամաբանորեն ճիշտ, պարզ և հիմնավորված կառուցել բանավոր և գրավոր խոսքը,
6. ըմբռնել թանգարանային արժեքի ցուցադրման անհրաժեշտությունը, հասկանալ դրա տեղն ու նպատակը ցուցադրության ընդհանուր համալիրում,
7. գիտականորեն հիմնավորել թանգարանային արժեքի պարունակած պատմամշա-կութային տեղեկույթն ու այն համադրել այլ սկզբնաղբյուրների հետ:

Կտիրապետի՝

1. թանգարանային արժեքների և արխիվային նյութերի գիտական անձնագրերի կազմում, դրանց ուսումնասիրում,
2. թանգարանային արժեքների և արխիվային նյութերի հավաքչական աշխատանքների իրականացում,
3. թանգարանային արժեքների և արխիվային նյութերի ցուցադրման ու հանրահռչակման իրականացում,
4. հրապարակային ելույթներ և բանավեճեր վարելու ձևերին տիրապետում,

5. թանգարանային արժեքների և արխիվային նյութերի հաշվառման, անձնագրավորման ու պահպանության իրականացում,

Բովանդակություն

Թեմա 1. Դասընթացի առարկան և խնդիրները: «Թանգարան» և «թանգարանային առարկա» հասկացությունների մասին: **Թեմա 2**. Թանգարաններն ու թանգարանագիտությունը Հայաստանում: **Թեմա 3**. Թանգարանային հավաքածուների ստեղծման մեթոդներն ու հիմունքները արդի ազգագրական թանգարանագիտության մեջ: **Թեմա 4**. Թանգարանային առարկաների հաշվառման և դասակարգման թանգարանագիտական հիմունքներն ու մեթոդիկան: **Թեմա 5**. Հավաքածուների պահպանման թանգարանագիտական սկզբունքները: Թանգարանային առարկայի կոնսերվացում և վերականգնում: **Թեմա 6**. Ցուցադրության կազմակերպման հիմունքներն ու մեթոդները. **Թեմա 7**. Թանգարանը և հանրույթը: պատմազգագրական ավանդույթների քարոզչության թանգարանագիտական արդի մեթոդները: **Թեմա 8**. Թանգարանային հավաքածուների ուսումնասիրման թանգարանագիտական ու ազգաբանական խնդիրները:

3.2 Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

23/Բ16 – Հայ եկեղեցու պատմություն (6 կրեդիտ)

12 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար

9-րդ, կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել Հայ առաքելական եկեղեցու ծագման, ձևավորման և զարգացման մասին, ծանոթացնել հայոց եկեղեցու դավանաբանական, պաշտամունքային հիմնական օրինաչափություններին ու առանձնահատկություններին, տոնածիսական համակարգին ու պատմության կարևորագույն իրադարձություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. հայ առաքելական եկեղեցու ձևավորումը, զարգացում,
2. Հայոց եկեղեցու դավանաբանական առանձնահատկութունները,
3. Հաոց եկեղեցու ծիսապաշտամունքաին համակարգը,
4. Քրիստոնեության տարածումը Հայաստանում, Հաոց եկեղեցին IV դարում,
5. Հաոց եկեղեցին V-Xդդ.,
6. Հայ առաքելական եկեղեցու պատմութունը XI-XIX դարերում,
7. Հայ առաքելական եկեղեցին XX դարում:

Կկարողանա՝

1. սահմանել Հայ առաքելական եկեղեցու դավանաբանություն,

2. վերլուծել Հայոց եկեղեցու տոնածիսական համակարգ,
3. խմբավորել Հայոց եկեղեցու տոները,
4. իրականացնել Հայոց եկեղեցու պատմության տարբեր շրջանների վերլուծութուն և քննական արժևորում,
5. բացահայտել Հայոց եկեղեցու պատմության տարբեր փուլերի հիմնական առանձնահատկություններն ու բնորոշ գծերը:

Կտիրապետի՝

1. Հայ առաքելական եկեղեցու դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկություններին, բացատրել և լուսաբանել Հայոց եկեղեցու ուսումնասիրության մեթոդներն ու սկզբունքերը,
2. Հայ առաքելական եկեղեցու պատմությանը, կարող է վերլուծել և մեկնաբանել Հայոց եկեղեցու հիմնական առանձնահատկությունները, Հայոց գործունեությունը:

Բովանդակություն

Թեմա 1.Հայ առաքելական եկեղեցու պատմության առարկան, էությունը, կառուցվածքը և հասկացությունների ու կատեգորիաների համակարգը: **Թեմա 2.**Քրիստոնեության տարածումը Հայաստանում: **Թեմա 3.** Քրիստոնեության վերածումը պետական կրոնի. Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ Մեծ: **Թեմա 4**. Հայ Առաքելական պետական եկեղեցու կազմավորումը, կառուցվածքը, նվիրապետական հաստատությունը, վարդապետությունը և վերաբերմունքը քրիստոնեության առաջին (Նիկեայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի) տիեզերաժողովների և Քաղկեդոնի ժողովի նկատմամբ: **Թեմա 5.** Հայ եկեղեցու և մինչքրիստոնեական ազգային մշակույթի առնչությունները: **Թեմա 6.** Տեղական եկեղեցական ժողովները: Հայ եկեղեցու դավանաբանության և պաշտամունքի մշակումը: **Թեմա 7.** Դավանաբանության հիմնական սկզբունքները. «Յաճախապատում ճառք», «Կնիք հաւատոյ», «Գիրք Թղթոց»: **Թեմա 8.** Հայ եկեղեցու խորհուրդները: **Թեմա 9.** Պաշտամունքային (ծիսական) ժողովածուների (Ժամագիրք, Շարակնոց, Ճաշոց գիրք, Տոնացույց, Մաշտոց, Պատարագացույց, Տաղարան) ստեղծումը և բովանդակությունը: **Թեմա 10.**Տոներն ու ծիսական համակարգը: **Թեմա 11.**Հայ եկեղեցին Գրիգոր Լուսավորչի հաջորդների օրոք: **Թեմա 12**.Ներսես Մեծ: Բարեկարգչական և լուսավորչական գործունեությունը: Դավանաբանական և կանոնական ձեռնարկումները. Աշտիշատի ժողովը: **Թեմա 13.**Հայ գրերի գյուտը և «Թարգմանչաց շարժումը»: Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև: Աստվածաշնչի և եկեղեցու հայրերի հիմնարար գործերի թարգմանությունը հայերեն: **Թեմա 14.** Ինքնուրույն աստվածաբանական, ջատագովական և դավանաբանական գրականության սկզբնավորումը: Վկայաբանական և Վարքաբանական գրականության ստեղծումը: Եկեղեցու հայացումը: **Թեմա 15.** Հայ եկեղեցին և V-VI դարերի ազգային-ազատագրական շարժումները: **Թեմա 16.** Հայ եկեղեցու վարչական կառուցվածքը VI դարում: **Թեմա 17.** Հայ եկեղեցին արաբական տիրապետության շրջանում: **Թեմա 18.**Աղանդավորական և պատկերամարտական շարժումները և Հայ Եկեղեցին: Հայ

եկեղեցին Բագրատունյաց արքայատոհմի հաստատման շրջանում: **Թեմա 19.**Հայ Առաքելական Եկեղեցին և Ոսկեդարի հայ մշակույթը: **Թեմա 20.** Հայ եկեղեցու հայրենաշեն գործունեությունը Բագրատունյաց Հայաստանում: Կաթողիկոսության հաստատումը Անիում: **Թեմա 21.** Հայ եկեղեցու թեմերի աշխարհագրական ծավալումը: Կրոնական նոր կենտրոնների և միաբանությունների հիմնադրումը: **Թեմա 22.** Դվինի, Սյունիքի, Աղթամարի, Տաթևի, Կարսի, Անիի, Հաղպատի, Սսի և եկեղեցական նշանավոր այլ կենտրոնների բարգավաճումը և դրանց ականավոր ներկայացուցիչների գործունեությունը: **Թեմա 23.** Կաթողիկոսական պառակտումները և կաթողիկոսական ընտրության նոր կանոնակարգի ընդունումը: **Թեմա 24.** Հայ-ասորական եկեղեցական հարաբերությունները: Հայ-կաթոլիկ եկեղեցիների հարաբերության սկիզբը: Հայ և բյուզանդական եկեղեցիների միության փորձերը: **Թեմա 25.** Հայոց հայրապետական աթոռի հաստատումը Կիլիկիայում: Ունիթորների և հակաունիթորների պայքարը: **Թեմա 26.** Հայ եկեղեցին Զաքարյան իշխանապետության շրջանում: Հայ-վրացական եկեղեցական տարաձայնությունները: **Թեմա 27.** Հայ եկեղեցին և X-XIV դարերի ազգային մշակույթը: **Թեմա 28.**Հայ եկեղեցին թուրքմենական ցեղերի, օսմանյան և պարսկական բռնապետությունների շրջանում: **Թեմա 29.** Հայրապետական աթոռի վերադարձը Էջմիածին: Սսի կաթողիկոսության վերահաստատումը: **Թեմա 30.** Կ. Պոլսի պատրիարքության հաստատումը և նրա դերը արևմտահայության հոգևոր, հասարակական և մշակութային կյանքում: Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը: Երուսաղեմի պատրիարքության գործունեությունը: **Թեմա 31.** Հայ եկեղեցու պայքարը գաղութահայության ազգապահպանության համար: Եկեղեցու միավորող և ազգահավաք գործունեությունը: **Թեմա 32.** Հայ եկեղեցին և XV-XVIII դարերի ազգային-ազատագրական շարժումները: Հակոբ Ջուղայեցի: Սիմեոն Երևանցի: Եսայի Հասան-Ջալալյան: **Թեմա 33.** Մխիթարյանների հայ կաթոլիկ միաբանության հիմնադրումը և ազգանըպաստ գործունեությունը: Մխիթար Սեբաստացի: **Թեմա 34.** Հայ եկեղեցին և XV-XVIII դարերի ազգային մշակույթը: **Թեմա 35.**Հայոց կաթողիկոսությունը XIX դարասկզբին: Եկեղեցու դիրքորոշումը ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Ներսես Աշտարակեցի: **Թեմա 36.**Ցարական Ռուսաստանը և Հայ Եկեղեցին: Եկեղեցու միավորիչ և ազգապահպան դերի բարձրացումը: Օսմանյան և ցարական կայսրությունների հայահալած քաղաքականությունը և Հայ եկեղեցու դիրքորոշումը: **Թեմա 37.**Հայկական հարցը և հայ եկեղեցին: Խրիմյան Հայրիկ: Հայ եկեղեցին և դիմադրական շարժումները: **Թեմա 38.**Հայ Առաքելական Եկեղեցին XX դարասկզբին: Հայկական բարենորոգումների հարցը և եկեղեցու դիրքորոշումը: **Թեմա 39.**Հայ եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին: Հայ եկեղեցին առաջին Հանրապետության շրջանում: **Թեմա 40.**Խորհրդային կարգերի հաստատումը և Հայ Եկեղեցին: Գևորգ Ե: Չեզոքության կողմնորոշումը: **Թեմա 41.**Խորեն Մուրադբեկյան: Հոգևոր դասի հալածանքները: Հայ եկեղեցին երկրորդ Աշխարհամարտի տարիներին: Հայ եկեղեցին և Սփյուռքահայությունը. Գևորգ Զ Չորեքչյան: Գարեգին Ա Հովսեփյան: **Թեմա 42.**Հայ Եկեղեցու արդի վիճակը:

Հայ եկեղեցին և էկումենիկ շարժումը: Հայաստանի Հանրապետության «Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին» 1991 թ. հունիսի 17-ի օրենքը և Հայ Առաքելական Եկեղեցու գործունեության ծավալումն արդի փուլում: **Թեմա 43.**Վազգեն Ա Պալճյան: **Թեմա 44.**XIX-XX դարերի ազգային մշակույթը և Հայ Եկեղեցին: Հայ հոգևոր դասի երևելի գործիչները:

23/Բ15 – Հայ գաղթօջախների պատմություն (6 կրեդիտ)
12 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար
9-րդ, կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակ է ուսանողներին հայոց գաղթավայրերի պատմության վերաբերյալ համապարփակ գիտելիքներ տալ: Այդ թվում՝

1. Գաղթավայրերի ձևավորման աշխարհաքաղաքական պատճառների ու դրանց ժողովրդագրական հետևանքների մասին պատկերացում տալը,
2. Հայոց գաղթավայրերի ներքին պատմության ընթացքում տեղի ունեցած առանցքային իրադարձությունների ու դրանց հետևանքների մեկնաբանում,
3. Մեծ եղեռնի հետևանքով գաղթավայրերում ստեղծված նոր իրավիճակների ու դրանք ուղեկցող գործընթացների մասին պատկերացում տալը,
4. Հայ գաղթավայրերի ու Մայր Հայրենիքի կապի և փոխհարաբերությունների մասին գիտալիքներ տալը,
5. Սփյուռքահայության հայրենադարձության ու դրա գործընթացների մեկնաբանում:
6. Աշխարհաքաղաքական նոր իրավիճակներում Ժամանակակից հայ գաղթավայրերում ստեղծված առանձնահատկությունների, գաղթավայրերի գոյատևման հետ կապված հիմնահարցերի բացահայտում ու մեկնաբանում:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա հայոց գաղթավայրերի պատմության վերաբերյալ,
Կկարողանա մեկնաբանել գաղթավայրերի ձևավորման ու հետագա զարգացումների պատճառներն ու հետևանքները, արժևորել հայ գաղթավայրերի դերն ու նշանակությունը Մայր Հայրենիքի կայացման ու հզորացման հարցում:
Կտիրապետի Հայ գաղթօջախների պատմության հիմնական փուլերին՝ երբ, ինչու և ինչպես են հայերը արտագաղթել տարբեր երկրներ և ձևավորել գաղթօջախներ:
Բովանդակություն
Թեմա 1: Ներածություն: Դասախոսության առարկան ու դրա բովանդակությունը: Սկզբնաղբյուրների և գրականության մասին: **Թեմա 2:** Առաջին հայ գաղթավայրերի մասին: Փոքր Ասիա և Կիլիկիա: **Թեմա 3:** Հայ գաղթօջախները Արևմտյան Եվրոպայում: Բալկանների ու Ղրիմի հայ գաղթավայրերի ձևավորման և դրանց հետագա պատմության մասին: **Թեմա 4:** Ուկրաինայի ու Լեհաստանի հայ գաղթավայրերի ձևավորման և դրանց հետագա պատմության մասին: **Թեմա 5:** Պարսկահայ գաղթօջախների մասին: Նոր Ջուղա: **Թեմա 6:** Հնդկահայ գաղութը: Հարավ - արևելյան Ասիայի հայ գաղթօջախների մասին: **Թեմա 7:** Հայ գաղթօջախները

Ռուսաստանում: **Թեմա 8:** Ղրիմի հայկական գաղթավայրերը 18-20-րդ դարերում: Տնտեսական ու կրթա-մշակութային կյանքը: **Թեմա 9:** Նոր գաղթավայրերի կազմավորվելը 1890-1910-ական թվականներին՝ Մերձավոր Արևելք, Հյուսիսային Ամերիկա: Հայկական Սփյուռքի ձևավորումը: **Թեմա 10:** Սփյուռքահայությունը և Մայր Հայրենիքը: **Թեմա 11:** Հայոց գաղթավայրերն ու նրանց առանձնահատկությունները 20-րդ դ. վերջին ու 21-րդ. դ. սկզբներին:

23/Բ7-Ընտանեկան կյանքի և սոցիլական հոգեբանություն- (2 կրեդիտ)
8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար
6-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացը նպատակ ունի ընդլայնել ուսանողների մասնագիտական հոգեբանական գիտելիքների շրջանակը, նպաստել ուսանողների մոտ մասնագիտական և միջանձնային արդյունավետ փոխհարաբերությունների կառուցման համար անհրաժեշտ հոգեբանական հմտությունների ձևավորմանը:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. անձի և սոցիալական միջավայրի փոխհարաբերության առանձնահատկությունները,
2. խմբային և անհատական գործընթացների, ընտանիքի՝ որպես սոցիալական խմբի սեռական դաստիարակության հոգեբանական առանձնահատակությունները,
3. ծնող-երեխա փոխհարաբերությունների օրինաչափությունները:

Կկարողանա՝

1. քննարկել և բացահայտել ընտանեկան փոխհարաբերությունները, միջանձնային հարաբերությունները, ընտանեկան կոնֆլիկտները, դրանց սոցիալական պատճառները:

Կտիրապետի՝

1. Ծնողավարման հմտություններին,
2. միջանձնային կոնֆլիկտների կանխարգելման և կարգավորման մեթոդներին:

Բովանդակություն
Թեմա 1. Սոցիալական հոգեբանության առարկան, խնդիրները, սոցիալական հոգեբանության մեթոդաբանությունը և մեթոդներ: **Թեմա 2.** Հասարակական և միջանձնային հարաբերություններ, սոցիալական խմբերի հոգեբանական բնութագիրը (մեծ և փոքր խմբեր): **Թեմա 3**. Փոքր խմբերի հոգեբանություն, մեծ խմբեր (դասակարգերի և ազգի հոգեբանություն): **Թեմա 4.** Զանգվածների հոգեբանություն: **Թեմա 5**. Ընտանիքի զարգացման պատմությունը: Ընտանիք եվ ամուսնություն: Ընտանիքը մարդկային խմբի տեսակ: **Թեմա 6.** Ընտանիքի կառքուցվածքը և տեսակները, Ժամանակակից ընտանիքի ֆունկցիաները: Ամուսնական հարաբերություններ: **Թեմա 7**. Նախաամուսնական

հարաբերություններ: Ամուսնաընտանեկան կյանքի փուլերը: Հուզական հարաբերություններ: **Թեմա 8.** Կնոջ և տղամարդու փոխհարաբերությունները: Ամուսնական հարաբերությունները և նրանց փոփոխությունները: Ծնող-երեխա փոխհարաբերություններ:

23/Բ6 - Կիրառական մանկավարժություն (2 կրեդիտ)
8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար
6-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է նպաստել մանկավարժական գործընթացում ապագա դասվարների՝ մանկավարժական իրավիճակները բազմակողմանի վերլուծելու, մանկավարժական խնդիրներ նախագծելու և լուծելու, կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկություններին համապատասխան նրա անձի զարգացման գործընթացը պլանավորելու, հետազոտական աշխատանքները կազմակերպելու գործնական հմտությունների զարգացմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. «Կիրառական մանկավարժություն» դասընթացի առարկան, նպատակը, խնդիրները, առարկայի տեղը և դերը մանկավարժական գիտությունների համակարգում, կապը այլ գիտությունների հետ, մանկավարժության կիրառական ոլորտները,
2. մանկավարժական հաղորդակցման առանձնահատկություններն ու արդյունա-վետության պայմանները,
3. ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, նպատակահարմարության որոշման սկզբունքները,
4. մանկավարժական գործընթացի կազմակերպման ոճերը, ուսումնառողներին ճանաչելու հոգեբանական միջոցներն ու հնարները:

Կկարողանա՝

1. պլանավորել և իրականացնել գործնական հմտությունների զարգացմանն ուղղված մանկավարժական գործունեություն,
2. ապահովել տեսության և պրակտիկայի կապը գործնականում,
3. լուծել պրոբլեմային իրավիճակներում առաջացող մանկավարժական խնդիրները,
4. արդյունավետ հաղորդակցվել մանկավարժական գործընթացում,
5. ընտրել դասավանդվող Թեմային համապատասխան մանկավարժական տեխնոլոգիաներ,
6. ձևավորել և զարգացնել աշակերտների գործնական կարողություններն ու հմտությունները,
7. իրականացնել ուսումնառողների խմբի մանկավարժական դիագնոստիկա, կանխատեսում, նախագծում, մոդելավորում, կազմել պլաններ Թեմատիկ, օրվա դասի, ուսումնադաստիարակչական, աշխատանքային պլաններ և այլն:

Կտիրապետի՝

1. մանկավարժական գործընթացի կազմակերպման հաղորդակցական, մանկավարժական, հոգեբանական հնարների ու միջոցների,
2. մանկավարժական իրավիճակների վերլուծության, խնդիրների առաջադրման, ըստ նպատակահարմարության լուծման ուղիների ընտրության և կիրառման, արդյունքների գնահատման, ռեֆլեքսիվության կարողությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Ընդհանուր հասկացություն կիրառական մանկավարժության մասին: **Թեմա 2.** Մանկավարժի գործնական գիտելիքների, կարողությունների, հմտությունների նկարագիրը: **Թեմա 3.** Մանկավարժական գործունեության մեթոդաբանությունը: **Թեմա 4.** Մանկավարժական իրավիճակ և խնդիր: **Թեմա 5.** Մանկավարժական խնդիրների լուծման մեջ մանկավարժի հաղորդակցական ոճի առանձնահատկություններն ու նշանակությունը: **Թեմա 6.** Կոնֆիլիկտները մանկավարժական իրավիճակներում: **Թեմա 7.** Նախագծային մեթոդը, որպես գործնական հմտությունների զարգացման և կիրառման արդյունավետ գործիք: **Թեմա 8.** Խաղային տեխնոլոգիաները գործնական հմտությունների զարգացման գործընթացում: **Թեմա 9.** Թրենինգները, թրենինգ-սեմինարները՝ որպես ոլորտային հմտությունների զարգացման արդյունավետ միջոցներ: **Թեմա 10.** Մանկավարժի վալեոլոգիա:

4. Կրթական այլ մոդուլներ

Մանկավարժական պրակտիկա (16 կրեդիտ)

10-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը

Պրակտիկայի հիմնական նպատակն է ուսանողի մոտ՝ որպես մասնագիտական գործունեության ապագա սուբյեկտի, ձևավորել ուսուցչի, դասղեկի և դաստիարակի մասնագիտական գործունեությունը պատշաճ մակարդակով իրականացնելու որակները.

1. ճանաչողական նպատակ - ծանոթացնել ուսումնական հաստատությունների և կրթության բնագավառի աշխատողների մանկավարժական գործունեությանը, դրա բովանդակությանը և կառուցվածքին,
2. դաստիարակչական նպատակ - մանկավարժական գործունեության նկատմամբ հետաքրքրությունների խթանումը, մանկավարժական կոմպետենցիաների բազայի ձևավորումը,
3. ուսումնամեթոդական նպատակ - ձևավորել հատուկ պրոֆեսիոնալ մանկավարժական մասնագիտական կարողությունների և հմտությունների բազա, ինչպես նաև ուսանողին պատրաստել՝ իրականացնելու ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, մանկավարժական հետազոտական գործունեություն, որոշել վերոնշյալ պատրաստության աստիճանը:

4. ստաժավորման (փորձարարական) նպատակ - ամբողջությամբ ձևավորել անձնային ուղղորդված մանկավարժական գործընթացը որպես տեսական և պրակտիկ գործունեության միասնականություն մոդելավորելու և իրականացնելու ունակություններ, զարգացնելու մանկավարժական գործունեության առաջնային կոմպետենցիաներ:

Կրթական արդյունքները.

Պրակտիկայի ավարտին ուսանողները.

Կիմանա՝

1. ուսուցչի կողմից օգտագործվող աշակերտի անձի ուսումնասիրման մեթոդները,
2. ուսուցչի կողմից իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների բազմազան ձևերը, մեթոդները, հնարները, եղանակները աշակերտների բազմակողմանի զարգացման ուղղությամբ,
3. ուսումնական պլանը, առարկայական ծրագիրը, դասագիրքը վերլուծելու մեթոդներն ու եղանակները,
4. ուսուցչի կողմից ուսուցման կրթական, դաստիարակող, զարգացնող գործառնությունների իրականացման եղանակները,
5. ուսուցչի կողմից աշակերտների ուսումնաճանաչողական գործունեության տարբեր փուլերում ուսուցման մեթոդների և հնարների կիրառման պայմանները և ձևերը,
6. էքսկուրսիաների տեսակները, դրանց կազմակերպման և անցկացման մեթոդիկան,
7. աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները և ուսումնառության դրդապատճառները,
8. տնային ուսումնական աշխատանքների տեսակները և դրանց կատարման ինքնուրույնության աստիճանի որոշելը,
9. ուսուցչի կողմից դաստիարակչական աշխատանքի պլանավորումը,
10. դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը և կառուցվածքը,
11. դաստիարակության գործընթացի իրականացման մեթոդները, միջոցները և ձևերը,
12. աշակերտական կոլեկտիվի զարգացման մակարդակները և դրա ձևավորման ուղղությամբ ուսուցչի գործունեության առանձնահատկություններն ու մեթոդները,
13. ծնողների հետ տարվող աշխատանքների բովանդակությունը և ձևերը.

Կտիրապետի՝

1. մանկավարժական պրակտիկայի անցման ժամանակահատվածում սեփական գործունեությունը պլանավորելու հմտությունների,
2. ուսուցչի ուսունադաստիարակչական գործունեությունը դիտելու և վերլուծելու կարողությունների,
3. աշակերտների գործունեությունը դիտելու և վերլուծելու, դիտումների արձանագրություններ կազմելու հմտությունների,
4. աշակերտի անձի ուսումնասիրման հետազոտական մեթոդների կիրառության,

5. դասի ընթացքը արձանագրելու, դրանք ըստ առանձին բաղադրամասերի վերլուծելու կարողությունների,
6. աշակերտների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման մեթոդների, միջոցների և ձևերի կիրառման,
7. աշակերտական կոլեկտիվի զարգացման մակարդակի որոշման և կոլեկտիվի ձևավորման հարցում ուսուցչի գործառույթների իրականացման հմտությունների,
8. աշակերտների մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության ուղղությամբ տարվող միջոցառումների կազմակերպման և անցկացման ձևերը ներկայացնելու կարողությունների,
9. աշակերտական կոլեկտիվների հետ ստեղծագործական աշխատանքների կազմակերպման և անցկացման հմտությունների:

Բակալավրի կրթական ծրագրի բովանդակությունը՝ ըստ կոմպետենցիոն կազմի

հ/հ	Դասընթացներ/կրթական մոդուլներ		Կոմպետենցիաներ																		
			Մասնագիտական								Գործնական					Ընդհանրական					
		կրեդիտ	Ա 1	Ա 2	Ա 3	Ա 4	Ա 5	Ա 6	Ա 7	Ա 8	Բ 1	Բ 2	Բ 3	Բ 4	Բ 5	Գ 1	Գ 2	Գ 3	Գ 4	Գ 5	Գ 6
1.	*Հայոց լեզու և խոսքի մշակույթ*	*3+3*												V		V					
2.	*Ռուսաց լեզու*	*3+3*												V		V					
3.	*Օտար լեզու*	*3+3*												V		V					
4.	*Փիլիսոփայության հիմունքներ*	*2*												V				V			
5.	*Իրավագիտության հիմունքներ*	*2*												V				V			
6.	*Տրամաբանության հիմունքներ*	*2*												V				V			
7.	*Կրոնագիտության հիմունքներ*	*2*												V				V			
8.	*Քաղաքագիտության հիմունքներ*	*2*												V				V			
	Մշակութաբանության հիմունքներ													V				V			
9.	*Տնտեսագիտության հիմունքներ*													V				V			
10.	*Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ*	*2*												V			V				
11.	*Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ*	*3*												V					V		

	իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն																				
12.	*Սոցիոլոգիա*	*2*												V				V			
13.	*Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր*													V				V			
14.	*Ընդհանուր մանկավարժություն*	*3+3*							V					V	V					V	
15.	*Ներառական կրթության հիմունքներ*	*3*							V	V				V	V					V	
16.	*Ընդհանուր հոգեբանություն*	*3+3*							V	V				V	V					V	
17.	*Պատմության դասավանդման մեթոդիկա*	*5+6 +4*							V					V	V					V	
18.	*Պատմության դասավանդման մեթոդիկա /կուրսային աշխատանք/*	*1*							V			V		V		V					
19.	*Հայոց պատմություն*	*5+5 +6+ 6+5 +6+ 4+4 +6*		V	V						V		V	V						V	

20.	*Հայաստանի պատմական աշխարհագրություն*	*3*						V						V							
21.	*Հայոց պատմության աղբյուրագիտություն*	*6*			V							V		V							
22.	*Հայոց պատմության պատմագրություն*	*4*			V							V		V							
23.	*Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն*	*4*			V							V		V							
24.	*Հայ ազգագրություն*	*4*						V						V							
25.	*Նախնադարյան հասարակության պատմություն*	*4*	V											V							
26.	*Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն*	*3*						V						V							
27.	*Հին Արևելքի պատմություն*	*3*				V		V						V							
28.	*Հին Հունաստանի և Հռոմի պատմություն*	*3*				V		V						V							
29.	*Ռուսաստանի պատմություն*	*5+6+4+3*				V		V						V							

30.	*Միջին դարերի պատմություն*	*4+3*				V		V						V							
31.	*Նոր պատմություն*	*3+4*				V		V						V							
32.	*Նորագույն պատմություն*	*6+6*				V		V						V							
33.	*Կովկասի և Հայաստանի հարակից երկրների պատմություն*	*4+5 +6*				V	V				V			V							
34.	*Թանգարանագիտություն և արխիվագիտություն*	*2*						V				V									
35.	*Հայ եկեղեցու պատմություն*	*6*						V						V							
36.	*Հայ գաղթօջախների պատմություն*							V						V							
37.	*Ընտանեկան կյանքի և սոցիալական հոգեբանություն*	*2*								V				V							
38.	*Կիրառական մանկավարժություն*									V				V							
39.	*Մանկավարժական պրակտիկա*	*16*	V	V	V	V	V	V	V	V	V	V			V	V					
40.	*Ավարտական աշխատանքի պաշտպանություն*	*8*	V	V	V	V	V	V	V		V	V		V		V	V			V	V